

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՂԱԻՔ ԱՌԻՅԱԿՈՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ԼՈՒՄՄԱՍՅԱԿՆԵՐԱԿԱՆԵՐԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝


[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:  
ՑԱՆԿԱԿՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵՐԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ԼՐԱԳՐՈՂԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ  
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

առաջին ծանոթություն

ԵՐԵՎԱՆԻ  
ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԲԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԻՆՏԻՏՈՒՏ

**ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ  
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
առաջին ծանոթություն



«Վան Արյան»  
ԵՐԵՎԱՆ  
2001

---

«Հեսաֆննական լրագրություն արաջին ծանոթություն» գիրքը մի ժողովածու է, որ նախատեսված է ինչդեպ հեսաֆնություններով զբաղվող լրագրողների, այնդեպ էլ համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողների համար

Ժողովածուի հրատարակությունն իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ

Կազմեց **Սիխայիլ Դիլոյանը**

Թարգմանիչ եւ խմբագիր **Գայանե Թերզյան**

Համակարգչային ձեւավորումը եւ էջադրումը՝ **Նարա Սեմոնյի եւ Արմինե Սուրիայանի**  
Յրագրի սնօրեն **Բորիս Նավասարդյան**



Ի Երեւանի մամուլի ակումբ  
(թարգմանություն ձեւավորում հրատարակություն)

## Բովանդակություն

|                                                                                         |    |
|-----------------------------------------------------------------------------------------|----|
| Հեսաֆննական լրագրություն.<br>Ժանրի դասմություն, ժամանակակից<br>մեթոդներ, էթիկայի հարցեր | 6  |
| ԲԱԺԻՆ 1<br>ԺԱՆՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ                                                            | 8  |
| ԲԱԺԻՆ 2<br>ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ<br>ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ՄԵԹՈԴՆԵՐԸ                                       | 36 |
| ԲԱԺԻՆ 3<br>ԷԹԻԿԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՉԵՐ                                                          | 80 |

# **Հետաքննական լրագրություն. ժանրի ողասմություն, ժամանակակից մեթոդներ, էթիկայի հարցեր**

Հետաքննական լրագրության ժանրը երիտասարդ չէ Ծնունդ առնելով դեռևս 19-րդ դարի վերջերին այն բուռն ծաղկում ապրեց անցյալ դարի սկզբին. Չնայած տեսաբանների ու գործող լրագրողների տարածայնություններին, թե պե՞տք է, արդյոք, լրագրողական հետաքննությունը տարբերակել որպես ժանր, թե՞ այն սոսկ հրապարակախոսության մեջ տարածված յուրօրինակ մեթոդ է, հետաքննական լրագրությունն իր առանձնահատկություններով ու մեթոդներով ավելի ու ավելի է ամրապնդում իր դիրքերը լրագրության մեջ որպես ժանր Մի շարք այլ առանձնահատկությունների շարքում պետք է նշել նաև այն, որ այս ժանրն ամբողջատիրական հասարակություններում չի կարող գոյություն ունենալ (խոսքը լիարժեք գոյության մասին է), չի կարող զարգանալ Այսպես, օրինակ, հետաքննական լրագրությունը բուռն զարգացում է ապրել հատկապես այն երկրներում, որտեղ ամբողջատիրական կարգերին փոխարինելու են եկել ժողովրդավարական կառավարությունները Այս երեւույթը տեսնում ենք եւ անցյալ դարի վերջերի լատինաամերիկյան երկրների, եւ Արեւելյան Եվրոպայի երկրների, եւ, ի վերջո, նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության օրինակով, որի տասնհինգ հանրապետություններից մեկը մեր երկիրն էր Հայաստանը

Ակնհայտ է, որ տարբեր պատճառների ու հիմնախնդիրների բերումով լրագրողական հետաքննության ժանրը չէր կարող միանման ու համարժեք զարգացում ապրել սոցիալիստական գերտերության փլուզումից հետո առաջացած բոլոր նորանկախ պետություններում Այդ պատճառները թե տնտեսական են, թե սոցիալական եւ թե ազգային Այդուհանդերձ, լրագրողական հետաքննությունը որպես հասարակական վերահսկողության արդյունավետ ձեւ, անհրաժեշտ է ժողովրդավարական բարեփոխումների ճանապարհով ընթացող հասարակության համար

Լրագրողական հետաքննության ժանրը քիչ է ուսումնասիրված եւ դեռ սպասում է իր հետազոտողներին, ինչպես նաև նոր հետաքննող-լրագրողների Հայաստանում, որքան մեզ հայտնի է, լրագրողական հետաքննության թեմայով դեռևս ոչ մի հայերեն ուսումնական

ծեռնարկ կամ գիրք չի հրատարակվել Այս փոքրիկ ժողովածուի նպատակը լրագրության մեջ ամենահետաքրքիր, ամենաբարդ եւ ամենավտանգավոր ժանրերից մեկի մասին թեկուզ ընդհանուր պատկերացում տալն է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են լրագրությունը դարձնել իրենց մասնագիտությունը, գուցե նաեւ ճակատագիրը

Առաջին բաժինը, որն անվանել ենք «Ժանրի պատմություն», համառոտ կժանոթացնի ձեզ հետաքրքրական լրագրության պատմությանը տարբեր երկրներում եւ աշխարհամասերում



ԲԱԺԻՆ 1

ԺԱՆՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԵՐԿԱՅՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՅՆՈՒՆԴԸ

*Լրագրության եւ բանասիրության միջազգային ինստիտուտի՝  
«Համաժխարհային լրագրության տասնություն» գրից՝*

Նախորդ երկու՝ 19-րդ եւ 20-րդ դարերի սահմանագծին համաշխարհային տնտեսության մեջ եւ հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, որ կապված էին խոշոր կորպորացիաների ի հայտ գալու հետ, հարուցեցին ամերիկացիների եւ եվրոպացիների զգալի մասի դժգոհությունը Ազգային տնտեսության ամբողջ ոլորտներ վերահսկող հզորագույն միավորումների եւ խմբերի ձեւավորումը հանգեցրեց ազատ մրցակցության հնարավորությունների սահմանափակման հոշոր տրեստների եւ կորպորացիաների գործունեությունը հաճախ ուղեկցվում էր օրինախախտումներով, սպառողներին խաբելով, պետական պաշտոնյաներին կաշառելով

Նույն այդ շրջանում ԱՄՆ-ում լրագրության մեջ ձեւավորվում էր մի ուղղություն, որի ներկայացուցիչներն իրենց առաջ խնդիր էին դրել չարաշահումները հետաքննելու եւ հասարակայնության ուշադրությունը դրանց վրա հրավիրելու միջոցով պայքարել հասարակական արատների դեմ Նրանց կարծիքով՝ չարիքի մերկացումը պետք է օգներ մալուկանց հասկանալ դրա էությունն ու նախապատճառները, փոփոխությունների ձգտում արթնացնել, հասարակության մեջ պայծառնել ստեղծել բարեփոխումների համար, որոնք վերջ կտային կամալսկանություններին, կաշառակերությանը, խաբեությանը Նրանք ապրարության, պատվի իդեալները դիտարկում էին որպես հասարակական համախմբող ուժ Կրոնական բարության (մորալիտա) Բ Ֆլաուերը 1887 թվականին հիմնադրված իր «Արենա» (Arena) ամսագրում տուր ընկադատության ենթարկեց ձեւավորված հասարակական-տնտեսական կարգը 1901 թվականին «Արենայում» տպագրված իր ծրագրային հոդվածում Ֆլաուերը պնդում էր, որ երկիրն ալիկի ու ալիկի է եւռանում ի-

1 Международный институт журналистики и философии "История мирового журналистики" Изд-во "Старые русские" Ростов-на Дону 2000

րական ազատության իդեալից, ինչի վկայությունն են անդունդի խորացումը հարստության եւ աղքատության միջեւ, կաշառակերությունն ու շարաշահումները, իշխանությունների կախումը քսակի իշխանությունից (պլուտոկրատիա) Նա պահանջում էր հասարակական բարեփոխումներ, որոնք կսահմանափակեին անտեսության մեջ մենաշնորհը, մանկական աշխատուժի շահագործումը մերկացնող հոդվածներ էր հրապարակում, հանդես էր գալիս ռուսական խտրականության եւ լինչի դատաստանի դեմ՝ հանուն բանվորների կյանքի ու աշխատանքի սանիտարական պայմանների բարելավման

«Արենա» ամսագրից հետո, 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբներին ամերիկյան այլ հրատարակություններում նույնպես, հատկապես զանգվածային այնպիսի ամսագրերում, ինչպիսիք էին «Մաք-Զլերս»-ը (McClure's), «Զոլիերս»-ը (Collier's), «Էվրիբոդիս»-ը (Everybody's), «Զոսմոփոլիթեն»-ը (Cosmopolitan), ի հայտ էին գալիս բազմաթիվ հրապարակումներ, որոնք մերկացնում էին խոշոր կորպորացիաների անվայել, հանցավոր գործողությունները, գործադիր եւ օրենսդիր իշխանությունների տարբեր մակարդակներում տեղ գտած կաշառակերությունը 1906 թվականին ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտը, որին զայրացնում էին պետապարատի հասցեին հնչող բննադատությունները, մերկացնող լրագրողներին արհամարհանքով «մաքրեյքըրներ» (muckraker) անվանեց, որ նշանակում էր «աղբ փորփրող», «կեղտ քջջող», «կեղտոտ բամբասանքի սիրահար» Մինչդեռ բացահայտող լրագրողներն իրենք, որ անկեղծորեն հավատում էին, թե իրենց առաքելությունը հասարակությունն ամեն սեռակալ աղտեղությունից մաքրելն է, հավանությամբ ընդունեցին իրենց գործունեության նման բնութագիրը Երկու դարերի սահմանագծին ձեւավորված հետաքննական, մերկացնող, բացահայտող լրագրողական շարժումը «մաքրեյքըրների շարժում» անունը ստացավ «Աղբ փորփրողներ» էին անվանում այն հրապարակախոսներին ու գրողներին, որոնք թեեւ որեւէ ընդհանուր գաղափարական ծրագիր չունեին, բայց միավորված էին կաշառակերության, պետական բյուրոկրատիայի եւ գործարար շրջանակների բարոյալքման, տնտեսական շարաշահումների եւ սպառողներին խաբելու փաստերի դեմ

«Մաքրեյքըրների» գրածները տայագրող առաջատար հրատարակություններից մեկը «Մաք-Զլերս» (McClure's) ամսագիրն էր, որի հրատարակիչը ընթերցողներին գրավելու նպատակով խրախուսում էր մեծ բիզնեսի մասին մերկացնող հոդվածների հրապարակումը, որոնք համահունչ էին իր ընթերցողների մեծ լսարանի տրամադրություններին 1902 թվականին «Մաք-Զլերս» ամսագրում սկսեց աշխատել Լինքոլն Սթեյնսը, որը դարձավ «մաքրեյքըրների» շարժման առաջատար դեմ-

քերից մեկը Նրա համոզիչ, հիմնավոր փաստարկված հուլիսիաները Մենթ Լուիսի եւ ԱՄՆ այլ խոշոր քաղաքների քաղաքային իշխանությունների կաշառակերությունների ու չարաշահումների մասին, որոնք մեծ հասարակական արձագանք ստացան, կազմեցին «Բալարների խայտառակությունը» (1904) եւ «Պայքար ինքնավարության համար» (1906) մերկացնող հոդվածաշարերը 1903 թվականից ի վեր «Մաք-Քլերս»-ը պարբերաբար տպագրում էր նաեւ այլ «աղբ փորփրող» հեղինակների հոդվածները Իդա Թարբեյի, որը հետաքննում էր նավթային մենատեր «Ստանդարտ Օյլ Բոմփրնի» անօրինական գործունեությունը, Ռեյ Սթենարդ Բեյքերի, որը մերկացնում էր երկաթուղային ընկերությունների կամայականությունները «Մաքբեյքերների» մերկացնող հոդվածների տպագրումը նպաստեց «Մաք-Քլերս»-ի տպաքանակի աճին, որը հասավ մինչև 2 միլիոնի

1905 թվականից հետո բացահայտող լրագրության ոլորտում առաջատար դերն անցավ «Զոլիերս» (Collier's) ամսագրին 1906 թվականին նախկինում «Մաք-Քլերս»-ին աշխատակցող մի խումբ հրապարակախոսներ (Լ Սթեֆենսը, Ի Թալբերը, Ռ Ս Բեյքերը եւ այլք) հիմնադրեցին «մաքբեյքերական» մի ամսագիր «Ամերիքըն Մեգզին»-ը (American Magazine) Սակայն դրա իրապես զանգվածային տարածումն ապահովելու ջանքերը հաջողությամբ չպսակվեցին

Չանգվածային ամսագրերի էջերում «մաքբեյքերները» բացահայտում էին ԱՄՆ-ում այդ ժամանակ գոյություն ունեցող բազմաթիվ խոշոր կարողությունների գոյացման հանցագործ մեթոդները Կարողություններ, որոնք ձեռք էին բերվել մրցակիցներին խաբելու, սպանությունների եւ ահաբեկելու, իշխանություններին կաշառելու, աշխատակիցներին խաբելու եւ թալանելու ճանապարհով Այս կարգի հրապարակումների հետեւանքներից մեկը աշխատանքային օրենսդրության կուտարելագործման համար հասարակական շարժման ակտիվացումն էր

Մի շարք «մաքբեյքերներ» իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին հաճախորդներին ու սպառողներին խաբող այնպիսի խոշոր ընկերությունների գործունեության բացահայտման վրա, ինչպիսիք էին երկաթուղային ընկերությունները, մուսմբերների տրեյդերները, ապահովագրական հաստատությունները, «արտոնագրված» բուժամիջոցներ տարածողները Այսպես, օրինակ, Էփրոն Սինդիկատը հետաքննեց մասնաբերքների մշակմամբ ու փաթեթավորմամբ զբաղվող ընկերությունների զեղծարարությունները «Մաքբեյքերների» լայնածավալ բացահայտումների արդյունքը դարձավ երկարուղային կանոնակարգման մասին օրենքի ընդունումը, «Մթերքների եւ խմիչքի մաքրության մասին» օրենսդրական ակտը

«Քոսմոպոլիթեն» (Cosmopolitan) ամսագրի եւ այլ հրատարակութիւնների հրատարակումներում առաջ էր քաշվում մանկական աշխատութի շահագործման հարցը Այն տակալի պայմանների նկարագրութիւնները, որոնցում ստիպված աշխատում էին երեխաները, խթանեցին մանկական աշխատութի օգտագործումը օրենսդրութեն արգելելու համար պայքարող քաղաքացիական խմբերի ստեղծումը Նրանց ճնշման տակ կոնգրես ուղարկվեց համապատասխան օրինագիծը.

«Աղբ փորփրողների» լավագույն ստեղծագործութիւններին յուրահատուկ էր ջանադիր աշխատանքը բացահայտումների փաստական հիմնավորման վրա Պարտադիր էին մանրակրկիտ որոնումները, վերլուծութիւնն ու ստուգումը, փաստերի հիմնավորումը փաստաթղթերով, որոնց նպատակը գրադարստութիւն մեջ մեղադրանքի պարագայում դատարանում իրենց արդարացիութիւնը պաշտպանելը չէր միայն «Մաքրեյքրները» ձգտում էին իրենց ստեղծագործական աշխատանքով լրագրութիւն մեջ խստագույն բարոյական կանոններ հաստատել ընդգծված կերպով սահմանազատելով իրենց «դեղին լրագրութիւն» անսկզբունք գործելաոճից

Անցյալի գրական ամսագրերի համար ավանդական շատ գծեր ժառանգած զանգվածային ամսագրերի հետ համագործակցութիւնը «մաքրեյքրներից» բարձր վարպետութիւն էր պահանջում Նրանցից շատերի գրվածքներին յուրահատուկ էր միանգամայն հիմնավոր, բարձրորակ գրական մշակումը, որը դրանց անուրանալի հասարակական հնչելոյթյան հետ միասին նպաստեց, որ «մաքրեյքրների» լավագույն ստեղծագործութիւնները դառնան ժամանակակից հետաքննական ու բացահայտող լրագրութիւն դասականներ «Մաքրեյքրական» շարժման առաջատար դեմքը Լինքոլն Սեֆրնսը ճանաչվել է 20-րդ դարի ամերիկյան խոշորագույն լրագրողը

«Մաքրեյքրական» շարժումն անկում ապրեց 1911 թվականի ֆինանսական ճգնաժամից հետո, որը խիստ հարվածեց զանգվածային ամսագրերին Նյութական դժվարութիւնների հետեւանքով հրատարակիչ Մաք-Զլյուրը կորցրեց իր ամսագիրը «Ամերիքըն Մեգզին» (American Magazine) եւ «Էվրիբոդիս» (Everybody's) ամսագրերը վաճառվեցին, եւ նրանց ուղղվածութիւնը փոխվեց Խերսոսին պատկանող «Քոսմոպոլիթեն» (Cosmopolitan) ամսագիրը վերածվեց կանանց հանդեսի Առաջին համաշխարհային պատերազմից հետո բացահայտող լրագրութիւնը ետ մղվեց եւ հայտնվեց ձախ եւ ռադիկալ ոչ մեծ ամսագրերի էջերում

«Մաքրեյքրական» շարժումն Ամերիկայի Միացյալ Նահանգներում նպաստեց, որ ժամանակակից լրագրութիւն մեջ կայանա հետաքննական եւ բացահայտող ուղղութիւնը, որը մի շարք արտասահմանյան հետազոտողներ լրագրութիւն մեջ առանձնահատուկ ժանր են

համարում Ավանդության համաձայն շարունակում են «մարտեյրրներ» անվանել այն լրագրողներին, ովքեր տուրք են տալիս հետաքննություններին ու բացահայտումներին, ինչպես Մեյմուրա Խերշը, որն աշխարհին հայտնեց վիետնամական պատերազմի տարիներին Մայրոյ գյուղում խաղաղ բնակիչների զանգվածային ոչնչացման մասին, Ռեյչել Կարսոնը շրջակա միջավայրի վրա «Դե-Դե-Տե» քիմիական նյութի կործանարար ազդեցության մասին հրապարակումների հեղինակը, որ նպաստեց ԱՄՆ-ում բնապահպանական շարժման ձեւավորմանը, «Վաշինգթոն փոսթ» (Washington Post) թերթի աշխատակիցների Բոբ Վուդվորդը եւ Կարլ Բրենսթայնը, որոնք բացահայտեցին ընտրությունների նախօրյակին նախագահ Ռ. Նիքսոնի վարչակազմի անօրինական գործողությունները, ինչը հանգեցրեց հանրահայտ «Ուոթերգեյթ»-ի սկանդալին», ապա իշխանությունից Նիքսոնի հեռացմանը

Ժամանակակից եվրոպական հետաքննական ու բացահայտող լրագրության նշանավոր ներկայացուցիչն է գերմանացի լրագրող Գյունտեր Վալրաֆը՝ գերմանական հասարակության սոցիալական խոցերը եւ ԳՖՀ քաղաքացիների ժողովրդավարական իրավունքների դեմ ոտնձգությունները մերկացնող փայլուն աշխատանքների հեղինակը

80-90-ական թվականներին հետաքննական ու բացահայտող լրագրությունը զարգացավ Լատինական Ամերիկայի երկրներում, որտեղ ռազմական ու քաղաքացիական խուճուղիներին փոխարինելու ելկան ընտրություններում հաղթանակ տարած քաղաքական գործիչները Հոչակվող անցումը ժողովրդավարության ուղեկցվում էր պետական չինովնիկների լայնածավալ կաշառվածությամբ, ազգային ունեցվածքի թալանով 1991 թվականից սկսած բրազիլական «Ջոռնալ դը Բրազիլ» (Jornal de Brasil) թերթը պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից չարաշահումների բացահայտման արշավ սկսեց։ Թերթի աշխատակից Մ. Ռոշան համակարգչային ցանցի միջոցով ներբափունդել էր բրազիլական ֆինանսների նախարարության տվյալների բազան և հայտնաբերել, որ բարեգործության համար նախատեսված գումարների մեծ մասը ծախսվել էր նախագահ Ֆ. Կոլլորի կնոջ բազմաթիվ ազգականներին վճարելու համար Թերթի բացահայտել էր նաև հենց իր նախագահի խոշոր ֆինանսական չարաշահումները «Veja» («Նայիբ») շաբաթական հանդեսը շարունակեց նախագահի շրջապատում կաշառակերության բացահայտման արշավը, որի արդյունքում իշխանությունից հեռացվեց նախագահ Ֆ. Կոլլորը

Պանամական «La Prensa» թերթի խմբագիր Գ. Գոլիալին հրապարակեց հետաքննության արդյունքում իր կողմից բազմախաղված կապը նախագահ Է. Պերս Վալլադերսի եւ կոլումբիացի քննադետների վաճառականների միջեւ, որոնք նշանակալի միջոցներ էին ներդրել նախագահ-

հի ընտրարշավի ֆինանսավորման մեջ փոխարենը ստանալով նրա թողտվությունը, որը հնարավորություն էր տալիս թմրամաֆիային իրենց փողերը «լվանալ» պանամական պետական բանկի միջոցով Արգենտինական «Pagina/12» («Էջ/12») թերթի մեկնարան Խ Վերբիցկին մերկացրեց երկրի նախագահ Կ Մենեմայի ֆինանսական չարաշահումները, որը երկրի կառավարող շրջանակներում մեծ սկանդալի պատճառ դարձավ

Ժամանակակից «մաքրեյքըյները» ակտիվորեն յուրացնում են տեղեկությունների հավաքման ու վերլուծության համակարգչային տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս պետական ծառայողների եւ առեստրային կառույցների չարաշահումների ու հանցավոր գործունեության բացահայտումը դարձնել ավելի արդյունավետ

## **ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ**

*Ա Կոնստանտինովի` Լրագրողական հետախնությունների գործակալության` «Լրագրողական հետախնություն» գրիք<sup>2</sup>*

### **Ա.Սթրինդբերգի ցնցող Շվեդիան Շվեդական «Ուոթերգեյթը» Յան Հիյոն եւ Պիտեր Բրեսը Ուլոֆ Պալմեի սղանությունը**

Եվրոպական երկրներից հետաքննական լրագրությունն առավել ուժեղ է զարգացել Շվեդիայում, որտեղ մամուլի անկախությունը միշտ էլ շատ մեծ նշանակություն է ունեցել Մամուլի ազատության մասին ամենաառաջին օրենքն այստեղ ընդունվել է դեռեւս 1766 թվականին Օրենքում որոշ փոփոխություններ մտցվելուց հետո 1812 թվականից այն մտել է նաեւ երկրի սահմանադրության մեջ

---

2 Агентство журналистских расследовании А Константинова 'Журналистское расследование' (История метода и современная практика), Санкт Петербург Издательский дом 'Нева' Москва Издательство "ОЛМА-ПРЕСС" 2001

Շվեդիայի մամուլը շուրջ 350 տարվա պատմություն ունի (շվեդերեն առաջին տպագիր մամուլը «Օրդինարն Պոստ Տիդենդեր»-ը, լույս է տեսել 1645 թվականին), բայց նրա ամենաբուռն զարգացման շրջանը 19-րդ դարն է եղել 1830 թվականին լույս է տեսել «Ավտոնբլադետ» («Aftonbladet») թերթը, որը հիմնադրել էր ժողովրդավարական կողմնորոշում ունեցող գիտնական Լարս Յոհան Հմերտը Այդ թերթը փակել են ավելի քան 20 անգամ, բայց այն դարձյալ ու դարձյալ հայտնվում էր ուրիշ անուններով Շվեդ լրագրողները կարողացել էին իրենց ընթերցողների փստահությունը շահել, քանի որ հանդես էին գալիս ոչ թե իշխանության կողմից, այլ պաշտանում էին հասարակ ժողովրդի շահերը Շվեդիայում լրագրության վրա մեծ ազդեցություն ունեցավ գրող Ավգուստ Սթրինդբերգը

**Յոհան Ավգուստ Սթրինդբերգը** (1849 - 1921) ծնվել է Ստոկհոլմում Նրա հայրն ազգականներ ուներ արքունիքում եւ երիտասարդ տարիներին բավականին լավ դիրք էր գրավում նեգոցիանտների շարքում Բայց սնանկացումն ու սպասուհու հետ ամուսնությունը հեռացրին նրան իր սովորական շրջապատից, եւ ապագա գրողը ստիպված էր կյանքը սկսել աղքատի ստորացուցիչ վիճակում

Իր առաջին վեպը՝ «Կարմիր սենյակը», Սթրինդբերգը գրել է 1879 թվականին Նրանից առաջ Շվեդիայում նման գրքեր չէին հրատարակվել Առաջին անգամ շվեդ հասարակությունն ինքն իրեն նայեց կողմնակի հայացքով եւ դժգոհ մնաց այդ անհաճո պատկերից Շվեդիայի համար, որը 19-րդ դարի 70-ական թվականներին ամենից շատ մտահոգված էր սկանդինավյան երկրների պանսկանդինավիզմի եւ նոր մշակույթի վրա հիմնված քաղաքական ու մտավոր միասնությամբ, Սթրինդբերգի մեղադրանքները կծու եւ անընդունելի էին թվում «Նոր թագավորություն» պամֆլետ-վիպակում (1882) քննադատությունն արդեն ցնցող էր Գրողն անհանդուրժող էր եւ մեղծում էր հասարակական ստի, կեղծիքի հիմքերը Նրա նետերը ճիշտ նշանակետին էին հասնում Ստոկհոլմի հասարակության, որտեղ բոլորը բոլորին ճանաչում էին, Խամբրությունը հատվեց Սթրինդբերգը ստիպված եղավ հեռանալ Շվեդիայից Նա վերջնականապես հայրենիք վերադարձավ միայն 7 տարի անց.

1902 թվականին Սթրինդբերգը վերսկսեց իր հրատարակչական գործունեությունը սկսեց մամուլում հանդես գալ ի պաշտպանություն համընդհանուր ընտրական իրավունք մուցնելու բանվորների պահանջի, քննադատության ենթարկեց շվեդական ակադեմիային եւ նոբելյան կոմիտեին Թերեւս պատահական չէր, որ այդ ժամանակը համընկավ «աղբ փոխորդների» դպրոցից Դալեկերսի շատ էին գնում Ամերիկա, եւ «մարքեյրլյուների» հետ ծանոթությունը դրոկեց շվեդ լրագրողներին շեշտադրումները սեղանի վրայ տեղադրելու հիմնական դիրքերի վրա Այսպես տնային աշխատողների աշխատանքին ավելի լավ ծանոթանալու համար շվեդ լրագրողուհի Լարս Նորդսթոմը մի



հարուստ ընտանքիում վարձվեց որպես տնային ծառայող՝ դառնալով «գաղտնի աշխատանքի» «վալֆրաֆինգի» (Wallraffing) հայտնագործողը Շվեդիայում 1914 թվականին նա գրեց «Սպասուհին սպասավորների շրջանում» գիրքը, որը համազգային քննարկումների առարկա դարձավ եւ իր ի հայտ գալով նշանավորեց շվեդական հետաքննական լրագրության սկիզբը

1950-ական թվականներին Շվեդիայում նշանավոր նովելիստ Վիլհելմ Մոբերգը թերթերում հրապարակեց երկրի իրավապահ մարմիններում կաշառակերության մասին նովելների մի շարք. Սոցիալական անարդարությունների նկատմամբ զգայուն հեղինակի կարծիքով՝ ժամանակն էր, որ լրագրողները գրեին նաեւ այն թեմաների մասին, որոնք մինչ այդ գերադասել էին լուրջյան մատնել Առավել աղմկոտ համբավ է ստացել «Խաջբայի գործը», որը բանտարկության էր դատապարտվել նենգաշորթության (շանտաժի) համար Կերտ Խաջբայը Թագավորական դատարանից մեծ գումարներ էր պահանջում՝ սպառնալով բացահայտել թագավորի հետ իր ինտիմ կապի պատմությունը Ամենայն հավանականությամբ սա մի իսկական սրիկա էր, սակայն Մոբերգը կարծում էր, որ նրան անարդարացի են դատապարտել, եւ արժե այդ գործին հրապարակայնություն տալ հենց թեկուզ այն բանի համար, որ դատարանն այլեւս մամուլին ճնշելու փորձեր չանի Մոբերգի միջամտությունը լրագրողներին ստիպեց խախտել «լուրջյան ուխտը» Այդ գործի մասին տեղեկություններ հայտնվեցին մամուլի Լջերում ակնհայտորեն հարուցելով Թագավորական դատարանի դժգոհությունը

Շվեդիայում հետաքննող լրագրողների առաջին խոշոր հաջողությունը «Այ-բի»-ի (IB - Տեղեկատվական բյուրո) մերկացումն էր, որի ցուցանակի տակ թաքնվում էր խիստ գաղտնի հետախուզական մի կազմակերպություն, այն աստիճանի գաղտնի, որ դրա մասին չգիտեին ոչ միայն շարքային շվեդները, այլ նույնիսկ շվեդական խորհրդարանի անդամները Դա տեղի ունեցավ հենց «Ուոթերգեյթյան սկանդալից» հետո եւ որոշակի իմաստով դարձավ շվեդական «ուոթերգեյթյան գործը»

1973 թվականին երկու երիտասարդ լրագրողներ Յան Գիյոն եւ Պիտեր Բրետը «Ֆիբ/Կուլտուրֆրոնտ» (Fib/Kulturfront) հանդեսի էջերում IB-ի մասին հողվածաշար հրապարակեցին Նրանց տեղեկությունների զլխավոր աղբյուրը այդ տեղեկատվական բյուրոյի նախկին գործակալ Խական Իսակսոնն էր՝ Պարզվեց, որ IB-ն ոչ միայն արտասահմանում է զբաղվել լրտեսական գործունեությամբ, այլ նաեւ երկրի ներսում լրտեսել է հասարակական կազմակերպություններին ու կուսակցություններին Գիյոն եւ Բրետն ի թիվս այլոց բացահայտեցին նաեւ փոքր ինքնաթիռով լրտեսության նպատակով Սովետական Սիություն թռչելու չհաջողված փորձը Այս գործի հետեւանքով լուրջ քաղաքական ճգնաժամ սկսվեց վարչապետ Ուլոֆ Պալմնի համար

Իշխանությունները լրագրողներին մեղադրեցին պետական գաղտնիքի հրապարակման մեջ Նրանց դատեցին եւ դատապարտեցին ոչ երկարատեւ բանտարկության (Իսակսոնը, որը փաստորեն խախտել էր ծառայողական գաղտնիքները չբացահայտելու մասին իր գրավոր խոստումը, ավելի երկար ժամանակով դատապարտվեց) Գիյոյի եւ Բրետի դատապարտումը խոսքի ազատության մասին յուրջ Բննարկումների առիթ դարձավ, ինչի հետեւանքով հետագայում լրագրողների կողմից պետական գաղտնիքների բացահայտումն արդեն լրտեսության հավասար չէր դիտվում Տեղեկատվական բյուրոյի գործունեության մասին սկսեցին գրել նաեւ այլ լրագրողներ Նրանց հետաքննությունները սերտ կապեր բացահայտեցին լրտեսությանը զբաղվող կազմակերպությունների եւ սոցիալ-դեմոկրատական կուսակցության միջեւ

Յան Գիյոն բանտից դուրս եկավ հաղթանակած, ձեռքին հին գրամեքենան, որի վրա գրվել էին իր բազմաթիվ հոդվածներն ու գրքերը Նա դարձավ շվեդ ամենանշանավոր հետաքննող լրագրողը եւ հիմա էլ Ստոկհոլմի լրագրողների ակումբի նախագահն է Նրա առավել հետաքրքիր հետաքննական գործերից է Ուլոֆ Պալմեի սպանությունը Նրան հաջողվեց օպացուցել, որ հետաքննական մարմիններն անհիմն կերպով են սպանության մեջ մեղադրել մի իտալիզանի, որի հետեւանքով հրապարակումից հետո նա ազատ արձակվեց:

Վարչապետի սպանության մասին Շվեդիայում լրագրողական հետաքննությունների հիման վրա շատ գրքեր են գրվել Ուլոֆ Պալմեն սպանվեց 1986 թվականի փետրվարի 28-ին թիկունքին կրակոցից: Այս սպանության ոստիկանական հետաքննությունն ի սկզբանե շատ վատ էր կազմակերպված Սպանության մեջ կասկածվում էր նախ Վիկտոր Գուննարսոնը, ապա Զրիստեր Պետերսոնը: Վերջինս սպանվածի ույրու ցուցմունքների հիման վրա դատապարտվեց ցմահ բանտարկության, այնուհետեւ վերաքննիչ դատարանում արդարացվեց Հետաքննության ընթացքում շատ վարկածներ առաջադրվեցին: Սպանությանը առնչության մեջ մեղադրվում էին քուրդերը, չիլիական արևմտորդները, տարբեր կրոնական աղանդներ, շվեդական ծայրահեղականները, համաշխարհային հակակոմունիստական կազմակերպությունը և նույնիսկ ՊԱԿ-ը (ԽՍՀՄ)

Լրագրողներն իրենց հետաքննություններում գույց էին տալիս ոստիկանության սխալները, ինչպես նաեւ կառավարության ու արդարադատության նախարարության կողմից հետաքննության ընթացքին ուղղմիջամտությունները Այդ հրապարակումների շնորհիվ գուրծի հետաքննության ընթացքից մեկուսացվեցին շատերը, այդ թվում նաեւ վարչապետ Աննա Գրետա Լեյջոնը, որը գործում ներգրավվել էր սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը մոտ կանգնած ո՞ւր պոփսիստնալ քննիչի

Այսօր Շվեդիայում լրագրողական հետաքննության մեթոդն օգտագործում են նույնիսկ գավառական թերթերի լրագրողները Ուլբեր մասնագիտանում են միայն հետաքննական լրագրության բնագավառում եւ մտադրվում են աշխատել որպէս ազատ լրագրողներ, իրենց հողվածները կամ հեռուստատեսային ռեպորտաժները վաճառում են տարբեր լրատվամիջոցների Շվեդիայում է գործում հետաքննող լրագրողների աշխարհի ամենախոշոր կազմակերպություններից մեկը «Գրավանդե ժուռնալիստեր-ը (Gravande journalister), որի կազմում ավելի քան երկու հազար մարդ կա

## **Լրագրողական հետաքննությունները Գերմանիայում Գյունտեր Վալրաֆի՝ «ընդգրկված դիտարկման» մեթոդը**

Գերմանիայում բացահայտող լրագրության աչքի ընկնող ներկայացուցիչը Գյունտեր Վալրաֆն է Այդ «անսանձ լրագրողի» անունը լայնորեն հայտնի է ոչ միայն իր հայրենիքում Վալրաֆին՝ որպէս հակաֆաշիստ-գրողի, առանձնահատուկ սիրում էին Սովետական Միությունում 1970-80-ական թվականներին նրա ռեպորտաժները հաճախ էին տպագրվում «Լիտերատուրնայա գազետա» ("Литературная газета") թերթում, «Չա ռուբեժում» ("За рубежом") հանդեսում, «Ինոստրաննայա լիտերատուրա» ("Иностранная литература") ամսագրում Ռուսերեն թարգմանվել են Վալրաֆի երկու գրքերը «Անցանկալի ռեպորտաժներ» ("Нежелательные репортажу", 1982) եւ «Լրագրողը մեղադրում է» ("Репортер обвиняем", 1988)

**Գյունտեր Վալրաֆը** ծնվել է 1942 թվականի հոկտեմբերի 2-ին, Զյուլնից ոչ հեռու գտնվող փոքրիկ մի քաղաքում Նրա լրագրողական առաջնելույթը եղավ «Բունդեսվերյան ին օրագիրը 1963-1964», որտեղ նա պատմում էր այն մասին, թե ինչպես գորախաղերի ժամանակ հրաժարվել է կրակել Ամեն առավոտ մյուս գորակոչիկների հետ դուրս գալով վարժանրապարակ նա գենքի փոխարեն ծաղիկներով զարդարված փայտ ևր վերցնում ձեռքը, իսկ զինվորական երդման տեքստը ստորագրելու ժամանակ «Հանդիսավոր երդվում են ծառայել Ֆեդերատիվ Հանրապետությանը » նախադասությանն ավելացրեց «առանց գենքի» Ի վերջո զինվորական ծառայությունից նրան ազատեցին «տկարամտության պատճառով» Այսպես սկսվեց Վալրաֆի աղմկոտ համբավը, որը գնալով աճում էր սովորաբար ուղեկցվելով սենսացիաներով

Երկար ժամանակ Վալրաֆը համոզված էր, որ վիպագրությունը (քե-լետրիստիկան) միայն ընտրյալների շրջանակի մարդկանց է անհրա-ժեշտ, ուստի համոզում էր իր գործընկերներին հրաժարվել վնասը ու պիեսներ գրելուց եւ իրենց «խոսքի լուսարձակով լուսավորել բանկերի, խոշոր արդյունաբերության, բորսաների, քաղաքական գործիչների եւ առետրի անդրկուլիսյան կյանքը»<sup>3</sup> Իսկ ինքը սկսեց նրանից, որ բանա-կում ծառայությունից հետո երկու տարի աշխատեց ԳՖՀ խոշորագույն գործարաններում՝ ուսումնասիրելով աշխատանքի աշխարհը Այդ ու-սումնասիրության արդյունքը դարձավ «Դու մեզ պետք ես» (1966) գիր-քը, որում լրագրողը, հենվելով սեփական փորձի վրա, ստեղծեց բանվոր դասակարգի ընդհանրացված պատկերը, որը միանգամայն տարբեր-վում էր այն ժամանակ «ժողովրդական կապիտալիզմի» հասարակու-թյան մեջ լայն տարածում գտած պատկերից

Հետագայում Վալրաֆի ստեղծագործական մեթոդը էական փոփո-խություններ է կրում նա ոչ միայն նկարագրում է այն, ինչ տեսնում է, այլև, ձգտելով բացահայտել տեղի ունեցող երեւոյթների պատճառնե-րը, խաղում է նրանց դերը, ում մասին գրում է իր ռեպորտաժներում Վալրաֆը դառնում էր աշխատանքի փնտրտուքներով գրասենյակից գրասենյակ վազվզող գործազուրկ, օթեանատանն ապրող թափա-ռաշրջիկ, արդյունաբերող, որը հարստություն էր դիզել նապալմի ա-ռետրով, «գաստարբրայտեր», որը սեփական մաշկի վրա լիովի զգա-ցել է Գերմանիայում օտարերկրացի բանվորների նկատմամբ տիրող խտրականությունը Մեթոդն ինքնին նորություն չէ, այլ փոխառնված է սոցիոլոգիայից, որտեղ այն անվանում են «ընդգրկված դիտարկման» մեթոդ Այդ մեթոդն է կիրառել նաեւ Է Սինքլերը, որը «Ածխի արքան» գրելու համար ինչ-որ ժամանակ Կոլորադոյում աշխատել է ածխահան-քերում Լրագրողական դիմակահանդեսից օգտվել են Վ Գիլյարովս-կին եւ Մ. Կոլցովը 1960-ական թվականներին այդ մեթոդը շատ տա-րածված էր խորհրդային լրագրության մեջ, որտեղ «Լրագրույր փոխում է մասնագիտությունը» անունը ստացավ Այն առավել հաջողությամբ էր կիրառում Անատոլի Գուդիմովը, որը «Էկոնոմիչեսկայա գուգուտու»-ում տպագրված իր ռեպորտաժներում հանդես էր գալիս մերս ուրյես ալ-տոտեսուչ, մերթ հեռավոր ուղերթների վարորդ, մերս կուլյակի վանառուղ

Բայց Վալրաֆն ավելի հեռուն է գնում Նու չի բախարարվում «մաս-նագիտություն փոխելով», այլ նաև, իր բնությունում, «խրականություն է սաղրում կամ մեթոդը» Տեղեկությունների ձևարկումն ու ժողովման Վալրաֆի հայտնաբերած մեթոդը սրբաձայն լրագրողները հենց նրա

---

3 Տե՛ս «Нежелательные репортажу» գրքի համար Վ Ստեժենսկու գրած առաջաբանը Մ 1982

անունով են կնքել, իսկ տեղեկությունների ձեռքբերման բուն ընթացքն անվանում են «վալրաֆեն» (այսինքն անել այնպես, ինչպես Վալրաֆը<sup>4</sup>) 1974-ին նա տեղեկություններ հավաքելու համար առաջին անգամ դիմում է արտաքինը փոխելու հնարքին Այս նոր փորձարկումը նույնպես հաջողությամբ է պսակվում. Դրա օգնությամբ Վալրաֆը կարողանում է պատմել ԳՖՀ-ում Շվեդիայի գլխավոր հյուպատոս Գերլինգին պատկանող ապահովագրական կոնցեռնում տիրող կարգերի մասին

Նրան շատ բան էր հաջողվում Այսպես 1976 թվականին Պորտուգալիա կատարած այցի ժամանակ նրան հաջողվեց կանխել այնտեղ նախապատրաստվող ֆաշիստական հեղաշրջումը Ճիշտ է, դա տեղի ունեցավ պատահաբար, «իրականությունը սադրելու» իր սովորության հետեւանքով: Նա կարողացավ կապ հաստատել դավադրության մասնակիցների հետ՝ սովորության համաձայն ներկայանալով որպես արեւմտագերմանական ֆինանսական հզոր կազմակերպության լիազոր ներկայացուցիչ Պորտուգալացի «աջ ուժերի» համար դա անկեղծության մոդ գործոն էր, ուստի Վալրաֆի համար առանձնապես դժվար չեղավ տեղեկություններ ստանալը. Սակայն ամենահամարձակ երազներում անգամ նա չէր կարող պատկերացնել, թե ինչ ծանրակշիռ ծուկ էր ընկել տարերայնորեն նետած իր ցանցը<sup>5</sup>

«Ծանրակշիռ ծուկը» տվյալ դեպքում ինքը գեներալ Սպինոլան էր, որն անձամբ շտապեց Դ-յուսելդորֆ գերիզոր հովանավորների «նախագահի» հետ հանդիպման, այն հովանավորների, որոնց անունից իբր հանդես էր եկել լրագրողը՝ որպես «լիազոր ներկայացուցիչ» Գեներալի հետ հանդիպման գնացող չկար, քանի որ նման հաջողության հույս չունեցող Վալրաֆը չէր հասցրել «նախագահի» դերին հարմար մարդ գտնել Կեղծ նախագահը գտնվեց վերջին պահին եւ նույնիսկ հասցրեց դուր գալ ոչինչ չկասկածող Սպինոլային Այս անհավանական հանդիպման արդյունքում Վալրաֆը մի անգին ձայնագրություն ձեռք բերեց, որի հիման վրա էլ գրվեց «Մի դավադրության բացահայտումը» գիրքը:

Վալրաֆի մեթոդները դժվար է լիովին ազնիվ համարել, թեւ հնարավոր չէ չխոստովանել նաեւ դրանց զարմանալի արդյունավետությունը լրագրողական հետաքննություններ վարելիս Վալրաֆն ինքն ասում էր «Ես չեմ արդարացնում իմ մեթոդները Ես դրանք անհրաժեշտ եմ համարում»

4 Այդ մասին տես Щенулова Г Г "Публицистика Гюнтера Вальрафа", Свердловск, 1990

5 Зоркая Н "Человек который проходит сквозь стены/Репортер обвиняет"

Ասում են հաղթողներին չեն դատում, թեև այս պնդումը Վալրաֆի դեպքում ոչ մի կերպ չի արդարագել, քանի որ հնարավոր չէ հուշվել դատական հայցերի քանակը, որոնցով նա, որպես պատասխանող, հանդես է եկել դատարանում Դրանցից ամենահայտնին «Շաքինգերի լուղղեմ Վալրաֆի» գործն էր, որի դատավարությունը ձգձգվեց յոթ ( ) տարի

Վալրաֆի նախագծերից ամենահետաքրքիրներից մեկը «Բիլլ թերթում նրա փորձարկումն էր՝ Ալսեյ Տեգար Շաքինգերի կայսրության դեմ պայքարի նպատակով Վալրաֆը փոխել էր արտաքինը եւ աշխատանքի ընդունվել «Բիլդի» հսկողության բաժանմունքում Հանս Էսկրանունով Այս համագործակցությունը չորս ամիս տեւեց եւ շատ դժվարությամբ հաջողվեց իրականացնել այն Թերեւս առաջին անգամ նախոսում է այն մասին, որ «ուրախությամբ դուրս կգար խաղից դեռ լուսըը շսկսած»<sup>6</sup>

«Բիլդը» «մեծագույն պարզեցումների» թերթ էր համարվում Թերթի աշխատակիցները հայարտանում էին ամենագլխավորի, ամենաէականի մասին պարզ խոսելու իրենց ունակությամբ Թերթի խմբագրության միջանցքներում կարելի էր կարդալ «Մեր թերթը «Բիլդը», պաշտպանում է հալածվողներին ու ճնշվածներին, օգնում է աղքատներին եւ թեթևություն բերում հիվանդներին Շաքինգեր»

Վալրաֆը փորձեց ապացուցել, որ այդ պնդումը սուտ է, որ «Բիլդը» թմրադեղ է ընթերցողների համար, որը թույլ չի տալիս տեսնել իրական հիմնախնդիրները՝ երկրում ձեռավորելով բարոյական ու քաղաքական իր մթնոլորտը Բայց դա Պորտուգալիայում ֆաշիստական հեղաշրջումը կանխելուց շատ ավելի դժվար էր անել Այստեղ սեփական օրենքներն էին գործում «Բիլդ»-ում հայտնված յուրաքանչյուր ոք դառնում էր Շաքինգերի կայսրության մի մասնիկը եւ ենթարկվում էր նրա կանոնների Աշխատանքն այստեղ ոչ միայն փող աշխատելու միջոց էր, այլ նաեւ կենսակերպ Շուտով Վալրաֆն ինքը զգաց դա սեփական մուշկի վրա «Ի՞նչ է կատարվում իրականում,- գրում էր նա իր օրագրում - Ինչ որ իրադարձություններ են տեղի ունենում, դու մասնակցում ես դրան, եւ կամա-ակամա քեզ ինչ-որ բան է կաշում Պետք չէ ձեռագրել, քե դու առաջվանն ես մնացել»<sup>7</sup>

1977 թվականին ի հայտ է գալիս «Սենսացիայի ծնունդը» գլխավոր Վալրաֆը պնդում է, որ «Բիլդը» ոչ միայն աղավաղված է ներկայացնում տեղեկատվությունն ու խեղաթյուրում փաստերը, այլ նաև հաճախ հարինում է դրանք Նույնիսկ 10 տողանոց հոդվածում քերական խնդրերով

6 Вальраф Г "Нежелательные репортажу" М 1982 стр 249

7 Вальраф Г "Нежелательные репортажу" М 1982 стр 266

է» կանխակալ և աչառու լինել «Բիլդի» սիրելի թեմաներն են սենսացիոն սպանությունները, բռնաբարությունները, սիրային պատմությունները, վամպիրները, ՉԹՕ-ները Թերթը ընթերցողների մեջ վախ է սերմանում կանխագուշակելով աղետներ ու կործանում, պողպատյա ծովահրեշի նման իր կառչուն շոշափուկների մեջ է պահում նրանց

Շափնգերի կոնցեռնը սկսում է հետապնդել Վալրաֆին Գերմանիայի սահմանադրական դատարանը որոշում է, որ ներխուժագրական նիստում տեղի ունեցածը գրքում ներկայացնելը մամուլի ազատության իրավունքի խախտում է, հետեւաբար՝ անթույլատրելի Իրար են հաջորդում երեք դատավարություններ, բայց 1979 թվականին լույս է տեսնում նոր «Մեղադրող կողմի վկաները «Բիլդի» նկարագրությունը շարունակվում է» գիրքը, իսկ 1981-ին «Բիլդի» տեղեկատու մինչև վերջ»-ը Վալրաֆը սրանք եռագրություն էր համարում եւ, օգտվելով բժշկական եզրաբանությունից, պնդում, որ դրանք հետետողականորեն արտացոլում են հիվանդության պատմությունը. հիվանդության զարգացման պատմություն (անամնեզ), ախտորոշում (դիագնոզ) եւ բուժում (թերապիա)

Վալրաֆի համար հեշտ չէին «Բիլդի» գործով բացահայտումները «Շափնգերի պահապան շները» լսում եւ ձայնագրում էին Վալրաֆի հեռախոսային խոսակցությունները<sup>8</sup> Նրանց հաջողվեց թափանցել Վալրաֆի տուն եւ ոչնչացնել նրա ձեռք բերած արխիվային փաստաթղթերի կեսից ավելին՝ չիմանալով, սակայն, որ Վալրաֆը դրանց մեծ մասը գրանցել էր միկրոժապավենների վրա եւ պահել հուսալի թաքստոցում. Իսկ 1980 թվականի մարտի 18-ին իր բնակարանում մեռած գտան Հայնց Վիմանին, որը նախկինում աշխատել էր «Բիլդի» Բյուլնի բաժանմունքում եւ Վալրաֆի տեղեկատուն էր ու «մեղադրող կողմի» գլխավոր վկան Ըստ դիախերձման արդյունքների՝ մահվան պատճառները բնական էին, սակայն դժվար է հավատալ դրան, եթե հաշվի առնենք, որ նրան մշտապես սպառնում էին հեռախոսով, իսկ մի անգամ նույնիսկ ծեծել էին

Սակայն Վալրաֆի ջանքերն ապարդյուն չանցան: Ավելի քան 400 գրողներ ու լրագրողներ հրապարակայնորեն հրաժարվեցին համագործակցել Շափնգերի հրատարակությունների հետ, ստեղծվեց «Անտի-Բիլդ» բյուրո, որը օգնում էր «Բիլդի» գրապարտություններից տուժածներին Իսկ ամենագլխավորն այն էր, որ Վալրաֆին հաջողվեց կասկած սերմանել միլիոնավոր ընթերցողների մեջ, որոնք մինչև այդ անվերապահորեն հավատում ու վստահում էին այդ թերթին

8 Вальраф Г. Нежелательные репортажу», М., 1982 С. 266

# ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

19-րդ դարի ռուսական լրագրության համար շատ կարևոր էր հասարակությանը հուզող հիմնախնդիրները ժամանակակիցների գիտակցությանը հասցնելը Լրագրողական հետաքննության բարձունքներին այն հասել է ռեպորտաժներում, քրթակցություններում, դատավարական ակնարկներում, որոնք Ռուսաստանում ընդունված էր կոչել «հրապարակախոսություն» ընդհանուր անունով

## Բացահայտող լրագրողները

Նախահեղափոխական ռուսական լրագրությունը մի հսկայական ուլտրա է, որը, ցավոք սրտի, քիչ է ուսումնասիրված Ո՞վ է այսօր կարդում հին թերթերը Եթե նկատի ունենանք, որ լրագրողական հետաքննությունը իրադրության բազմակողմանի եւ խոր ուսումնասիրություն է ենթադրում, այդ թվում նաեւ այն կողմերի, որոնց մասին ջանում են լռել կամ չհրապարակել, ապա պարզվում է, որ ռուսական լրագրությունը դրան վաղուց է ծանոթ 1913 թվականին Ե Ա Կաուֆմանը գրում էր «Ամերիկացի լրագրողները հայտնի են իրենց հնարամտությամբ Ականջ դնել, թաքուն դիտել, ծառայողի տեսքով մասնավոր հավաքածուներ թափանցել, իսկական շերտկյան ճարակությամբ գրույցի մեջ ներքաշել հարցազրույցի ցանկություն չունեցող մարդկանց, ամերիկացի լրագրողա այս ամենը պիտի կարողանա անել Ռուսական լրագրությունը նորնոր է լրագրողի այսպիսի տիպ ձեւավորում, բայց ես շատ տարիներ առաջ այնպիսի լրագրողների եմ հանդիպել, որոնց համար փակ դռներ գոյություն չունեին»<sup>9</sup>

19-րդ դարի վերջում Կաուֆմանն աշխատում էր Օդեսայում, Նավրոցկու հիմնադրած «Օդեսսկիյ իստոկ» ("Одесский источник") թերթի խմբագիրն էր Այն ժամանակներում Օդեսայում երկու մարդ էին շատ հայտնի՝ քաղաքագլուխ Ա Պ Չելենոյը եւ Վ Վ Նավրոզկին 18 տարիների ընթացքում Չելենոյը քաղաքի բնակչության ահ ու սարսուփն էր Նա կրթությամբ եւ իր նախկին գործունեությամբ նավատտի էր, անգուստ էր ծայրահեղ բռնկուն բնավորության տեր Միչման Չելենոյը ժամանակին նավարկել էր նշանավոր «Պալլադա» նավով (Իրեգատ), եւ գրող Ի Գոնչարովը նույնիսկ մի քանի սող էր գրել իր գրքում նրա մասին, որով Չելենոյը շատ էր հպարտանում Ասում էին, որ նա Պետերբուրգի

9 Кауфман Е А За кулисами печати // Исторический вестник 1913 N 7 с 116



առանձնահատուկ հովանավորությունն է վայելում, որտեղ նրան «անձամբ ճանաչում են» եւ նրա մասին իբր հարցնում են, թե «իմ Չելենոյը առաջվա պես հայիոյո՞ւմ է»<sup>10</sup> Ակնհայտ է, որ հենց այդ հանգամանքն էր թույլ տալիս, որ քաղաքագուլիսը, որի վրդովեցուցիչ արարքների մասին բազմաթիվ պատմություններ էին շրջում, իրեն բացարձակ անպատժելի զգար Նավրոցկին դողում էր նրա ստաջ մյուսներից ոչ պակաս, բայց նրան էլ էր ողջ Օդեսան ճանաչում

**Վասիլի Վասիլեւիչ Նավրոցկին** երբեք ոչինչ չէր սովորել, նույնիսկ գրագետ էլ չէր, բայց դա չէր խանգարում, որ նա շուրջ 40 տարի սեփական թերթ հրատարակեր «Վասիլի Վասիլեւիչ, եթե Դուք Ամերիկայում ծնված լինեիք, ապա Ձեր տաղանդով անպայման բարձրագույն աստիճանի կհասնեիք նախագահ կղառնայիք», - նրա մեծարանքի արարողություններից մեկի ժամանակ ասել է փաստաբան Կուպերնիկը<sup>11</sup> «Օդեսակիյ լիստոկը» ("Одесский листок") հատկապես աչքի էր ընկնում այն բանով, որ հրատարակիչն իր աշխատակիցներին թույլ էր տալիս տեղական քաղաքային գործիչների «ջարդը տալ» Բացահայտող-լրագրողի կերպարը հայտնի էր Օդեսայում հատկապես Նավրոցկու շնորհիվ «Հախից գալը» նրանց արհեստն է,- «Օրագրում» գրում էր Կորոլենկոն,- նրանք նախ հարցնում են, թե ում է պետք թքել-մրել, նոր հետո պատճառներ են որոնում»<sup>12</sup>

Նախահեղափոխական լրագրությունը, որի ճանապարհին շատ կյանքեր են փշրվել ու շատ տաղանդներ կործանվել, ճարպիկ լրագրողների շատ անուններ է տվել Ցանկության դեպքում հնարավոր է նրանց ստեղծագործությունների մեջ հետաքննական լրագրության ծիւեր տեսնել, բայց չարժե անել այն պատճառով, որ այդ նյութերը չնչին ու դատարկ էին, գրվում էին մարդկանց գոհացնելու եւ «լավ հատավաճառ» ապահովելու նպատակով Եվ դա հրաշալի հասկանում էին նրանք, ովքեր իրենց մասնագիտությանը լրջորեն էին վերաբերվում. «Եվ ես հիմա զարմանում եմ մի՞թե այդ անպետք ու հիմարագույն թեմաներն անհրաժեշտ էին ժամանակի հասարակությանը Ենթադրում եմ, որ անհրաժեշտ էին Մտածող բուրժուազիան մեր «չնչին թեմաների» կարիքն ունենալ Նավրոցկիները դա մեզանից լավ էին հասկանում Մենք ծեփում էինք այն ճեղքերը, որոնցից կարող էր անսպասելի թարմ հոսանք մտնել ( ) Ես չեմ մերկացնում, նաեւ մեղա գալու ցանկություն չունեմ Խոստովանելու բան չունեմ, ես մյուսներից վատը չեմ եղել»<sup>13</sup>

10 Այդ մասին տես և Короленко В Г Дневник Т 2 Полтава, 1926, с 187

11 Кауфман Е А Из журнальных воспоминаний // Исторический вестник 1912, N11, с 626

12 Короленко В Г Указ соч , с 186

13 Старый журналист Литературный путь дореволюционного журналиста М , А

Հետաքննությունն վարելու համար բավական է անգամ ակնարկը, որ ինչ-որ մեկը չարաշահումներ է արել Բայց հետաքննող-լրագրողի մասնագիտության հիմքը ոչ թե «թաքուն նայելու» եւ «ներթափանցելու» ունակությունն է, այլ քաղաքացիական բարոյական դիրքորոշումը Ահա թե ինչու Յուլիյ Շրեյերը, որի մասին ասում էին, թե պետական խորհրդականի պաշտոնը եւ պատկանելի տարիքը չէին խանգարում արժեքավոր տեղեկություններ ձեռք բերելու համար յոթ տակ կռանալ<sup>14</sup>, միայն կոչվում էր «ոեպորտաժի արքա», իսկ իսկական արքա դարձավ **Վլադիմիր Գիլյարովսկին** (1853-1935)

## **Վլադիմիր Ալեքսեևիչ Գիլյարովսկի. Ռեդուրսաժի արքան**

Նա բացառիկ անձնավորություն էր, կյանքը նրան խիստ հարուստ կենսափորձ էր պարգևել 1871 թվականին, դեռ գիմնազիան չավարտած, փախել էր տանից եւ շուրջ տասը տարի թափառել ~~եղել էր նավաբարձ Վոլգայի վրա, բեռնակիր, ջորեպան, կրկեսի, ապա գավառական թատրոնի դերասան, զբաղվել շատ այլ գործերով: Աշխույժ, շփվող, արտասովոր ուժի տեր այս մարդը կարող էր կատակի համար կոտրել արժաթե մետաղադրամը, ծռել պայտը «Ես չգիտեի, թե ինչ բան է հոգնությունը,- գրել է նա իր 75-ամյակի օրը, իսկ «վախ» եւ «վտանգ» բառերն ընդհանրապես բացակայում էին իմ բառապաշարից»<sup>15</sup>~~

1882 թվականին նա սկսեց տպագրվել «Մոսկովսկի լիստոկ»-ում ("Московский листок"), մի տարի անց տեղափոխվեց «Ռուսկիե վեդոմոստի» ("Русские ведомости") Կառապաններից էլ արագ նա սրանում էր Մոսկվայով մեկ արձանագրելով սպանություն ու կողոպուտ, հրդեհ ու աղետ Նրան լավ էին ճանաչում «Խորամանկ շուկայի» ("Хитрый рынок") եւ օթեանատների բնակիչները «Ռեպորտաժի արքան» Մոսկվայի տեսարժան մարդկանցից մեկն էր Այս արտասովոր մարդու անձը անփոփոխ կերպով համակրանք էր հարուցում

Մորոզովների ֆաբրիկայում 1882 թվականին տեղի ունեցած կրպեկների մասին Օրեխովո Չուեռոյից նրա թղթակցությունների նպատակը ողբերգության իրական պատճառների բացահայտումն էր Գիլյարովսկին ֆաբրիկա մտավ որպես բանվոր, հիմնավորում էր վարձու բանվորների հերթերում եւ ուշադիր դիտում ու լսում ամեն բան Նրա հրապարակումները թերթում մեծ աղմուկ բարձրացրին Գեներալ-նահանգապետը հրամայեց ձերբակալել ու արսուրել հեղինակին

14 Кауфман Е А Из журнальных воспоминаний // Исторический вестник, 1912 N11, с 611-625

15 Гуляровский В А Мои 75 лет // Огонек 1928 N 46 с 7

Գիլյարովսկու շնորհիվ հայտնի դարձավ նաև նույն 1882 թվականին տեղի ունեցած «կուկուեյան աղետի»՝ Մուսկվա-Կուրսկ երկաթուղու Օրյոլի հատվածում գնացքի կործանման մասին Այդ ոլբերգության պատճառներն ու հետեանքները ջանում էին թաքցնել Լրագրողն աննկատ թափանցեց հատուկ գնացք, որով երկաթուղու ղեկավարությունը գնում էր աղետը հետաքննելու Երկու շաբաթ նա անցկացրեց ահավոր գերեզմանում, որի մեջ մարդկանցով լի գնացքն ընկել էր այն բանի հետեանքով, որ տեղատարափի անձրեւները քշել-տարել էին երկաթուղու հողաթմբերը

Նա Խոդինսկյան դաշտում էր թագադրության օրը եւ ինքն էլ հայտնվել էր «խոդինսկյան աղետի» հենց կենտրոնում Բազմահազարանոց խենթացած ամբոխի մամլիչից դուրս պրծնելը հեշտ չէր նույնիսկ Գիլյարովսկու նման ուժեղ մարդու համար, բայց հաջորդ օրն առավոտյան նա դարձյալ աղետի վայրում էր Խոդինսկայի մասին միակ հողվածք, որ լույս տեսավ 1896 թվականի մայիսի 26-ին, նրա հողվածն էր «Ռուսկիե վեդոմոստի»-ում

Գիլյարովսկու ռեպորտաժները հասարակական լայն արձագանք էին հարուցում Այդուհանդերձ դրանք լիարժեք հետաքննությունների աստիճանի չհասան հենց ռեպորտաժի ժանրի առանձնահատկության եւ այն բանի պատճառով, ինչը Չեխովը, Գիլյարովսկու մասին խոսելիս «ճղճղան նկարագրություններ» (мрежкычусе онусануся) էր կոչում

## **Վլադիմիր Գալակսիոնովիչ Կորոլենկո Ազնվականների հափճակությունների բացահայտումը Մուլսանյան գործը**

Ռուսական լրագրության մեջ հետաքննությունները միշտ էլ պայմանավորված են եղել հեղինակի անձով։ Այդ ժանրի առավել հետաքրքիր նմուշները պատկանում են ոուս մեծ գրող **Վլադիմիր Կորոլենկոյի** (1853-1921) գրչին Ժամանակակիցները նրան «ռուսական խղճի հայելի» եւ «բարոյական հանճար» էին կոչում

Նրա առաջին հրապարակախոսական ստեղծագործությունը «Նուվոստի»-ում տպագրված հողվածն էր 1878 թվականի հունիսի 5-ին Ապրակսինյան նրբանգրում տեղի ունեցածի մասին, երբ աշխատանոցներից մեկի երեք հազար բնակիչները ջարդուփշուր էին արել դռնապանների կացարանը Պետերբուրգյան թերթերն անդրադարձան ժողովրդական զայրույթի այդ պոռթկմանը գրեթե միանման հրապարակումներ

յով, որոնց բոլորի տեղեկատվության աղբյուրն էլ նույնն էր ոստիկանական տեղամասը Ըստ պաշտոնական վարկածի հսկասության պատճառը ազգամիջյան հարաբերություններն էին, քանի որ այդ գործին առնչվող դոնապանները բոլորն էլ թաթար էին Այլ տեսակետ ունեցող միակ թերթը «Նովոստի»-ն էր այդ ժամանակներում հեղափոխական նարողնիկության գաղափարներով տարված Կորոլենկոյի համար ակնհայտ էր, որ այդ հսկասության պատճառն ավելի շատ սոցիալական էր, քան ազգային

1885 թվականի ապրիլին Կազանի «Վոլժսկիյ վեստնիկ» (“Волжский вестник”) թերթը նրան համագործակցություն առաջարկեց Այստեղ էր, որ Կորոլենկոն տպագրեց Նիժեգորոյան նահանգից իր թղթակցությունները, որոնք իրավամբ կարող են հետաքննական լրագրության օրինակներ համարվել 1886-1896 թվականները Նիժնի Նովգորոդի համար Կորոլենկոյի ժամանակաշրջանն էին «Դեռես 1899 թվականի դեկտեմբերից ի վեր,- գրել է Կորոլենկոն,- ես խլիստ տարվեցի տեղական հետաքրքրություններով Իսկ դրանք, համենայն դեպս մեր ժամանակներում, գրեթե նույնն են հափշտակություններ, հափշտակություններ ու դարձյալ հափշտակություններ»<sup>16</sup>

1890-1891 թվականներին նա լարված պայքար է մղում ազնվականների կատարած հափշտակությունների դեմ Նախ եւ առաջ նրա ուշադրությունը գրավեց Նիժեգորոյան գավառական տեղական (զեմստվոյական) վարչության նախագահի Մ Պ Անդրեեւի կերպարը Դա ոչ մեկից չվախեցող բացահայտ թալանչի գիշատիչ էր Խելացի, եռանդուն, հնարամիտ այդ մարդն իր բռի մեջ էր պահում ողջ գավառը «Մութ փողերի պատմությունը» ոչ մեծ հոդվածում (История темных денег “Волжский вестник”, 1890, N 2) Կորոլենկոն մերկացնում էր Անդրեևի 5 հազար ռուբլու հետ կապված մեքենայությունները 1880-ականների սկզբին քաղաքային ուսումնարանների համար կատարված (ուսուս հաշիվների մնացորդներից եւ անհատ մարդկանց նվիրատվությաններից գոյացած այդ գումարը պետք է դեռես 1884 թվականին կանոնավեր քաղաքային վարչությանը Վերջինս հինգ տարիների ընթացքում զեմստվոյական վարչության պետի հետ այդ գումարի վերաբերյալ մատին նամակագրություն վարելուց եւ անօգուտ փորձերից կողմում 1888 թվականից դադարեց նախահաշիվի մեջ մտցնել իրեն հասանելի կապիտալի տոկոսները Այդ ամբողջ ընթացքում 5 հազար ռուբլին (ինչպես նաև դրա տոկոսները) Անդրեևի ձեռքում էին գտնվում 1889 թվականին նա դրա մասին հայտնեց զեմստվոյական հերթական ժողովին ասելով, թե

16 Цит по Бяльиу Г А Короленко - провинциальный публицист// УЗ АГУ 1948 N

իրեն հաջողվել է քաղաքային հասարակական վարչության ուղեգրությամբ պաշտպանել այդ գումարը եւ առաջարկեց դրանք գեմստվոյի սեփականությունը ճանաչել ժողովը, հուզված իր նախագահի մեծահոգությունից, առանց երկար-բարակ մտածելու կոծկեց նրա մեղքերը եւ որոշեց այդ գումարը ծախսել գյուղատնտեսական դպրոցի շինարարության վրա, իսկ «փողերի կոծկման/խճճման» շրջանի հեղինակ Անդրեեյին հանգիստ թողեցին Այդ անօրինական ներման պատմությունն էլ բացահայտել էր Կորոլենկոն «Վոլժսկիյ վեստնիկ»-ի էջերում

Նույն կերպ նա միջամտեց նաեւ «Դրուժինա» շոգենավային ընկերության գործերին, որը ղեկավարում էր պետական խորհրդական ՄԻ Շիպովը Այդ ընկերության փլուզման մասին Կորոլենկոն յոթ հանգամանակից հողված գրեց ապացուցելով, որ «Դրուժինայի» գործերի վիճակն ամենեւին էլ այդքան լավատեսական չէ, ինչպես փորձում են ցույց տալ «Նիժեգորոդսկի լիստոկ»-ը եւ «Բիրժելյե վեդոմոստի»-ն «Դրուժինայի» փլուզումը Կորոլենկոն «երջանիկ սնանկացում» անվանեց նկատի ունենալով, որ դրա հետեւանքներն այնպիսին չէին, ինչպիսին սովորաբար լինում են խոշոր ֆիրմաների անվճարունակության հետեւանքները «Այս դեպքում ամեն ինչ կարծես հակառակը եղավ ամեն կողմից գովում են Շիպովի հմտությունն ու բարեխղճությունը Կարծես ՄԻ Շիպովի «հմտության» կատարելության համար միայն սնանկացումն էր պակասում»<sup>17</sup>

Իր հետաքննությունը Կորոլենկոն սկսեց ընկերության տարեկան հաշվետվության եւ հաշվեկշռի մանրակրկիտ վերլուծությամբ Մտահոգիչ էր արդեն այն հանգամանքը, որ 1875-1885 թվականների հաշվետվությունները ստանալը շատ ավելի հեշտ էր, մինչդեռ վերջին տարիներինը խնամքով թաքցվում էին, եւ, չնայած համառ որոնումներին, դրանք գտնելն անհնար էր Հրասյարակախոսը կարողացավ ապացուցել, որ այդ ամենն արվել է թաքցնելու համար չարաշահումների այնպիսի ցանցը, ինչպիսին, ասենք, վարչության կողմից հասարակական բաժնետոմսերի գնումն էր<sup>18</sup>

Նիժնի Նովգորոդում մեծ արձագանք ստացավ նաեւ Կորոլենկոյի արշավը Ալեքսանդրյան ազնվական բանկի դեմ, որը պարբերաբար թալանվում էր ղեկավարության կողմից 1981 թվականի ՈւՍ-ից սկսած «Վոլժսկայա պրավդայի» ընթերցողների առաջ ծավալվում էր Ալեքսանդրյան բանկի պատմությունը Կորոլենկոն մանրամասնորեն վերլուծում է բանկային խիստ ճգնաժամի առաջացման պատճառները Այս շարքի ութ հողվածներից յուրաքանչյուրն ինքնուրույն հետաքննությունն էր «Տագնապալի նշաններ» ("Тревожные признаки"), «Բանկը

17 Маленький человек О крахе общества Дружина// Волжский вестник 1891 N 257

18 Там же

և հրապարակայնությունը» («Банк и гласность»), «Կանոնադրություն եւ պրակտիկա» («Устав и практика»), «Ապարներ եւ գրավների վաճառք» («Недвижимку и продажа залогов»), «1884 թվականի վերստուգումը» («Ревизия 1884 года») Կորոլենկոն նաև պատմական սեղեկանք է գրում Ալեքսանդրյան բանկի մասին նշելով, որ իր գոյության 47 տարիների ընթացքում «Նիժեգորոդյան ազնվականության ուղղված գանձարանը» իր բազմաթիվ տերերից ոչ մեկին չի ոգեշնչել գունև «Խամառոտ պատմական մի ակնարկ» գրելու

Կորոլենկոյի եզրահանգումները համոզիչ եւ հստակ են, լրագրողական հետաքննության մեթոդն ու ժանրն այստեղ գրեթե միաձուլվում են Նկարագրելով խախտումները նա բացատրում է, թե ո՞րն է պատճառը, որ Նիժնի Նովգորոդի ազնվականները վատ բանկիրներ դուրս եկան և չկարողացան կատարել իրենց ստանձնած պարտականությունները Հակառակ կանոնադրությանը Ալեքսանդրյան բանկում հրապարակայնություն գոյություն չունեի տեղական մամուլի հետ նրա հարաբերությունների բնույթը մշտական հետապնդումներն էին Կանոնադրությանը հակառակ այստեղ անօրինական արտոնություններ էին տալիս փոխառուներին, որի հետևանքով հսկայական ապառքներ էին գոյացել, իսկ Անդրեեի վատնած գումարները ծածկելու համար բանկը նույնիսկ հատուկ վարկերի դիմեց Անթույլատրելի էր նաև այն, որ բանկի ղեկավարությունն անուշադրության էր մատնել ապահովագրված գույքի կեղծման գործով տնօրեններից մեկին պատասխանատվության կանչելու մասին լուրը

«Վոլժսկիյ վեստնիկ»-ում տպագրված հոդվածներից բացի Կորոլենկոն Ալեքսանդրյան բանկի գործի մասին նաև մի գրքույկ էր հրատարակել։ Նա հասավ այն բանին, որ բանկում ստուգումներ անցկացրին, որի արդյունքում տնօրեններից մի բանիսին դատի տվեցին Նրանցից մեկի կինը թունավորվեց ամուսնու ձերբակալությունից անմիջապես ևնտո, իսկ ամուսինը մահացավ բանտում Նիժնի Նովգորոդի հասարակայնությունը խիստ վրդովվել էր Թեև «զգայուն մարդիկ ասում էին, որ Կորոլենկոն թղթակցություններով մարդ է սպանում»<sup>19</sup>, նա շարունակում էր ծառայել արդարությանը

Հոգեւոր եւ ֆիզիկական ահռելի ուժեր նվիրեց Կորոլենկոն մուսուսցի վոստյակների (ուղմուրտների) գործի հետաքննությանը Այդ դասու վարությունը 19-րդ դարի վերջին ակեկոծեց ողջ Ռուսաստանը Այսօր այդ գործի մասին քչերն են հիշում, սակայն հենց սա է կիրք դարձկ հանրահայտ գրող Բ Ակունիևի «Պելագեյան եւ սայխուսկ բուրյուզր գավառական դեաեկտիվի համար

19 Горький М Собр соч М , Л , 1933, с 148

1892թ-ի մայիսի 5-ին Վյատկայի նահանգի Մուլտան գյուղի մերձակայքում գտել էին չքավոր վոտյակի (ուղմուրտի) մի դիակ՝ առանց գլխի, սրտի եւ թոքերի, մարմնի վրա բազմաթիվ ծակոցների հետքերով Տեղական ոստիկանությունն ու դատական իշխանությունները որոշեցին, որ դա ծիսական զոհաբերություն է եղել Ու թեև դիակը զննող բժիշկը մարմնի վրա կենդանի ժամանակ տանջահարության հետքեր չգտավ, սպանության կասկածանքով ձերբակալեցին 11 ուղմուրտ գյուղացիների Հետաքննությունը, որ երկուսուկես տարի տեւեց, աններելի անփութությամբ էր վարվում Հենց սկզբից նրանց նպատակը ոչ թե արդարության վերականգնումն էր, այլ մուլտանացիների մեղավորության ապացույցների հայտնաբերումը Մեղադրյալներին տանջում ու ծեծում էին, որպեսզի նրանցից զոհաբերություն կատարելու մասին խոստովանություն կորզեն 1894 թվականի դեկտեմբերին Սարայուլի նահանգի Մամլիժե քաղաքում 10 մարդու դատեցին, որոնցից 7-ը մեղավոր ճանաչվեցին եւ դատապարտվեցին տաժանակիր աշխատանքների

1895 թվականի հունվարի 24-ին «Կազանսկի տելեգրաֆը» նկարագրեց դատավարության ընթացքի տարրական կանոնների խախտումն ու կամայականությունները Դատավարությանը հրավիրված «գիտնական-ազգագրագետը» անհեթեթ տխմարություններ էր դուրս տալիս Հեքիաթների եւ բանահյուսական այլ ժանրի նյութերի հիման վրա նա պնդում էր, որ ուղղափառ քրիստոնյաների խաղաղ ու աշխատասեր վոտյակների մոտ վաղուց ի վեր մարդկային զոհաբերության սովորույթ գոյություն ունի: Օրինակ բերած հեքիաթներն էլ ոչ թե վոտյակների (ուղմուրտական), այլ չերեմիսների (մարիական) հեքիաթներ էին

«Մուլտանացիների գործը» շատերին էր վրդովեցրել, բայց ոչ մեկն այնպես չարձագանքեց դրան, ինչպես Կորոլենկոն, որն իր իսկ խոստովանությամբ «այդ գործի առնչությամբ հաննիբալյան երդում էր տվել» եւ հիմա չի կարող ոչ մի այլ գործով զբաղվել կամ ոչ մի այլ բանի մասին մտածել: Նա շրջեց Վյատկայի նահանգի բոլոր խուլ անկյունները, հարձուփորձ արեց տեղացիներին «Ես այցելեցի Մուլտան գյուղը, գրում էր նա,- ես եղա այն մոռյալ արահետում, որտեղ գտել էին չքավոր Մատյուշինի գլխատված դիակը Ես դեռեւս այդ ահավոր, խորհրդավոր ու անբացատրելի ողբերգության տպավորության տակ եմ եւ ուզում եմ բղավել ո՛չ, այդպիսի բան տեղի չի ունեցել, դատավորներն անմեղ մարդկանց են դատապարտել» Կորոլենկոյի միջամտությունը չէր սահմանափակվում «Ռուսկիե վեդոմոստի»-ում տպագրվող հոդվածներով գրույր որոշել էր մասնակցել գործի վերաքննության դատավարությանը

1895 թվականի սեպտեմբերի 29-ին մեղադրյալները (տրիգ կանգնեցին դատարանի առաջ Եվ նորից երդվյալ ասենականակալների (նկարագրվեցին նույն ասեկոսեներն ու միակողմանի մեղադրական նյութը Մղագրողներին այդ դատավարությանը թույլ չտվեցին մասնակցել, ուսկայն Կորոլենկոն և լրագրողներ Ա Ն Բարանովն ու Վ Ի Սուխուլովը գրեթե բառացի գրի առան այն ամենը, ինչ խոսվեց այդ դատավարության ընթացքում «Մենք երեքով երեք օր անընդհատ գրում էինք Մասներս ուռել էին եւ մատիտից բշտիկ էր գոյացել, բայց բոլոր հարցերն ու բոլոր պատասխանները գրի առնվեցին»<sup>20</sup> Նրանց հրատարակած գրքույկը՝ «Մուլտանացի վոյակների գործը», ողջ Ռուսաստանն էր կարդում Համառ պայքարի արդյունքում կրկնակի դատապարտված անմեղ մարդիկ արդարացվեցին:

Կորոլենկոյի հեղինակությունն այնքան անբասիր էր, որ 1917 թվականի փետրվարից հոկտեմբերի ընթացքում ռուս արմատական մասավորականության շրջանում նրան համարում էին ապագա ազատ Ռուսաստանի հնարավոր նախագահը<sup>21</sup> Մինչեւ իր կյանքի վերջը այս մարդը երկրում իրադարձությունների ընթացքի վրա ազդելու հույսը չէր կորցնում 1920 թվականին նա նամակներով դիմել էր Լունաչարսկուն նոր իշխանություններին մեղադրելով շահախնդրության եւ կամայականությունների մեջ Այդ դիմումի առիթը «Չեկա»-ի գործունեությունն էր, որը Կորոլենկոն սկզբունքորեն դատապարտում էր «Բուլշեիկը,- գրում էր նա լուսավորության ժողկոմին,- լկտի «պետ» է, որը տնօրինում է, խուզարկում, բռնագրավում, հաճախ թալանում եւ առանց դատի ու ձեւականությունների գնդակահարում»<sup>22</sup>

«Բարոյական հանճարի» խոսքն այս անգամ չլսեցին Կորոլենկոյի լուսավորության ժողկոմին հասցեագրված եւ փարիզյան «Սովյետնեհնե զապիսկի» ամսագրում լույս տեսած վեց նամակներն արդեն ոչինչ չէին կարող փոխել 1921 թվականի դեկտեմբերին Կորոլենկոն մասուցավ Նա վերջինն էր ռուս մեծ գրողներից, որոնք այդպես էլ սովետական շղարձան

20 Короленко В Г Избранные письма Т 2 М , 1933, с 95

21 Այդ մասին տեւ Слинъко А А Президент свободной России (В Г Короленко в годы революции) // Вече 1995 Вып 3, с 138-150

22 Մեքերումը ըստ Слинъко А А Указ соч , с 146



# ՇԵՏԱՔՔՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎՍՏՐԱԼԻԱՅՈՒՄ

*Ռոման Դյաբլով. «Ավստրալիայի մամուլը.  
ավանդույթներ եւ արդիականություն»<sup>23</sup>*

20-րդ դարի 80-ական թվականները ոսկե դարաշրջան էին ավստրալիական հետաքննական լրագրության համար, որի հիմնական «արտադրողները» «Նեյշընըլ թայմս» (The National Times) թերթը եւ «Օստրեյլիեն Բրոուդքասթինգ Բոնփրնի» (Australian Broadcasting Company-ABC) ընկերության «Չորս անկյուն» (Four corners) հեռուստատեսային ծրագիրն էին։ Հենց այդ շրջանում էր, որ մեծ թվով Թագավորական հանձնաժողովներ հայտնվեցին, թագի մի քանի նախարարներ կամավոր կամ հարկադիր հրաժարականներ տվեցին, իսկ քաղաքական եւ ոստիկանական շրջանակներում կաշառակերության վերաբերյալ գործերի մասին տեղեկությունները հայտնի դարձան լայն հասարակությանը։

80-ականների լրագրողական հետաքննությունն իրավամբ աննախադեպ երեսույթ էր, թեւ այդ ոճը ծնունդ էր առել Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո եւ նույնիսկ շատ ավելի վաղ։

**Հետաքննական լրագրության** մասին առավել ամբողջական պատմական աշխատությունը գրվել է ԱՄՆ-ում Ռոբերտ Միրալդիի (Robert Miraldi) կողմից։ Նա պնդում էր, որ լրագրության այս տեսակում երկու ավանդույթ գոյություն ունի՝ օբյեկտիվությունը (objectivity) եւ սենսացիա անելու ձգտումը (muckraking)։ Ամերիկյան այս տերմինները բնութագրում են երեսույթի բուն էությունը։ Օբյեկտիվություն ասելով Միրալդին նկատի ուներ անկողմնակալ եւ անկանխակալ լրագրությունը, իսկ սենսացիայի ձգտումը, ըստ նրա, լրագրությանը պահապան շան գործառույթներ վերագրելն է, որի գործը մերկացնելը եւ, որպես դրա հետեւանք, այս կամ այն չափով հասարակությունը վերակառուցելն է։

Ավստրալիական լրագրության մեջ ադր փորփրելը «մաքրեյքըրությունը» (muckraking) նույն առանձնահատկություններն է դրսևորում, ինչ բացահայտող լրագրությունն Ամերիկայում։ Ռոպեա կանոն «մաքրեյքըրությունը» ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ սոցիալական փոփոխություններն արդեն հասունացել են եւ պատրաստ են իրականացնելու։ ԱՄՆ-ում «բացահայտող» լրագրության դասական շրջանը եղել է 1900-1915 թվականներին՝ Պրոգրեսիվիզմի ժամանակաշրջանում։

23 Տե՛ս Роман Дяблов. Пресса Австралии: традиции и современность  
<http://aussie-press.narod.ru>

Իսկ Ավստրալիայում «մերկացումների պոռթկման» երեք շրջան կերտեսնում. մինչեւ պատերազմը, պատերազմից անմիջապես հետո, երրորդ կարգերի հաստատման հույսերը շատ մեծ էին, եւ հետպատերազմյան շրջանը.

«Սմիթս Ուիքլի»-ի (Smith's Weekly) խմբագրությունում նույնիսկ «հետաքննական բաժին» գոյություն ուներ (Investigation department), որտեղ աշխատում էին «լրտեսական հակումներ» ունեցող լրագրողներ (with a bent for sleuthing) Այդ բաժնին վերագրվող գործերից մեկը 20-րդ դարի 30-ական թվականներին ծնունդ առնող ֆաշիստական շարժման «Նոր կարգի» (the New Guard) կործանումն էր.

Պատերազմից հետո մամուլի համար հիմնականը բնակարանների պակասը եւ հոգեկան լիարժեքության խնդիրներն էին. Այդ միտումն առանձնապես հստակ կարելի է տեսնել «Սիդնեյ Թրուս» (The Sydney Truth) եւ «Մելբուռն Հերալդ» (The Melbourn Herald) թերթերի օրինակով.

Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել, որ նյութերի մատուցման ոճն այս հրատարակություններում զգալիորեն տարբերվում էր միմյանցից «Թրուսը» «բուլվարային, տարլոիդային» (զանգվածային) լրագրության տիպիկ ներկայացուցիչ էր, սկանդալների եւ «մաքրեյքըրության» սիրահար, մինչդեռ «Մելբուռն Հերալդ»-ին հետազոտողները «broad-sheet» են համարում

«Թրուս» (Truth) թերթում լրագրողական հետաքննությունների մշտական նյութ էին դառնում Ավստրալիայում անշարժ գույքի հետպատերազմյան ճգնաժամի ընթացքում բնակարանների հետ կապված մեքենայությունները. Ալֆրեդ Վինգրուվի շինարարական ընկերությունը «հինգ տարի շարունակ թալանում էր մարդկանց՝ ավանդներ ընդունելով տների համար, որոնք երբեք էլ չկառուցվեցին»՝ 30-ական թվականներին իրագործված մեքենայությունները բացահայտվեցին 1947 թվականին. Բնակարանների պակասը պատճառ դարձավ չքավորության թեմայով մինի-հետաքննությունների համար («Թրուս»-ը գտավ ամուսնական մի գույզի, որն ապրում էր պահարանում»)

«Թրուսի» հետաքննությունները մեծ մասամբ սահմանափակ էին Ռոդ ղեկավարում նրանք համընդհանուր հարցեր էին բարձրագույն (ինչպես, օրինակ, անշարժ գույքի ճգնաժամը), բայց հիմնականում նրանց հետաքննություններում քաղաքականության կամ սոցիալական հիմնախնդիրների հետ կապի մասին նույնիսկ ակնարկ հնարավոր չէր գտնել «Թրուսի» ժամանակաշրջանում լրագրությունը, այդ թվում նաև «խաչակրաց արշավանքային» լրագրությունը սահմանափակված էր որոշակի մարդկանց եւ իրադարձությունների շրջանակում, ինչը շատ մեծ է այսօր հեռուստատեսությունում աիրող իրավիճակին. Ավելի ծավալուն հիմնախնդիրներ (հիվանդանոցների ֆինանսավորման կա-

ռավարական ծրագիրը, աշխատանքի ընդունվող բժիշկներին ներկայացվող պահանջները) հաճախ պարզապես անտեսվում էին Օրինակ «Թրուս»-ում եւ այլ թերթերում մեծ քանակությամբ հրապարակումներ էին տպագրվում, որտեղ խոսվում էր ոստիկանության ծախվածության եւ սանձարձակության մասին, բայց ոչ մի կոնկրետ հետաքննություն այդպես էլ ոչ մեկը չվարեց

Հոգեկան անլիարժեքությանն առնչվող լրագրողական հետաքննություններ էր վարում, ինչպես նշվեց, «Մելբուրն Հերալդ» թերթը (The Melbourne Herald).

1946 թվականի վերջերին «Մելբուրն Հերալդում» առաջին անգամ հրապարակումներ եղան վիկտորիանական շրջանի հոգեբուժարաններում հիվանդների մայմանների մասին Դենիս Ուորները, որը հետագայում հայտնի դարձավ որպես արտասահմանյան թղթակից, հոդվածաշար գրեց, որոնցից առաջինը կոչվում էր «Հոգեբուժարանների պայմանները սարսափեցնում են» Սի տարի առաջ Ուորները հոդվածներ էր գրում բնակարանային ճգնաժամի եւ դրանից օգուտ քաղողների մասին Հոգեբուժարաններն ուսումնասիրելու մասին առաջարկ ստանալով եւ բժիշկների օժանդակությամբ՝ նա սպիտակ խալաթով մեկնեց Զյու հոգեբուժարան Բուժարանի պայմանները սարսափեցրին Ուորներին, ինչի արդյունքում նրա հոդվածաշարը հասարակական լայն արձագանք ստացավ:

Զյու, Ռոյալ եւ Մոնտ-պարկ հիվանդանոցներում հետաքննությունները բավականին անսովոր հետեւանքներ ունեցան 1952 թվականի մարտին «Մելբուրն Հերալդ»-ում հոդված հրապարակվեց հոգեկան հիվանդ մի տղայի մասին, որին ծնողները բակում, լվացքի պարանով ցցին կապած էին պահում Պարզվեց, որ հուսահատ ծնողները, կարդալով Ուորների հետաքննական հոդվածները, գերադասում էին իրենց երեխային պահել տանը՝ բակում ցցին կապած, քան տեղափոխել պետական հիվանդանոց: «Հերալդը» որոշեց սեփական հետաքննություն վարել՝ այս անգամ հոգեկան հիվանդ երեխաների եւ նրանց ծնողների մասին Հետաքննության արդյունքների մասին Բիլ Տիպինգի (որն, ի դեպ, ինքն էլ հոգեկան հիվանդ երեխա ուներ) գրած երկու հոդվածները տարերային եւ շռայլ ներդրումների պատճառ դարձան (24 հազար ֆունտ ստերլինգ), որոնք ծախսվեցին հոգեբուժարանների վերակառուցման ու բարելավման համար: «Հերալդի» խմբագիր Սեսիլ Էդվորդսն այդ առիթով ասել է «Եթե մեր նպատակը ճշան վերնագիրը լիներ, մենք միայն այդ էլ կստանայինք՝ սարսափի մի ճիշ գիշերվա կեսին, ապա նոր սենսացիայի սպասում Դրա փոխարեն, նույն այդ նյութի հիման վրա, բայց բոլորովին այլ նպատակներ հետապնդելով, մենք կարողությունը այնպիսի հասարակական արձագանք հարուցել, որը ամբողջ կամակարգում բարեփոխումների պատճառ դարձավ»

Հոգեբուժարանների հետ կապված պատմությունները «մամուլը չոր-  
րորդ իշխանություն է» փիլիսոփայության բաղադրիչ մասն էին՝ Բաս-  
այդ փիլիսոփայության կողք կողքի էին դրվում ռեպրտաժները և, ինչ-  
պես հիմա են ասում՝ PR-քարոզարշավները, որոնք որոշակի նպատակ-  
ներ էին հետապնդում Վերոհիշյալ Էդվորդսը, շարունակելով թերթի  
կոչման մասին իր տեսակետը, ասում էր «Լավ թերթը պետք է նույնազ-  
նի իրեն հասարակական կյանքի հետ Նա պետք է պատրաստ լինի»  
ուղղորդել բարեգործական ներդրումները «դեպի նրանց, ովքեր ի վիճու-  
կի չեն իրենք իրենց օգնել, լուսաբանել այն հիմնախնդիրները, որոնց  
մասին հասարակությունը մոռացել է» «Հերալդի» կողմից կազմա-  
կերպված բարեգործական միջոցառումների ու քարոզարշավների մեծ  
մասը էապես տարբերվում էին ավելի ուշ շրջանի ռեպրտաժ-հե-  
տաքննություններից Դրանցից շատերը վերաբերում էին Մելքունի  
հասարակական վայրերի պահպանմանը, ինչը մամուլի տեղայնության  
(լոկալիզմի) հաջող բանաձեռնարձավ Զարոզարշավներից մեկն, օրի-  
նակ, ուղղված էր Սենտ-Կիլդա Ռոուդի մերձակայքում հրաշալի ծառու-  
ղու պահպանմանը, մյուսը՝ զբոսայգիների պահպանմանը Առավել  
խիստ (եւ ժամանակակից տեսանկյունից առավել նշանակալի) քարո-  
զարշավի օրինակ էր Ֆեդերալ կառավարության աշխատակիցների եւ  
նրանց սպասարկող անձնակազմի թվի ավելացման դեմ արշավը «Հե-  
րալդը» այս քարոզարշավն անցկացրեց 1955 թվականի հունվարին,  
իսկ երկու տարի անց նույնն արեց նաեւ «Սիդնեյ Թրուսը»

60-ական թվականների սկզբին վրա հասած մշակութային եւ քաղա-  
քական հեղափոխությունների հետեւանքով տեղի է ունենում «մաքրեյ-  
քրություն» երրորդ բռնկումը, բայց այս անգամ անակնկալ կերպով  
այն սկսվում է որակյալ մամուլում եւ հեռուստատեսությունում

Մերկացումների եւ «վերակառուցումների» օբյեկտ են դառնում ա-  
մենատարբեր մարդիկ ու երեւույթներ Չանգվածային մամուլում ինչ-որ  
հարցում մեղք գործած անհատ մարդու (օրինակ՝ զինվորական բժշկի)  
կերպարին 70-80-ական թվականներին փոխարինելու են գալիս ղեկու-  
վարի կերպարը (Առողջապահության նախարարությունը) 80-ական  
թվականներին՝ լրագրողական հետաքննության այսպես կոչված «ուկի  
դարաշրջանում», փոփոխվում են այն օբյեկտները, ում դեմ ուղղվում  
էին «մաքրեյքրների» նետերը Լրագրողների ուշադրության կենտրո-  
նում են հայտնվում համակարգային հիմնախնդիրները, կաշտակերու-  
թյունը կառավարությունում, ոստիկանը, ծառայողական խրախուսություն  
ների եւ դիրքի չարաշահումը, մի խոսքով այն բոլոր հիմնախնդիրները,  
որոնք հետպատեսրագմյան հետաքննող-լրագրողները շրջանգում էին

## **ԲԱԺԻՆ 2**

# **ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

---

Չավո՛ք սրժի, հեճաճննական լրագրության մասին դեռեւս չի գրվել կասարյալ մի դասագիրք Այնդիսին, որի բովանդակությունը կարդաս, հանգամանորեն սերես եւ, փակելով վերջին էջը, կարողանաս ասել. «Ահա եւ վերջ, ես արդեն հեճաճննող լրագրող եմ» Մինչդեռ շաս խելացի գրեր կան, որոնց հեղինակները զանգվածային լրասկամիջոցներում բազմաթիվ տարիներ աշխատած լրագրողներ են Հեճաճննող լրագրողների մեթոդները ինչ-որ հարցերում կարող են նման լինել, ինչ-որ դեղմերում՝ տարբերվել, երբեմն էլ՝ նույնիսկ հակասեն միմյանց, զլխավորն այն է, որ դրանք գրվել են այնդիսի մարդկանց կողմից, ովքեր գործնականում գիտեն, թե որն է հեճաճննական լրագրությունը իդեալական եւ համընդգրկուն դեղատոմսեր լրագրության բնագավառում ընդհանրադես չեն լինում. առավել եւս՝ հեճաճննական լրագրության, Այդ ուղին ոճ դնող յուրաճանչյուն իր ուրույն արահետով է փայլում. Բայց եթե դու զինվում ես այս մասնագիտության մեջ արդեն սեփական ուղին հարթած մարդկանց փորձով, ե՛ւ ճանադարին է հեճանում, ե՛ւ նդատակն է ավելի հասանելի դառնում

Յանդթացե՛ք լրագրողական հեճաճնության իրենց մեթոդների մասին են դատում այդ գործի վարդեսները

---

# ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՂԵՃՈՒՅԾ<sup>24</sup>

Մայիլ Բեռլին

*Բոստոնի համալսարանի լրագրության տրոֆեւոր, աշխատել է «Նյու Յորք Փոսթ» թերթում, զբաղվել լրագրողական հետաքննություններով*

Ձին Ռոբերտսը, լրագրողական հետաքննության ժանրում մասնագիտացած ամերիկյան ամենահանրահայտ թերթերից մեկի «Ֆիլադելֆիա Ինքուայերեր»-ի (Philadelphia Inquirer) խմբագիրն ասել է լրագրողի խնդիրն «այն չէ, որ քաղաքական գործչին բռնացնի շավարն իջեցրած պահին կամ օրենքի առանձին խախտում հայտնաբերի, այլ այն, որ բացահայտի այն փաստերը, որ մակերեսին չեն, օգնի ընթերցողին հասկանալ, թե ինչ է կատարվում մեր՝ օրեցօր բարդացող աշխարհում»

## ԻՆՉՊԵ՞Ս ԻՆՏԵՐՆԵՏԻՆԻՍ ԿԱՐԵԼ

Լրագրողական հետաքննությունը մի կողմից բնածին կողմնորոշում է և տաղանդ է պահանջում, մյուս կողմից սա գիտություն է՝ իր կանոններով ու օրենքներով Օրինակ լրագրողը երբեք չպետք է հրապարակման մեջ սեփական կարծիք հայտնի Հայտարարելու փոխարեն, թե այսինչը կաշառք է վերցնում, այնինչը զոհ է կամ քամուն է տալիս հասարակական բարիքները, լրագրողը պետք է ծանրակշիռ է փաստերի վրա հիմնված կառույց ստեղծի, որով ցույց կտա ընթերցողին խախտումների ամբողջ ընթացքը և մատնացույց անի հիմնախնդիրների աղբյուրը

Լրագրողն ինքը պետք է գործի օրինականության շրջանակներում և պահպանի բարոյականության չափանիշները, այլապես էլ ինչո՞վ պիտի տարբերվի նրանցից, ում գործունեությունն է հետաքննում.

Դ-ա նշանակում է, որ պետք է բացառվեն քաղաքականությունն ու անձնական շահագրգռությունները, հետաքննության առիթ կարող են լինել միայն ու միայն հասարակական շահերը

<sup>24</sup> Մայիլ Բեռլինը այս նյութը որպես դասախոսություն կարդացել է Մոսկվայում, ուր լրագրողների համար Անգլերենից թարգմանությունը ԲԱՊԼ-ի, 1995թ

Ոչ մի վարկային փաստաթուղթ, ոչ մի կաշառք տեղեկություններով յիմաց, ոչ մի անօրինական ներթափանցում մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ լրագրողը պատրաստ է անձամբ պատասխանատվություն կրել պատեց համար

Եվ ամենագլխավորը լրագրողը երբեք չպետք է բացահայտի իր տեղեկատվության աղբյուրը, եթե խոստացել է այն գաղտնի պահել Շուտ երկրներում, այդ թվում նաև ԱՄՆ-ում, լրագրողները հաճախ զերուսուսել են բանտ գնալ, բայց չեն մատնել իրենց տեղեկատվության աղբյուրներին Այդ կապակցությամբ բոլոր նյութերը, այդ թվում նաև նորուտետերը, ձայներիզները, այլ գրառումները, որոնք կարող են գաղտնի աղբյուրների բացահայտման պատճառ լինել, անհրաժեշտ է պահել ապահով տեղում եւ առանց այդ աղբյուրների համաձայնության երբեք չհանձնել իշխանություններին Եթե լրագրողը բացահայտում է իր աղբյուրը, ապա նրա հեղինակությունն անվերադարձ ընկնում է

## **Լրագրողական հեռախոսության հնարքները**

**Նախնական հետաքննություն:** Գրքեր, թերթեր, ամսագրեր կարդացեք, վավերագրական ֆիլմեր դիտեք, օգտվեք գրադարանային աղբյուրներից եւ համակարգչային տվյալների բազաներից

**Փաստաթղթեր:** Դրանք կարող են լինել բնագրեր, պատճեններ, լուսանկարներ, եւ տեղեկատվության էլեկտրոնային կրողներ Հնարավոր է, որ Ռուսաստանում դժվար կլինի պաշտոնական փաստաթղթեր գտնել, բայց երբեմն դրանք հնարավոր է պատճենել տարբեր գերատեսչությունների փաստաթղթերի արխիվներից, եթե դուք կարողանալու եք համոզել համապատասխան պաշտոնյային, որ դրա իրավունքն ունեւ եւ նրան վնաս չեք պատճառի, կամ էլ եթե նա համակրում է ձեր գործունեությունը Մի անգամ ես մի անբողջ ամիս Նյու Յորքի քաղաքային դատարանի արխիվում փաստաթղթեր էի պատճենում Իմ ողջ կեղտուրանքով, շարժումներով ու խոսքով ես հասկացնում էի ծառայողներին, որ իրավաբան եմ, թեւ ոչ մի անգամ այդ մասին բարձրաձայն չի ասել Ես նրանց հասկացրել էի, որ նորելուկ եմ այդ գործում եւ դատարանի փորձառու աշխատակիցների օգնության կարիքն ունեւ ‘Ի տարանջ լավ էր տրամադրել իմ նկատմամբ, եւ շատերն ուրախությամբ էին ինձ օգնում



Դատավճիռների շատ նյութեր եւ արտասահմանյան ֆիրմաների մասնակցությամբ շատ գործարքների մասին նյութերը հասանելի են տվյալների միջազգային բազաների միջոցով, նույնիսկ եթե դրանք չկան ռուսական արխիվներում Նման փաստաթղթեր ստանալուն կօգնեն օգտակար խորհուրդները Բայց հիշեք, որ նույնիսկ ԱՄՆ-ում, որտեղ օրենսդրությունը երաշխավորում է հասարակական արխիվներից շատերի մատչելիությունը, պաշտոնյաները, որոնք թաքցնելու բան ունեն, հրաժարվում են լրագրողներին տեղեկություններ տրամադրել Նման դեպքերում դուք կարող եք կամ դատի տալ նրանց, ինչը, սակայն, շատ ժամանակ ու միջոցներ է խլում, կամ գտնել մեկին, որը կարող է օգնել ձեզ, որին մատչելի են այդ փաստաթղթերը, եւ որը ցանկանում է տեսնել ճշմարտության հաղթանակը

**Համեմատական վերլուծություն:** Տարբեր տվյալների համեմատությունը նույնպես կարող է հետաքրքիր արդյունքների հանգեցնել, ասենք համեմատեք տարբեր վայրերում սպասարկման զանազան ձեւերի գները, դատավճիռների փոփոխման պատճառները, տարբեր վայրերում ֆինանսական խմբերի վճարած հարկերի գումարները, տարբեր դպրոցներում քննությունների արդյունքները, տարբեր հիվանդանոցներում հիվանդների բուժման վիճակագրությունը եւ այլն

**Դիտարկում:** Դիտարկեք, թե ծառայողները որքան ժամանակ են անցկացնում աշխատավայրում, որ քաղաքական գործիչն է հաճախ լինում այսինչ ֆիրմայի տնօրենի հետ, ինչպիսին են բանտում կալանավորների պայմանները եւ այլն Մանրակրկիտ դիտարկումները կարող են օգտակար լինել ձեր հրապարակումների համար Հնարավոր է, որ դուք ցանկանաք հետեւել ինչ-որ մեքենայի, շինարարական օբյեկտում լինել եւ լուսանկարել, որոնք ձեր դիտարկումները փաստաթուղթ կդարձնեն

ԱՄՆ-ում աղմուկ հանած որոշ լրագրողական հետաքննությունների ժամանակ լրագրողները ձեւացրել են, թե բոլորովին այլ մասնագիտություն ունեն Չիկագոյի թերթերից մեկի աշխատակից երկու լրագրող, օրինակ, սեփական սրճարան են բացել եւ սպասել, թե երբ իրենց կայցելեն իշխանությունների ներկայացուցիչները, տեսուչները, ոստիկանությունը կամ մաֆիան եւ կաշառք կպահանջեն կամ անօրինական գործարքներ կառաջարկեն (ասենք, երբ մատակարարը վաճառում է ապրանքը ցածր գնով, իսկ վաճառողն ավել փողը գրպանն է դնում այդ մասին ոչինչ չասելով «բոսսին») Այնուհետեւ լրագրողները գրեցին այն անօրինականությունների մասին, որոնք շրջապատում են նման հաստատությունները Պատահում է, որ լրագրողները հիվանդանոց են պատկույն, բանտ նստում կամ աշխատանքի են ընդունվում որեւէ ֆիրմա, ա-

սլա գրում այնտեղ իրենց կյանքի կամ աշխատանքի մասին Նման դիտարկումները կարող են լրագրողական հետաքննության համար տեղեկությունների աղբյուր հանդիսանալ, եթե ուսումնասիրվում է ամբողջ համակարգը, ոչ թե նրա առանձին հատվածները

**Հարցազրույցներ:** Որոշ հետաքննություններ սկսվում են վիստաթոթերից, նոր հետո մարդիկ են ներգրավվում՝ Կարող է լինել նաև հսկանակը, երբ սկզբում մարդկանց հետ են զրուցում, այնուհետև տեղեկությունները հարստացվում են փաստաթղթերով Բոլոր դեպքերում էլ հարցազրույցները պետք է խնամքով պլանավորված լինեն Լրագրողը պարտավոր է իմանալ, թե ինչ հարցեր է տալու, հոգեբանական ինչ մոտեցում է գերադասելի կիրառել, ինչպես նվաճել զրուցակցի բարեհաճությունը

Միշտ ձայնագրիչ օգտագործեք Դա կօգնի ձեզ հետևել զրուցակցի մտքերի ընթացքին եւ կազատի հետագա խնդիրներից, եթե հարցազրուցակիցը հրաժարվի իր խոսքերից Որոշ դեպքերում թույլատրվում է ձայնագրել զրույցը այդ մասին ոչինչ չասելով զրուցակցին Որոշ դեպքերում դա հակացուցված է Միշտ ձայնագրությանը զուգահեռ գրավոր նշումներ արեք Վկան, որը համաձայնել է զրուցել ձեզ հետ, ձայնագրության սկզբում կաշկանդվում է, հետո ընդհանրապես մոռանում է ձայնագրիչի գոյության մասին Եթե հնարավորություն չունեք ձայնագրել զրույցը, հրավիրեք ձեր գործընկերոջը եւ երկուսով զուգահեռ գրառումներ արեք անհրաժեշտության դեպքում դրանք հետագայում համեմատելու նպատակով Նման դեպքում լրագրողներից մեկը նստում է հարցազրուցակցի թիկունքում, մյուսը նրա դիմաց իր ամբողջ տեսքով ցուցադրելով, թե զրույցը որքան է հետաքրքրում իրեն

Անհամբեր վկաների հետ աշխատելիս ավելի լավ է ընդհանուր հարցեր տալ նպաստելով տեղեկությունների բնական ընթացքին, եւ հետաքրքրությանը լսել, նույնիսկ եթե զրուցակիցը սկսում է պատմել սևփական դժբախտությունների մասին Ձրույցի ընթացքում խոսքի ուղղարները մի լցրեք նոր հարցերով Թող վկան կամավոր կերպով շարունակի իր պատմությունը Եվ միայն այն դեպքում, երբ նա կավարտի իր ասելիքը, սկսեք հարցեր տալ զրույցը շրջելով ձեզ անհրաժեշտ կոտի մեջ Մտապահեք պատմության այն մասերը, որոնք վկան թուուցիկ սուցավ, ճշգրտող հարցերով նորից անդրադարձեք դրանց ստիպելով վկային լարել հիշողությունը

Լավագույն վկաներ կարող են լինել ձեզ հետաքրքրող մալույտ (ուսիկին կանայք, ընկերները, աշխատակիցները Հենրի Բիսևուկի գործունությունը հետաքննելիս (երբ նա դեռևս պետական թալուտուլար էր), ևս ամենաարժեքավոր տեղեկությունները ստացա այն մարկլուսնոյից,

ովքեր արդեն նրա հետ չէին աշխատում Այդ տեղեկություններն էլ իրենց հերթին օգնեցին ինձ պատասխաններ ստանալ նրանցից, ովքեր դեռևս աշխատում էին նրա հետ

Ձեր հարցազրուցակիցներից հարցրեք, թե իրենց կարծիքով ձեզ հետաքրքրող թեմայի մասին էլ ուրիշ ում հետ է անհրաժեշտ խոսել, եւ գրի առեք անուններն ու հեռախոսի համարները Իմացեք կարո՞ղ են, արդյոք, ասվածը հաստատող փաստաթղթեր կամ դրանց պատճենները տրամադրել, կամ ո՞վ կարող է օգնել ձեզ այդ հարցում Կան մարդիկ, ովքեր անպայման կճարեն անհրաժեշտ փաստաթղթերը, եթե տեսնեն, որ կասկածում եք իրենց խոսքերին

Եթե մարդիկ, ում հետ անհրաժեշտ է խոսել, չեն ուզում համագործակցել կամ վախենում են, օգնեք նրանց լիցքաթափվել՝ արտահայտելով ձեր համակրանքը, շողորորթելով, երաշխավորելով պաշտպանություն եւ գաղտնիություն Եթե զգում եք, որ ինչ-որ մեկն ուզում է ձեզ հետ խոսել, բայց վախենում է, աշխատեք «պատահաբար» հանդիպել նրան, ասենք խանութում կամ աշխատանքից տուն գնալու ճանապարհին Պատրաստ եղեք նույն մարդու հետ մի քանի անգամ հանդիպել, քանի դեռ նա չի սկսել վստահել ձեզ, չի դադարել վախենալ, կամ քանի դեռ ձեր համառությունը չի համոզել նրան, որ ավելի լավ է խոսի. քան անընդհատ հրաժարվի

Երբ մարդը տրամադիր չէ խոսել, աշխատեք նորմալ քննարկման մթնոլորտ ստեղծել, որպեսզի նա մոռանա հարցազրույցի մասին, աշխատեք տրամաբանորեն օգնել նրան փաստարկելու իր տեսակետը Կեղծ հայտարարությունները առանց չարության հերքեք կամ ճշգրտեք փաստերի օգնությամբ (այստեղ շատ կարևոր է զրույցին մանրակրկիտ նախապատրաստվելը)։

Ամենակարևոր է ամենամուրբ գործը վերջին հարցազրույցն է, երբ հավաքել եք տեղեկությունները եւ գրելուց առաջ ձեր հետաքննության օբյեկտին հնարավորություն եք տալիս արձագանքել ներկայացված վկայություններին.

## **Շեֆննության առարկայի ընտրությունը**

Երբեմն տվյալ հարցով հետաքննություն վարելու միտքը լրագրողին ինչ-որ մեկն է հուշում Երբեմն այդ գործում լրագրողներին ներգրավում է հետաքննությունների գործակալությունը Երբեմն էլ լրագրողն ինքն է իյուն հարց տալիս ինչո՞ւ են այսպիսի որոշում ընդունել, սա անարդարացի է. կամ ինչո՞ւ տվյալ կազմակերպությունը (դպրոց, դատարան, հիվանդանոց, սոբախանման ծառայություն) ինչպես հարկն է չի աշխատում

Այս հարցերի պատասխաններն, անշուշտ, միշտ չէ, որ կաշառակերության կամ չարաշահումների մասին են վկայում, բայց պրակտիկ չի հետևում, որ նման երեւոյթների մասին չարժե գրել Այն, որ մեկուսիւմ ոչ թէ մարդիկ են, այլ համակարգը, նույնպէս պակաս կարևոր խնդիր չէ

Հետաքննության արժանի փաստերը միշտ ավելի շատ են, քան ժամանակը եւ դրանով զբաղվելու հնարավորություն ունեցող մարդիկ Այդ պատճառով էլ միշտ ուշադիր ընտրեք հետաքննության թեման Համեմատեք ձեր ցանկություններն ու հնարավորությունները, հաշվի առեք եւ դաժ ժամանակը, անձնակազմը եւ տեղեկատվության աղբյուրները

Որպէս նախնական աշխատանք գործն սկսեք ուսումնասիրել միութեան մասին մի քանի կողմից, քանի դեռ չեք համոզվել, որ հնարավոր է խնդիրը լուծել եւ արժե դրա վրա ջանք թափել

Հաջորդ փուլում ստացեք խմբագիրների համաձայնությունը Ահա խմբագրին ներկայացվող հետաքննության առաջարկի մի օրինակելի նախագիծ

1 Նախագծի անունը

2 Նախագծի թեման օրինակ կատարվող աշխատանքի որակի հետաքննություն («Ինչպե՞ս է աշխատում դպրոցը») կամ ծառայությունների արժեքը («Ի՞նչ արժե աղբահանությունը մեր հարկատուների համար այլ վայրերի հետ համեմատությամբ»)

3 Ինչո՞ւ է ընթերցողներին հուզում տվյալ հիմնահարցը, ի՞նչ հնարավոր արձագանքներ կարող են լինել հրապարակմանը, ինչի՞ համար են անհրաժեշտ այս տեղեկությունները, ի՞նչ օգուտ կարող է ստանալ ձեր կազմակերպությունը նյութի հրապարակումից (հեռարձակումից)

4 Մեթոդները Ինչպե՞ս պետք է գործեն լրագրողները Ի՞նչ նախնական հետազոտություններ են անհրաժեշտ Զանի՞ հարցազրույց պետք է վարել Փաստաթղթերի առկայությունը Պե՞տք է, արդյոք, համեմատական վերլուծություն, դիտարկում կամ այլ մեթոդ կիրառել

5 Նախագծի արժեքը Անձնակազմի քանի՞ անդամ պետք է ընդգրկել Ի՞նչ վտանգներ կարող են ծագել

6 Հոդվածի հրապարակումից հետո սպասվող արդյունքներն ու հետևանքները Մեկ հոդված է լինելու, թե՞ հոդվածաշար Հրատարակման հետ ի՞նչ լուսաբանող (վիզուալ) նյութեր պիտի լինեն Ի՞նչ ոլորտների կամ գրաֆիկների կարիք կլինի Լինելո՞ւ են, արդյոք, կարևորագույն նյութեր Նախատեսվո՞ւմ են, արդյոք, մեկնաբանություններ Հետազոտության արդյունքներից հետո նախատեսվո՞ւմ է, արդյոք, շարունակություն Ուրիշ ի՞նչ կազմակերպություններ են ներգրավվելու (ուսուցիչներ)

## Կառավարության գործունեության հետաքննությունը

Տեղեկատվության աղբյուրներ

- ընտրությունների արդյունքները.
- բյուջեն
- ծախսային փաստաթղթեր
- շինարարության, կադրերի, աշխատանքի ընդունման փաստաթղթեր.

Հարցեր, որոնք կարող են ձեռք հետաքրքրել

- Ոստիկանությունն, արդյոք, խիստ միջոցներ կիրառո՞ւմ է, կաշառք վերցնո՞ւմ է
- Դատավորները հանցագործներին անպատիժ ազատ արձակո՞ւմ են
- Ինչպե՞ս են աշխատում պետական ծառայությունները փոստը, աղբահանները, դպրոցները, պոլիկլինիկաները
- Ո՞վ է անձնական շահ ստանում օրենքների ընդունումից

Որոշ հետաքննություններ կարող են նվիրված լինել հանրահայտ քաղաքական դեմքերի գործունեությանը Ընդ որում, անհրաժեշտ է օգտագործել նաև բաց փաստաթղթերն ու հարցազրույցները, որոնք կօգնեն փաստեր հավաքելուն Չի կարելի վիրավորել մարդուն նրան կաշառակեր կամ սրիկա կոչելով Յույց տվեք դա առանց այդ մասին խոսելու Պարզապես ասեք, օրինակ, որ քաղաքագլուխն անցյալ տարի իր աշխատավարձից ավելի շատ դրամ է ծախսել ձեր պնդումը հաստատելով փաստաթղթերով կամ ձեր աղբյուրների հայտարարություններով Նյութը պետք է շարադրվի երրորդ մարդու անունից

## Ինչո՞ւ գրել հոդվածը

Նախնական հետաքննությունն ավարտելուն պես հարկ է նստել եւ ինքդ քեզ հարց տալ «Ի վերջո ես ի՞նչ հայտնաբերեցի Ի՞նչը կարող է դառնալ իմ հոդվածի առանցքը, բուն էությունը»

Խոշոր հետաքննությունների արդյունքում գրեթե միշտ բազմաթիվ լրացուցիչ փաստեր են հայտնաբերվում Օրինակ, որ քաղաքագլուխը ոչ միայն կաշառակեր է, այլ նաև դավաճանում է կնոջն ու ծեծում երե-

խաներին Լրագրողը պետք է կամքի ուժ ունենա, որ կարողանա ստիպել ինքն իրեն հրաժարվելու քաղաքագլխի կեղտոտ սպիտակեղենը մեջտեղ բերելու գայթակղությունից՝ հանուն հետաքննության առավել կարեւոր մասի քաղաքագլխի կաշառվածության, որն ընդհանուր ոչինչ չունի նրա անձնական կյանքի հետ, այլապես ընթերցողների համար դժվար կլինի կարեւորն անկարեւորից տարբերելը Բացի այդ, անձնական կյանքի մասին մանրամասների հրապարակման դեպքում ընթերցողներին կարող է թվալ, որ լրագրողը քաղաքագլխի հետ անձնական հաշիվներ է մաքրում Պետք է օգտագործել միայն այն փաստերը, որոնք կարող են օգտակար լինել հասարակության շահերի տեսանկյունից

Հետաքննության ընթացքում հայտնաբերված ոչ գլխավոր մյուս ՓԱՍՏԵՐԸ (ասենք քաղաքագլուխը ոչ միայն գումարներ է վերցնում քաղաքային գանձարանից, այլ նաեւ պայմանագրեր է կնքում մի ֆիրմայի հետ, որի ոչ բացահայտ տերն իր սեփական եղբայրն է), պետք է հրապարակվեն հաջորդ օրը կամ գլխավոր մյուսի հետ միաժամանակ, բայց՝ առանձին, որպեսզի ընթերցողների համար հստակ լինի, թե որն է հիմնախնդրին առնչվող տեղեկատվությունը

Հաջորդ փուլում լրագրողը պետք է մնացած նյութը սյուժեի մեջ այնպես կառուցի, որ կարողանա ընթերցողին ցույց տալ հարվածի ուղղությունը, հետաքննության բուն էությունը Սյուժեն է որոշում, թե ինչպես պիտի լրագրողը, մեկը մյուսի վրա շարելով փաստերը, ՅՈՒՅՅ ՏԱ գլխավոր չարաշահումը (ասենք՝ «փետրվարի 4-ին վարձակալը քաղաքին փոխանցեց 30 000 դոլար, իսկ փետրվարի 5-ին քաղաքի հաշվի համարին հասավ 25 000 դոլար»):

Սյուժեի կառուցումից հետո իրադարձությունների տրամաբանական հետետողականության մեջ գրեթե միշտ բացահայտվում են որոշակի բացթողումներ, որոնք լրացնելու համար նոր հետազոտություններ, հարցազրույցներ ու փաստաթղթեր են անհրաժեշտ լինում

Երբ ամեն ինչ ավարտվում է, լրագրողը պետք է որոշի ինչպես մուտուցել նյութը

Հեղինակը կարող է սկսել գործի էությունն արտագույուղ հայտարարությամբ. «Թայմսի» վարած հետաքննությունը ցույց տվեց, որ քաղաքագլուխը վերջին երեք տարիների ընթացքում քաղաքային գանձարանից յուրացրել է առնվազն 30 000 դոլար»

Հոդվածը կարող է սկսվել նաև պատմությամբ կաշառակերտության դեպքի կամ, ասենք, այն մասին, թե ինչպես բժշկական օգնության կարիք ունեցող կինը օգնություն չստացավ, բանի որ համակարգը վատ է աշխատում

Պատմությունը պետք է շարադրել իրադարձությունների աճման կարգով այնպես, որ դրամատիկ դեպքերը հաջորդաբար հասցնեն գագաթնակետին:

Բոլոր դեպքերում հրապարակման տոնը պետք է հանգիստ լինի շարադրեք միայն փաստերը, պետք չէ որանց խառնել սարկազմ, չարություն, զայրույթ եւ դատաւիտում Լեզուն պետք է լինի չեզոք թող փաստերն իրենք խոսեն իրենց մասին, թող ընթերցողն ինքը գայրանա՝ կարդալով այդ փաստերը

Բոլոր հայտարարություններն ու պնդումները պետք է հղում ունենան սկզբնաղբյուրներին, ասենք «քաղաքապետարանի երեք աշխատակիցների հետ զրույցներից ստագած տեղեկությունների համաձայն . », «ըստ պաշտոնական փաստաթղթերի », «հարեւան քաղաքում համապատասխան ծառայությունների գների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ », « «Թայմսի» երկու աշխատակից տեսել են նրան խանութում, մինչդեռ նա պնդում է, որ այդ ժամին աշխատավայրում է եղել»

Յուրաքանչյուր եզրահանգում-ամփոփումից հետո դրեք պաշտոնատար անձի (ասենք քաղաքագլխի կամ հիվանդանոցի տնօրենի) մեկնաբանությունները իրադարձությունների մասին իր սեփական տեսակետով Այնուհետեւ անհրաժեշտ է հետեւել եւ ցույց տալ փողի տեղաշարժի կամ պաշտոնատար անձի գործողությունների ընթացքը որոշակի հետետողականությամբ Դրա համար օգտագործեք փաստաթղթեր, հարցազրույցներ, վերլուծական տեսություններ եւ այլն ցույց տալով ձեր իրավացիությունը, միեւնույն ժամանակ պաշտոնյաներին պաշտպանվելու հնարավորություն ընձեռնելով

Հիմնական նյութին անհրաժեշտ է կցել լուսանկարներ, փաստաթղթերի պատճեններ եւ լայն Հողվածը պետք է ուղեկցվի հասարակայնության եւ իշխանությունների արձագանքն արտացոլող լրացուցիչ հրապարակումներով եւ այլ նյութերով

Հետաքննությունը կարող է հասարակայնության մեջ քննարկումներ կամ իշխանությունների արձագանքը հարուցել, այնպես որ պատմությունը կարող է նաեւ շարունակություն ունենալ Նման դեպքերում թերթը (տվյալ լրատվամիջոցը) պետք է մասնակցի քննարկումներին այնքան ժամանակ, քանի դեռ գործը շարունակվում է

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ  
ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ՝  
ԹՈՒՅԼ ՇՏԱԼՈՎ, ՈՐ ՆՐԱՆՔ  
ՔԵՉ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

*Դեյվիդ Ռենդոլֆ. «Ունիվերսալ լրագրող» գրից<sup>25</sup>  
Ռենդոլֆը Լոնդոնի «Օբզերվեր» թերթի նախկին աշխատակիցն է,  
այժմ՝ լրագրության դասախոս*

Ամենատխտուր բանն այն է, երբ լրագրողն ասում է «Չեմ կարողա-  
նում պարզել» Գուցե իսկապե՞ս չի կարողացել Եվ տեղն ու տեղն էլ ա-  
վելացնում են «Որտեղ ասես չեմ հարցրել», որը շատ հազվադեպ է հա-  
մապատասխանում ճշմարտությանը 100-ից 99 դեպքում կարող եք  
միանգամայն համոզված լինել, որ նա ամեն տեղում չէ, որ հարցրել ու  
հետաքրքրվել է, եւ հավանաբար կստանալու երկու տեղ, որտեղ կա-  
րելի է հարցուփորձ անել Անհրաժեշտ տեղեկություններն, ամենայն  
հավանականությամբ. ինչ-որ տեղ ձեզ են սպասում **Ահա ոսկե կանոնը.  
մի հուսահատվեք, հարցրեք**: Եվ ինքնեթո՞ւ էլ կգարձանաք վրա հասած  
օգնությունից

## Հիմնական հետաքննությունը

Հիմնական հետաքննությունը նախ եւ առաջ անվիճելի փաստա-  
կան տեղեկություններն են, որոնք կամավոր կերպով ձեզ են տվել  
նրանք, ովքեր ունեն դրա իրավունքը: Շատ հաճախ լավագույն աղբյու-  
րը ամենաակնհայտ աղբյուրն է կառավարությունը, տարածաշրջանա-  
յին վարչությունները, պաշտոնական կազմակերպություններն ու մի-  
ջազգային կառույցները Միջազգային կազմակերպությունները հա-  
կապես վրիպում են ուշադրությունից ՄԱԿ-ն, օրինակ, ունի կոմիտե-  
ներ, որոնք կապված են աղետների, երկխառնի կենտամտարարակի,  
առողջապահության, զինարարման, մասնագիտական պատրաստու-  
թյան, տնտեսական զարգացման, բնակարանային հիմնախնայիրների,

25 Рендалл Д. Универсальный журналист// перевод с английского под ред  
В. Харитоновой. Бел. Новг. СП 6, 1999



շրջակա միջավայրի, օվկիանոսների, առետրի, փախստականների, խաղաղարար ուժերի, ազգաբնակչության, սննդամթերքի պաշարների, գյուղատնտեսության, ատոմային էներգիայի, քաղաքացիական ավիացիայի, աշխատանքի հիմնախնդիրների, նավագնացության, հեռահաղորդակցության, արդյունաբերության, հեղինակային իրավունքի, օդերևութաբանության... մի խոսքով, արեւի տակ գոյություն ունեցող ամեն ինչի հետ

Ակնհայտ է, որ տարբեր երկրներում ազգային կազմակերպությունները տարբեր չափով կրնառաջեն ձեզ Դ-ա մեծապես կախված է քաղաքական համակարգից եւ մշակույթից Իսկապես ժողովրդավարական հասարակարգում մարդիկ ամեն առիթով քվեարկելու լայն հնարավորություններ ունեն ազգային, մարզային եւ տեղական կառավարություններից սկսած մինչեւ տեղական հրշեջ ծառայության պետի ընտրությունները Այս հանգամանքը մարդկանց սեփական անձի հասարակական կարեւորության գիտակցություն է տալիս, ինչի հետեւանքով տեղեկատվության պահանջ է ձեւավորվում հասարակության կառավարման եւ այն մասին, թե ինչ է արվում նրա յուրաքանչյուր անդամի համար Եվ մարդիկ ցանկանում են, որ այդ ամենի մասին իրենց ուղղակիորեն տեղյակ պահեն

Նման պահանջմունքը պարտադրում է այդ երկրների կառավարություններին ավելի շատ տեղեկություններ տալ, քան կտային այլ հանգամանքներում (թեւեւ, այդուհանդերձ, պետք եղածից ավելի քիչ են տալիս) Համազգային եւ տեղական կառավարությունները հանրության հետ կապերի նույնիսկ մի ամբողջ արդյունաբերություն են ստեղծել, որի կոչումը հասարակական օգտագործման նպատակներով հատուկ սրբագրված տեղեկատվություն տարածելն է Տեղեկատվությամբ հարուստ մման հասարակություններում ընթերցողները պահանջում են, որ իրենց մատուցեն ոչ թե մշուշոտ տեղեկություններ, այլ իրադարձությունների տեսություններ, փաստեր եւ ճշգրտություն՝ Լրագրողը ձեռքի տակ այնքան նյութ է ունենում, որ մեղք է դրանք չօգտագործելը Երբեմն նույնիսկ ավելի հեշտ է գրել դրանց մասին, քան լռության մատնել

Եթե, իհարկե, համընդհանուր վերահսկողության ենթարկվող հասարակությունում չեք աշխատում, ձեզ համար կարող են խիստ օգտակար լինել նաեւ պաշտոնական եւ կիսապաշտոնական կազմակերպությունների աշխատակիցները, երբ կարծում են, որ ինչ-որ մեկը ինտաքրքրվում է իրենց աշխատանքով Այս նոտեցումը օգտակար է լինում նաեւ հիմնական հետազոտության համար երկրորդական որոշ աղբյուրների պարագայում դեսպանատների, առետրական ընկերությունների, համալսարանների եւ ինստիտուտների փորձագիտական խմբերի, ճնշման խմբերի, ոստիկանության, ինչպես նաեւ այլ թերթերի ու միջազգային լրատվական գործակալությունների

Նման կազմակերպությունները հաճախ օգտակար տեղեկատվության եւ, որ ամենակարեւորն է, հեռախոսահամարների գանձարան են լինում Մի անգամ, օրինակ, գործընկերոջս հետ փորձում էինք Ռ-ումինիայում գտնել ռուսական մշակույթի թանգարանը Մեր առաջին աղբյուրը գիտեր, թե որ գավառում է այն, բայց չգիտեր ոչ անունը, ոչ հեռախոսի համարը Մենք ապարդյուն փորձում էինք տեղեկություններ հայթայթել այն հաստատություններում, ովքեր պարտավոր էին իմանալ այդ մասին Վերջապես մեզնից մեկը զանգահարեց ոստիկանություն, մյուսը տեղական թերթի խմբագրություն Մի քանի րոպե անց մենք գիտեինք թանգարանի եւ անունը, ե՛ւ հեռախոսի համարը

Մեկ այլ անգամ Մոսկվայում եղած ժամանակ իմացանք, որ Սան Ֆրանցիսկոյում ներգաղթային իշխանությունները ձերբակալել են մի ռուս ուսուցչուհու եւ սպառնում են արտակարգ հանգամանքներում վտարել երկրից Լավ սյուժեի հոտ էր գալիս Սակայն մենք չգիտեինք ոչ ուսուցչուհու ներկայացուցիչների, ոչ ամերիկյան իշխանությունների հեռախոսահամարները Մոսկվայում ամերիկյան դեսպանատունն արդեն փակ էր, իսկ հողվածն անհրաժեշտ էր գրել մեկ ժամվա ընթացքում Մի քանի անհաջող փորձից հետո զանգահարեցինք «Ասոշիեթեդ պրես»-ի մոսկովյան գրասենյակ, պարզեցինք նրանց Սան Ֆրանցիսկոյի գրասենյակի համարները, զանգահարեցինք եւ իմացանք մեզ անհրաժեշտ բոլոր մարդկանց հեռախոսների համարները ներառյալ ուսուցչուհու ամերիկացի ամուսնունը եւ ի պաշտպանություն նրա հանդես եկողներինը

Հատկապես Արեւմուտքում (բայց ոչ միայն) առետրային կազմակերպությունները նույնպես կարող են օգտակար լինել Պատկերացրեք այսպիսի մի իրադրություն Երեկոյան ժամը 10-ին մոսկովյան ձեր գրասենյակում նստած իմանում եք, որ Ֆլորիդայում գինված կողոպուտի, զենքի մաքսանենգության կամ էլի ինչ որ բանի համար ձերբակալվել է մի ռուս Ի՞նչ կանեք Մոսկվայում ԱՄՆ դեսպանատունը փակ է, Մալամիում ռուսական հյուպատոսությունում հեռախոսազանգերին չեն պատասխանում, իսկ ՀՖԲ-ի (Հետաքննությունների ֆեդերալ բյուրո) Նյու Յորքի բյուրոյում, ինչպես նաեւ «Ասոշիեթեդ պրես»-ի գրասենյակում ոչինչ չգիտեն այդ մասին Մենք զանգահարեցինք Մալամիում «Անկրիքըն Էքսպրեսի» գրասենյակ, ներկայացանք որպես հաճախորդ (յու ճիշտ էր, բայց հակառակ պարագայում էլ նրանք, միևնույնն է, չէին ստուգի) եւ հարցրեցինք, րե չեն կարող արդյոք մեզ տեղական ոստիկանության, դատախազի եւ դատարանի հեռախոսահամարների տալ Այս դեպքում էլ շատ արագ կարողագանք պատրաստել հրապարակումը Նման իրավիճակներ, ինչ խոսք, հաճախ չեն լինում, բայց բերված օրինակները պատկերացում են տալիս այն մասին, րե ինչպիսի ճարակություն եւ հնարամտություն է պետք գուցարկել ձեր անվտանգության մասին հայտարարություն անելուց առաջ

Գրքերն ու տեղեկատուները նույնպես տեղեկությունների լավ աղբյուրներ են, բայց դրանցից պետք է զգուշորեն օգտվել Համոզվեք, որ ձեր ձեռքին ժամանակակից հրատարակությունն է, եւ որ հեղինակը տեղյակ է եղեք գրքի նյութին Գրավոր աղբյուրները պետք է գնահատել այնպես, ինչպես եւ մյուսները, կուրորեն չվստահել դրանց

Գրավոր աղբյուրների շարքում առանձնակի զգուշավորությամբ վերաբերվեք թերթերից կտրված նյութերին Եթե դրանք հենց ձեր թերթից են արված, առնվազն կարող եք իմանալ կամ ճշտել, թե արդյո՞ք այդ հրատարակումից հետո ճշգրտումներ, ուղղումներ կամ դատաքննություն չի եղել Շատ ավելի զգուշավորությամբ պետք է վերաբերել ուրիշների կողմից կտրատած նյութերին Փաստի հրատարակման հանգամանքն ինքնին չի կարող վկայել նրա ճշմարտացիությունը Ասվածը, բնականաբար, վերաբերում է նաեւ տեղեկությունների համակարգչային եւ նման կարգի այլ բազաներին

Տվյալների նման բազաները վերջին շրջանում ավելի ու ավելի լայն տարածում են ստանում լրագրողների շրջանում Ռուսաստանում, օրինակ, մի քանի տեղ կա, որտեղ լրագրողները կարող են տեղեկություններ ստանալ տվյալների այդ բազաներից Դրանցից լավագույնները Մոսկվայում եւ Սանկտ Պետերբուրգում գտնվող Ռուս-ամերիկյան մամուլի կենտրոններն են Այստեղ լրագրողները կարող են տեղեկություններ ստանալ տվյալների այնպիսի բազաներից, որոնցում հավաքված են ռուսական եւ արտասահմանյան մամուլում հրատարակված որոշակի թեմաներին առնչվող գրեթե բոլոր հոդվածները Այս ծառայությունները մատուցվում են կամ անվճար, կամ խորհրդանշական գումարների դիմաց

## **Կասկածելի աղբյուրներ**

**Լրագրողի մեջ տեղեկությունների երկու աղբյուր պետք է խկույն կասկած հարուցեն. բամբասանք ու ասեկոսեներ տարածողներն ու անկոչ այցելուները.**

Բայց սրանք կասկածելի աղբյուրների սոսկ ծալրահեղ տեսակներն են Սրանց կարգին կարելի է դասել բոլոր նրանց, ովքեր հստակ, ստուգման հնարավորություն ընձեռնող փաստեր չեն հաղորդում Կասկածելի են այն աղբյուրները, որոնց հաղորդած տեղեկությունների հրատարակ-

մանը թերևս կամ ամենայն հավանականությամբ հերքում | հաջորդելու | Կասկածելի կարող են լինել նաեւ այն տեղեկությունները, որոնք ձեզ են տալիս այդ լիազորությունը չունեցող մարդիկ կամ ձեզ են հասել տեղեկությունների արտահոսքի արդյունքում, ինչպես նաեւ այն տեղեկությունները, որոնք տալիս է դրա իրավունքն ունեցողը Հակառակ այն տպավորությանը, որ ուզում են ձեզ վրա թողնել պաշտոնյաները, հանդիպումից առաջ նրանց ամենեւին էլ ճշմարտության շիճուկ չեն ներարկում, սովորաբար ճիշտ հակառակն է լինում Եթե դուք այսպիսի աղբյուրների հետ եք գործ ունենում, մի մոռացեք հետեւյալ կանոնները

## **1. Ինքներդ ձեզ հարց ավելք որո՞նք են նրա շարժառիթները :**

Խիստ հազվադեպ է պատահում (թեեւ, այնուամենայնիվ, պատահում է), որ լրագրողներին փնտրելու մարդկանց շարժառիթները վեհ ու անշահախնդիր են լինում Սովորաբար նրանց նպատակը քաղաքական, տնտեսական կամ անձնական հակառակորդներին վնաս հասցնելն է Նրանց նպատակը կարող է որեւէ գործ առաջ տանելը (կամ մեկ այլ գործ խափանելը), վրեժխնդիր լինելը կամ մեկի նկատմամբ անբարյացկամություն հարուցելը լինի Այս կամ (մասն այլ մութ դրդապատճառներն են սովորաբար նրանց դրդում օգնել ձեզ Հարցրեք ինքներդ ձեզ (իբր իմիջիայլոց՝ նաեւ նրանց), որո՞նք կարող են լինել նրանց շարժառիթները Մարդկանց մեծ մասն անպայման այս կամ այն նյութի հրապարակումը ցանկանալու որոշակի պատճառներ է ունենում Դա ամենեւին էլ չի նշանակում, թե նյութը չպետք է հրապարակել, բայց այդ հանգամանքը պետք է ձեզ զգուշավորության մղի

## **2. Ինքներդ ձեզ եւ նրանց հարցրեք՝ ինչպիսի՞ն կարող է լինել տվյալ պատմության հակառակ երեսը՝**

Պատմությունը, որ հրամցնում են ձեզ սկզբում, իրականում շատ հազվադեպ է այդպես սեւ-սպիտակ կամ այդքան ճշգրիտ լինում Հարցրեք տեղեկությունների աղբյուրին, թե պատմությունն այլ կողմ չունի՞ արդյոք, իսկ առանձին մանրամասներ կամ ճշգրտող տեղեկություններ չի՞ մոռացել հայտնել ձեզ Եվ երբեք մի դադարեք այդ հարցը տալ ինքներդ ձեզ Իհարկե պատահում են խելացնոր, սարսափելի, անհեթեթ և բեռնյթներ, բայց փորձը ցույց է տալիս, որ սյուժեների մեծ մասն ամենեւին էլ այնքան հարթ չեն, որքան ուզում են ներշնչել մեզ տեղեկություններ հաղորդողները

### 3. Իրենց պաշտոնական դիրքի առումով նրանք իրավասու՞ են, արդյոք, իմանալ այն ամենը, ինչի մասին խոսում են:

Պատասխանը հաճախ կլինի «ոչ» Դրա հավանականությունը շատ ավելի մեծ է, եթե նրանք տեղեկություններ են տալիս «ոչ հրապարակման համար» Նման պայմաններում գտնվողները սովորաբար չարաշահում են իրենց դիրքը՝ ձեռացնելով, թե գիտեն ավելին, քան կա իրականում

Բայց նույնիսկ «կոնկրետ» աղբյուրները հաճախ հայտարարում են, թե տեղյակ են, մինչդեռ շատ քիչ գիտեն տվյալ նյութի մասին Նման մարդկանց հետ աշխատելիս առավել վտանգի են ենթարկվում այն լրագրողները, որոնք շատ քիչ գիտեն իրենց գրելիք նյութի մասին Դրա դասական օրինակը 1917 թվականի հեղափոխությունից հետո առաջին երկու տարիներին Ռուսաստանի մասին արեւմտյան լրագրողների գրած նյութերն էին Արեւմտյան լրագրողներին թույլ չէին տալիս Ռուսաստան մտնել, ուստի թերթերը նրանց գործուղում էին Ռիգա, որտեղից՝ Պետրոգրադից 300 մղոն հեռավորությունից լրագրողները փորձում էին նկարագրել Պետրոգրադում եւ Մոսկվայում տեղի ունեցող իրադարձությունները

Ռեպորտաժները խառնաշփոթ էին, բոլշևիկների նկատմամբ թշնամանքով լեցուն եւ հիմնականում սխալ Եվ դա զարմանալի չէր, քանի որ հոդվածների մեծ մասը հիմնված էր այն տեղեկությունների վրա, որոնք լրագրողներին հրամցնում էին նախկին ցարական գեներալներն ու պաշտոնյաները, «խաղից դուրս մնացած» քաղաքական գործիչները եւ տեղեկությունները փողով վաճառող «լրտեսիկները» Նրանք բոլորն էլ հայտարարում էին, որ «քաջատեղյակ են», բայց գրեթե ոչ մեկն էլ ոչինչ չգիտեր

Ռիգայից հաղորդվող սենսացիոն եւ կցկտուր ռեպորտաժները դրդեցին Ռուլտեր Լիպմանին եւ Չարլզ Մերցին կատարելու իրենց նշանավոր հետազոտությունը Նրանք ուսումնասիրեցին «Նյու Յորք Թայմս» ("New York Times") թերթում հրապարակված սյուրռեալիստական նյութերը, որոնք նվիրված էին 1917-1919 թվականների ռուսաստանյան իրադարձություններին Լիպմանը եւ Մերցը հայտնաբերեցին, որ այդ երկու տարիների ընթացքում թերթը 91 անգամ գրել է այն մասին, որ բոլշևիկյան կառավարությունն տապալվել կամ ուր որ է տապալվելու է, 4 անգամ այն մասին, որ Լենինն ու Տրոցկին պատրաստվում են փախչել, 3 անգամ որ Լենինն ու Տրոցկին փախել են Ռուսաստանից, 3 անգամ որ Լենինին քանտարկել են, եւ 1 անգամ՝ որ Լենինը սպանված է

Այդ թերթի ռեպորտաժները զավեշտական նոր բարձունքի հասան 1919 թվականի հոկտեմբերին, երբ հակաբոլշևիկյան ուժերը փորձում էին գրավել Պետրոգրադը Այդ հարձակման մասին հոկտեմբերի 18-ին

թերթը, «գլխավայր» ներկայացնելով իրադարձությունները, գրել էր «Հակաբուլճեիկյան ուժերը Պետրոգրադում են», ապա չորս օր անց «Հակաբուլճեիկյան ուժերը Պետրոգրադի մերձակայքում են» Միայն հոկտեմբերի 24-ին ճշմարտությունը հաղթեց. «Թայմսը» գրեց, որ «Խակաբուլճեիկյան ուժերը գործնականում դադարեցրին իրենց գոյությունը»

#### **4. Պնդեք, որ հնարավորության սահմաններում ձեզ փաստաթղթեր տրամադրեն:**

Հավանաբար գիտեք, թե նույնիսկ լրագրողի համար որքան դժվար է բարդ թեմաների եւ տեղեկությունների հիմնական էությունը քլթին հանձնելը, էլ չեմ ասում՝ այդ մասին բանավոր խոսելու մասին. Միշտ հիշեք այս ճշմարտությունը եւ զգուշավորությամբ ընդունեք զրուցակցի խոսքերը. Հարցրեք, թե գոյություն ունե՞ն, արդյոք, աղբյուրի խոսքերը հաստատող փաստաթղթեր Եթե ձեռքի տակ եղած օրինակը չեն կարող ձեզ տրամադրել, հարցրեք՝ կարո՞ղ եք այն պատճենել Եթե դա էլ ձեզ կմերժեն, թույլատվություն խնդրեք գոնե կարդալ այն զրուցակցի ներկայությամբ Եվ ծայրահեղ կասկածամտորեն ընդունեք, մի վստահեք այն աղբյուրներին, որոնք նույնիսկ դա են մերժում.

#### **5. Եթե կասկածում եք, տեղեկությունների մեկ այլ աղբյուր փնտրեք:**

Միշտ լսեք ձեր ներքին ձայնը եւ վստահեք ձեր ներըմբռնմանը, հատկապես եթե ձեզ կասկածելի են թվում աղբյուրը կամ տեղեկությունները Այն տարիներին, երբ գլխավոր խմբագիր էի, մի քանի անգամ խորապես զոջացել եմ ինչ-որ նյութ տպագրելու համար, եւ այդ բոլոր դեպքերում էլ հենց սկզբից՝ դեռ մինչեւ հրապարակումը, կասկածել եմ

Հարցրեք ձեր տեղեկատուին կարո՞ղ է, արդյոք, ինչ-որ մեկը հաստատել նրա ասածը Եթե դա քաղաքավարի անեք, եւ եթե նա ազնիվ է, անպայման կհամաձայնի ասել Որոշ պարագաներում, երբ նյութի շատ կարեւոր հարց է բարձրացնում, երբ այն խիստ բանավիճալի է կամ երբ շատ բարձրաստիճան մարդկանց է առնչվում, անպայման պետք է տեղեկությունների երկրորդ աղբյուր որոնել

#### **6. Ծուղակը մի ընկեք մի հավատացեք սյուժեին սոսկ այն պատճառով, որ ճշմարիտ լինելու դեպքում դրանից հրաշալի նյութ կստացվի:**

Դատավարություններ եւ կործանված կարիերաներ են արժենում այնպիսի հրապարակումները, որտեղ ենթադրություններն ավելի շատ են լինում, քան փաստերը Եղեք ճշգրիտ, րննախույզ, ստույգ պարզեք

նույնիսկ խճճված պատմության յուրաքանչյուր մանրամասն արդյոք ամեն ինչ այնպես՝ս է եղել, ինչպես ձեզ ասել են Չի կարելի հիմնվել այն ենթադրության վրա, թե «հավանաբար ամեն ինչ հենց այդպես էլ եղել է», կամ, որ ավելի վատ է «բոլորը գրում են, որ այդպես էլ եղել, ուրեմն դա ճիշտ է»

1989 թվականի աշնանը, երբ նախկին Չեխոսլովակիան կանգնած էր այն իրադարձությունների նախաշեմին, որոնք հետագայում «թավշյա հեղափոխություն» կոչեցին, երիտասարդ մի կլին լրագրողներին ասաց «Ոստիկանները ծեծելով սպանեցին Մարտին Սմիդ անունով մի ուսանողի» Դեպքը լայն արձագանք ստացավ Պրահայում մարդիկ սկսեցին այցելել այն փողոցը, որտեղ իբր գոհվել էր Սմիդը, եւ շուտով այն «սրբատեղի» դարձավ Նյութը հրապարակել էր «Ռոյթեր» գործակալությունը, իսկ «Ֆրանս-պրեսը» ավելացրեց, որ սպանվածները երեքն են եղել «Ատշիեյթեդ պրեսը» չկր հասցրել հրապարակում պատրաստել:

Կենտրոնական գրասենյակում դժգոհ էին Պրահայի բյուրոյից եւ պահանջեցին շտապ լրացնել բացթողումը Այն ժամանակ Պրահայում «Ատշիեյթեդ պրեսի» ներկայացուցիչը կիթառահար Անջեյ Խեյման էր, որը հաջողությամբ համատեղում էր լրագրությունն ու ռոք երաժշտությունը Հավատ չընծայելով իրենից առաջ Սմիդի մասին գրվածներին, Խեյմանը սկսեց պրպտել Իր բժշկուհի կնոջ հետ միասին այցելեց տեղական հիվանդանոցներն ու դիտարկեցին փնտրելով նրանց, ովքեր բուժել են Սմիդին, հերձել են դիակը եւ այլն Նա «Սմիդի գործով» նույնիսկ փոքրիկ ոչ մի ապացույց չգտավ, եւ մի բանի օր անց մրցակից գործակալությունները ստիպված եղան հայտնել, որ Սմիդը, ով էլ որ լինեք, ամենեւին էլ չէր մահացել Պրագայի այդ փողոցում

## **7. Որքան ավելի կրքոտությամբ է խոսում աղբյուրը, այնքան ավելի քիչ է հավատ ներշնչում:**

Սա ամենեւին էլ չի նշանակում, թե նա ստում է կամ չափազանցում, թեւ դա նույնպես չի բացառվում, այլ այն, որ մարդկանց չարժե շատ վստահել եւ ճշգրիտ փաստեր ակնկալել հատկապես այն թեմաների առնչությամբ, որոնց նկատմամբ նրանք անտարբեր չեն Նման աղբյուրներին ծայրահեղ զգուշությամբ հարցովորձ արեք: Նրանք սովորաբար փաստերը սեփական տեսությանն են հարմարեցնում եւ ակնհայտորեն անտեսում են այնպիսի կարեւոր փաստեր, որոնք կարող են հիմնովին փոխել ողջ պատմությունը

Սակայն զրուցակցի կրքոտությունը կարող է օգնել ձեզ Եթե բանավիճային հրապարակում պատրաստելու ընթացքում դուք երկու կողմից էլ իոսրային գրոհների եք ենթարկվում, ուրեմն արդեն մոտ եք ճշմար-

տությանը Ինչպես մի անգամ ասել է Հաիթիի «Ռադիո Անտուարյո»-ի աշխատակից Դենիել Մարսելինը, «Մենք գիտենք, թե երբ ենք մոտենում ճշմարտությանը Երբ մահացու սպառնալիքների երկա կողմից էլ գրեթե հավասարաչափ են հնչում»

## **8. Տեղեկություններ մի ընդունեք անանուն աղբյուրներից**

Դա չի նշանակում, թե անհրաժեշտ է խուսափել նրանց հետ գրուցելուց Բայց եթե դուք իսկապես ցանկանում եք հողված գրել, անանուն տեղեկատուն այդ նպատակի համար ամենահարմար աղբյուրը չէ Նու ընդամենը առիթ կարող է լինել, հուշել, թե որտեղ կարող եք նյութ փնտրել Բայց նույնիսկ այդ պարագայում պահանջեք, որ նա ներկայանա, պարզեք նրա ով լինելը Հակառակ պարագայում, եթե նյութի հրապարակմանը հերքում հետեւի կամ պարզվի, որ տեղեկությունների ճիշտ չէին, դուք ոչ մի հնարավորություն չեք ունենա ձեր աղբյուրը ներկայացնել դատարանում կամ որեւէ այլ տեղ

Ազգային խոշոր թերթերի խմբագրություններ հաճախ են անանուն տեղեկատուներ գալիս առաջարկելով քաղաքական գործիչների կամ նշանավոր այլ անձանց անձնական կյանքի մասին նյութեր Առավել հաճախ այդ աղբյուրները ծախսու կանայք են լինում, մախկին սիրուհիներ կամ սիրեկաններ եւ այլն Հաճախ նրանք չեն ցանկանում հայտնել իրենց ով լինելը, իսկ ավելի հաճախ տեղեկությունների դիմաց վարձատրություն են խնդրում (այդ մասին ստորեւ) Հաճախ նրանք պնդում են, որ իրենց խոսքերը հաստատող լուսանկարներ ու ձայնագրություններ ունեն Որքան էլ որ նրանց պատմությունները համոզիչ թվան, որքան էլ որ նրանք լավ տպավորություն թողնեն, երբեք մի հավատացել այդ պատմություններին, եթե չկան դրանք հաստատող լրացուցիչ փաստաթղթեր Մեծ է հավանականությունը, որ դուք ականա դատուար վրեժխնդրության կամ մեկ այլ կեղտոտ պատմության մասնակից

## **9. Երբեք մի վճարեք տեղեկությունների համար:**

Մա ավելի հեշտ է ասել, քան անել, քանի որ որոշ տեղերում պաշտոնյաները սովորաբար վարձատրություն են ակնկալում մամուլի հետ իրենց համագործակցության համար Բայց եթե հնարավոր է գործն անել առանց դրա, մի վճարեք Դժբախտությունն այն է, որ տեղեկությունների համար մարդկանց վճարելով դուք երկու անգանակալի երևույթ եք կյանքի կոչում Նախ նման գործելակերպը տեղեկությունների շուկա է ստեղծում, որը ամենաանսպասելի ոլորտներում շատ ավելի արագ կտարածվի, քան դուք կարող եք պատկերացնել Դեռ մի քանի տարի



առաջ հազվադեպ էր պատահում, որ մարդիկ ինչ-ինչ հանգամանքներում թերթերից փող պահանջեին Իսկ հիմա, լայն հրապարակում ստացած պատմությունները հիշելով, շատ-շատերն են փող պահանջում, այդ թվում նաեւ ինչ-որ իրադարձության մեջ պատահաբար հայտնված սովորական մարդիկ

Մի շարք երկրներում, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում եւ Ճապոնիայում, այդ գործելակերպը վարակի պես է տարածվում, քանի որ թերթերը պատրաստակամությամբ են վճարում Իսկ ի՞նչ է կատարվում այնուհետեւ։ Այդ մարդիկ պայմանագիր են կնքում թերթերից մեկի հետ՝ իրենց տված տեղեկությունների օգտագործման բացառիկ իրավունքի մասին, իսկ մյուս լրագրողների համար այն դառնում է անհասանելի։ Արդյունքում սահմանափակվում է տեղեկատվության ազատ տարածումը, իսկ աղբյուրներն իրենք զրկվում են ինչպես հարկն է հարցուփորձի ենթարկվելու հնարավորությունից Այսինքն միակ տարբերակը, որին վիճակվում է լույս տեսնել, նրանց հեղինակային տարբերակն է լինում Տեղեկատվության նման շուկան վնաս է հասցնում ճշմարտությանը Սա ոչ թե բարոյական, այլ գործնական խնդիր է Այսօր դուք վճարում եք մեկին տեղեկատվության համար, իսկ վաղը բողոքում եք, որ ուրիշ մարդիկ հրաժարվում են խոսել ձեզ հետ, քանի որ նրանց արդեն ուրիշ թերթեր են գնել

Երկրորդ եթե դուք վճարում եք, դա դրդում է տեղեկատվության աղբյուրին չափազանցնել կամ սրբագրել փաստերը Նա գիտե որքան հետաքրքիր լինի սյուժեն, այնքան շատ կստանա, ուստի հորինում է, զարդարում եւ «կյանք հաղորդում» իրեն հայտնի մի քանի փաստերին գործի դնելով երեւակայությունը Այդ վտանգն առավել մեծ է քաղաքական գործիչների եւ նշանավոր մարդկանց մասին պատմություններում Մի քանի տարի առաջ ամենատարածված թերթերից մեկը «Սան»-ը («The Sun») վճարեց մարմնավաճառությամբ զբաղվող մի արվամոլի՝ Էլթոն Ջոնի մասին տեղեկատվության համար Հոդվածը տպագրվեց, բայց նրանում եղած փաստերը չէին համապատասխանում իրականությանը, ուստի հետագայում թերթը ստիպված եղավ ոռք-աստղին վճարել մեկ միլիոն ֆունտ-ստեռլինգ բարոյական վնասի համար, եւ թերթի առաջին էջում ներում հայցել նրանից

**10. Զգուշացեք նաեւ այն աղբյուրներից, որոնք ջանում են ձեզ ձայներիզներ, տեսագրություններ եւ այլ բաներ վաճառել:**

Անսագեք բրիտանացու զգուշացմանը Նրա երկրում որոշ աչքի ընկնող թերթեր նյութերի համար այնքան բարձր են վճարում («The Sun»-ը տեղեկությունների համար ամեն տարի միլիոնավոր ֆունտ ստեռլինգ է

ծախսում), որ այնտեղ մի քանիսը նույնիսկ մասնագիտացել են լրագրողներին խաբելու մեջ եւ դրանով են վաստակում իրենց ապրուստը Նրանցից լավագույնը, թերեւս Ռոկի Ռայն անունով կինոկասկադյորն էր, նույն ինքը՝ Մեյջոր Թրեյսը, նույն ինքը Փիթեր Բյենսթայնը, նույն ինքը Դեյվիդ Օպենհեյմերը, նույն ինքը Ռոկո Սալվադորեն եւ Լլի մի շարք անուններ, որոնցով նա, սովորաբար, գործում էր Նա «The people»-ին (կիրակնօրյա բուլվարային թերթին) դեպի Հիմալայներ Լրսպեդիցիայի ժամանակ նարկոտիկներով եւ սեքսով ուղեկցվող գոփ գինարբուքների մասին նյութ էր վաճառել, մեկ այլ հրատարակության մի հորինվածք այն մասին, որ Գորբաչովը հրաժարական է տվել դեռ երկու տարի այդ իրադարձությունից առաջ, ինչպես նաեւ մի պատմություն, թե ինչպես հանրահայտ ֆաշիստ Մարտին Բորմանը ողջ եւ առողջ է եւ ապրում է Իսրայելում՝ «կիբուցիներում»

Նա 18 000 դոլար վաստակեց «թխելով» արքայազն Չարլզի եւ արքայադուստր Դիանայի իբր հեռախոսային խոսակցության վերժամումը Նրա դերասանուհի ընկերուհին զանգահարեց «The people»-ի խմբագրություն՝ ասելով, որ անվտանգության ծառայությունից իր ընկերը ցանկանում է խոսել արքայական ընտանիքի մասին, եւ տվեց Լոնդոնի հարուստ թաղամասում գտնվող մի հեռախոսի համար Երբ խմբագրությունից զանգահարեցին, լսավողը վերցրեց ընկերը՝ ներկայանալով որպես բրիտանական հեռախոսության աշխատակից Նա բացատրեց, որ իրենք «բզեզիկ» (լսող սարք) են դրել արքայազն Չարլզի հեռախոսի մեջ, եւ որ պատրաստ է վաճառել հեռախոսային խոսակցությունների վերժամությունները 7500 դոլարով «The people»-ը, ինչպես նաեւ մյուս թերթերը, զնեցին այդ տեղեկությունը Լրատվամիջոցների՝ ծուղակն ընկնելու պատճառներն ակնհայտ են. խաբեբաները նրանց հրամցնում են այնպիսի տեղեկություններ, որոնք մամուլը պատրաստ է ճշմարտության տեղ ընդունել Համոզելու նման արվեստին բուլլոյ լարերում հրաշալի են տիրապետում խաբեբաները

## **11. Նրբանկատ եղեք հակառակորդ կողմի նկատմամբ:**

Սա նշանակում է, որ անհրաժեշտ է հավասարակշիռ լինել ոչ միայն հետաքննության ընթացքում, հույվածը գրեթեց առաջ ու հետո, այլ նաեւ ազնիվ լինել մարդկանց նկատմամբ Եթե նրանց յննալուստում են կամ մեղադրում ինչ-որ բանում, դուր ոչ միայն պետք է հայտնիք այդ մեղադրանքների մասին, այլ նաեւ ժամանակ տար դրանց պատասխանելու «Տասը րոպե մտածելու համար» աւ լավագույն տարբերակը չէ, ինչպե՛ս, քանի որ հաճախ որքան էլ ժամանակ տար, միևնույն է, հրաժար-

վում են «մեկնաբանել» Սակայն պատահում է նաև այնպես, որ հակառակ կողմի պատասխանը ձեզ նոր տեղեկությունների եւ նոր շրջադարձի հնարավորություն է տալիս Խնդիրն այս դեպքում միայն արդարությունը չէ, այլ նաև անվտանգությունը

Եվ, վերջապես, մի շտապեք տպագրության հանձնել բարդ հոդվածները Բրիտանիայում այնքան մեծ է մրցակցության ոգին, որ միշտ մեծ է հոդվածը լրիվ չստուգված եւ ոչ լրիվ պատրաստ հրատարակելու գայթակղությունը Մենք բոլորս էլ եղել ենք նրա զոհերը Եթե ես օգտակար ինչ-որ բան եմ սովորել ամերիկացի լրագրողների հետ աշխատանքիս ընթացքում, դա հետելյալ կանոնն է հոդվածը պետք է տպագրել միայն այն ժամանակ, երբ ինքդ լիովին գոհ ես դրանից Մնացած ոչ մի բան չարժե, որ վտանգի ենթարկես ինքդ քեզ

## **12. Զգուշացեք, երբ ձեր «պատասխանատվության զգացումին» են դիմում:**

Լրագրողներին ուղղված գրաքննության ակնհայտ նշաններ ունեցող կոչերը «մտածեք այդ հրատարակման հետեւանքների մասին», «պատասխանատվություն հանդես բերեք» եւ այլն, հնագույն դասագրքային հնարանքներ են՝ ճշմարտությունը թաքցնել ցանկացողների համար Այդպիսի հորդորները սովորաբար վկայում են նյութի հավաստիության մասին, իսկ նա, ով տալիս է դրանք, չի ուզում, որպեսզի դուք գրեք այդ մասին Երբեք տեղի չտար Դուք լրագրող եք, ոչ թե պաշտոնական քարոզիչ Եթե չհաշվենք պատերազմական ժամանակը, երբ զորքերի տեղաշարժի մասին նախնական տեղեկատվությունը կարող է թշնամուն ձեռնտու լինել, դժվար է պատկերացնել այնպիսի թեմա, որը պետք է գիտակցաբար լռության մատնել Պատերազմական ժամանակներում էլ կառավարությունը կղիմի լրագրողների հայրենասիրական զգացմունքներին ազգային անվտանգության նկատառումներով լրագրողներին մոտ չթողնելով տեղեկատվությանն ու ճշմարտությանը Իսկ այն, ինչ հարկ կհամարի ասել, ամենայն հավանականությամբ ապատեղեկատվություն կլինի

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ՄԵԹՈԴՆԵՐ ՈՒ ՀՆԱՐՔՆԵՐ

*Ջոն Ուլմեն. «Լրագրողական հետախուզություններ  
ժամանակակից մեթոդներ ու հմարմներ» գրքից<sup>26</sup>*

## Դիմելով սոցիոլոգիայի օգնությանը

. Այս գլխում կքննարկենք այն հարցը, թե ինչպես կարելի է բարելավել լրագրողական նյութերի որակը՝ սովորաբար սոցիոլոգիայի ոլորտում կիրառվող չորս մեթոդների օգնությամբ. չընդգրկված դիտարկում (НЕВКЛЮЧЕННОЕ НАБЛЮДЕНИЕ), համընդհանուր հարցում (перенос), հարցում (опрос) եւ այս մեթոդների համադրումը:

## Չընդգրկված դիտարկում

Ենթադրենք ձեզ հետաքրքրում է, թե տեղական պատկերասրահում որ նկարն է առավել ժողովրդականություն վայելում Ինչպե՞ս կարող ենք պարզել այդ

Կարելի է մի քանի օր կամ մի քանի շաբաթ շարունակ թանգարանի ելքի մոտ կանգնել եւ հարցուփորձ անել դուրս եկող այցելուներին՝ Հարցման ընթացքում պետք է որոշակի կանոններ պահպանել եւ իմանալ մեթոդաբանությունը Մինչդեռ հարցման փաստն ինքնին կարող է ազդել պատասխանների վրա եւ խեղաթյուրել իրական պատկերը: Հարցումները հետազոտության առավել թանկ մեթոդներից են, բազի այդ երկար ժամանակ են պահանջում: Մեր խմբագիրները հազիվ թե համաձայնեն, որ լրագրողները թերթին հետաքրքրող հարցերի պատասխանները նման ձեով ձեռք բերեն

Կարելի է անձամբ գնալ թանգարան եւ փորձել պատասխաններ գտնել դիտարկման միջոցով, բայց այս դեպքում նույնպես հարցեր են ծագում Նախ եթե դուք առաջին անգամ եք թանգարան գնում, ժամանակ կպահանջվի հարմարվելու համար Երկրորդ մի սրահում այցելուներին դիտարկելով չեք կարող իմանալ, թե ինչ է կատարվում մյուս սրահներում

---

26 Джон Уллмен "Журналистские расследования современные методы и техника Национальный институт прессы Изд-во "Волюнта", Москва 1998

Դուք կարող եք հարցնել մարդկանց, ովքեր ի պաշտոնն պարտավոր են իմանալ այդ հարցի պատասխանը, օրինակ գլխավոր ֆոնդապահին, բայց ուրիշի խոսքերով ներկայացված տեղեկատվությունը միշտ չէ, որ համոզիչ է:

Կարելի է ուշադրություն դարձնել նաև այն բանին, թե որ նկարի առաջ է մանրահատակն առավել մաշված Սա լավ միջոց է, որ կարող է ընդունելի պատասխան տալ մեր հարցին

Սա չընդգրկված դիտարկման օրինակ է Կարծում ենք, որ լրագրողական շատ հետաքննություններ են չընդգրկված դիտարկման վրա հիմնվում: Ի վերջո, փաստաթղթերի ուսումնասիրությունը նույնպես չընդգրկված դիտարկման օրինակ է Այն հետազոտողի կողմից ակտիվ միջամտություն չի պահանջում, քանի որ լրագրողը ոչ մի կապ չի ունեցել փաստաթղթի ստեղծման հետ, իսկ ձեր կողմից փաստաթղթի ուսումնասիրությունը չի առնչվում ոչ կազմակերպության, ո՛չ էլ անձերի հետ, որոնց այն վերաբերում է Փաստաթղթերը ստեղծված են եւ թողնված մեզ համար, ինչպես երկրաբանական շերտերն են շատ բան ասում երկրի վրա քայլողներիս

## **Չընդգրկված դիտարկման վրա հիմնված ծրագիր**

«Հանցագործության վայրում գտնված մատնահետքերի նման՝ «Էնդրյու» մրրիկի պատճառած բազմաթիվ ավերածություններն օգնեցին բացահայտել շինարարական թերությունները Ֆլորիդայի ավերին:

Մրրիկի ավերիչ հետեւանքները բացահայտվեցին «Մայամի Հերալդ» թերթի անցկացրած հետաքննության միջոցով, որը համակարգչային մշակման ենթարկեց հասցված վնասների մասին տեսուչների կողմից կազմված 60 000 փաստաթուղթ

Համակարգչային քարտեզի վրա գունավոր կողով ցուցադրված էր, թե ինչպես են դիմացել մրրիկին 420 բնակելի շրջաններ Երբ քամու տարածման գոտիների քարտեզը համադրվեց մրրիկի հասցրած վնասների չափերը ցույց տվող քարտեզի հետ, ակնհայտ դարձավ, որ առավել շատ վնասված շինություններից շատերը հեռու են եղել քամու առավելագույն ուժգնության հոսանքներից, իսկ նորակառույց շինություններն ավելի շատ են վնասվել, քան հները

Ավելի տխուր է այն փաստը, որ 1980-ից հետո կառուցված տները 67%-ով ավելի շատ են ավիրվել, քան հին տները»

Այսպես էր սկսվում թերթի 16 էջերում տպագրված հասուկ ռեպորտաժը, որ պատրաստել էին Ջեֆ Լինը, Սթիվեն Դոյգր և Լիզա Գևտերը Այս հոդվածաշարը որակյալ լրագրողական նյութ պատրաստելու ընթացքում ոչ ցցուն (ոչ օբտրուզիվ) չափումների կիրառման հրաշալի օրինակ է: Հոդվածաշարը նպաստեց, որ «Մայամի Հերալդը» 1993 թվականին Պուլիտցերյան մրցանակ ստանա:

Ահա մի քանիսն այն եզրահանգումներից, որոնց հանգեց թերթի այլ հետաքննության արդյունքում.

- Բազմաթիվ վկայություններ կան տեսչական վերահսկման ենթակա շինարարական այնպիսի նորմերի խախտման, որոնք նախատեսված են պաշտպանելու բնակիչներին հենց այնպիսի ավերածություններից, ինչպիսիք պատճառեց «Էնդրյու» մրրիկը
- Մի քանի խոշոր կապալառուների կողմից կատարված կառուցապատման 8 շրջանների մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտեց, որ շատ տներում բազմաթիվ կառուցվածքային թերություններ կան, որոնց հետևանքով դրանք մրրիկի կողմից հեշտ խոցելի էին դարձել
- Շինարարական բումի/իրարանցման պայմաններում շինարարության գծով տեսուչները ստիպված են եղել քառապատկել իրենց գործունեության օպտիմալության չափանիշը.

Հատուկ ռեպորտաժի հեղինակները եզրահանգումներից շատերն արել էին մի քանի խոշոր տվյալների բազաներում եղած տեղեկատվության համակարգչային վերլուծության հիման վրա, այդ թվում՝

- Դեյդ օկրուգի տվյալների հատուկ բազան, որտեղ մրրիկի հասցրած վնասների ստուգման արդյունքների 50 000 փաստաթուղթ կար.
- Դեյդ օկրուգի տվյալների բազան, որտեղ անշարժ գույքի հարկային ամփոփագրերն էին, այդ թվում տվյալներ դրանց տեղի, տեսակի (տուն՝ մեկ ընտանիքի համար, բազմաբնակարան տուն, կոնդոմինիում եւ այլն), կառուցման թվականի մասին - ընդամենը 100 000 փաստաթուղթ
- Դեյդ օկրուգի շինարարական տվյալների ունիվերսալ բազան, որտեղ տեղեկություններ կային շինությունների և պրանցում օգտագործված շինանյութերի մասին
- Դեյդ օկրուգի կառուցապատման տվյալների բազան, որտեղ 7 միլիոն փաստաթուղթ կար, այդ թվում 1987 թվականից ի վեր կառուցապատման թույլտվություններն ու վերստուգման արդյունքները, ինչպես նաև տվյալներ շինարարության կապալառուների, ճարտարապետների, ինժեներների և տեսուչների մասին

Մրրիկի հասցրած վնասների մասին տեսուչների կազմած եզրակացությունները տարբերվում էին մանրամասնության աստիճանով, սակայն բոլորն էլ ընդգրկում էին երեք պարտադիր գնահատականներից մեկը «բնակության համար պիտանի է», «առանց վերանորոգման բնակության համար պիտանի չէ», «ավիրված է»

Տեսչական ստուգման գոյություն ունեցող փաստաթղթերն ընդգրկել էին աղետի գոտում եղած շինությունների երկու երրորդը Հասցեների մոտ 25%-ը ստուգման ակտերում կամ բնակելի շինություններ չլին, կամ էլ չէին համապատասխանում հարկային ամփոփագրերում եղած հասցեներին Այդուհանդերձ, վիճակագրական մի քանի փորձարկումները ցույց տվեցին, որ համընկնող հասցեներն արդեն ներկայացուցչական (ռեպրեզենտատիվ) ընտրանք կարող են լինել

Խմբագրության կենտրոնական համակարգչի հիշողության մեջ ներմուծվեցին տվյալների չորս բազաներում մագնիսական ժապավենի 45 փաթեթների մեջ եղած տվյալները

Համակարգչային վերլուծության արդյունքում տարբեր կարգի ավերածությունները համեմատվում, համադրվում էին այնպիսի փոփոխական գործոնների հետ, ինչպիսիք էին օբյեկտի հեռավորությունը մրրիկի էպիկենտրոնից, օբյեկտի արժեքը, շինության եւ հողամասի մակերեսը, տան կարգը (կատեգորիան), շինանյութերը, տան ճակատային մասի դիրքը (հյուսիս, հարավ, արեւելք, արեւմուտք) եւ կառուցման տարեթիվը

Բացի այդ, կապալառու ընկերություններին թույլատվություններ տվող քաղաքաշինության հանձնաժողովի վրա շինարարական ընկերությունների ազդեցության բացահայտման նպատակով վերլուծվել էին այն քաղաքացիների համակարգչային ցուցակները, որոնք 100 դոլարից ավելի գումար էին մուծել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջադրված թեկնածուների նախընտրական հիմնադրամներում 8,3 մլն ընդհանուր գումարով 17 200 մուծումներից առանձնացվել էին այն նվիրատվությունները, որոնք առնչվում էին բնակարանային շինարարության հետ կապ ունեցող ընտրված թեկնածուներին

Մրրիկի հասցրած վնասների եւ ընտրարշավի համար ներդրումների համակարգչային վերլուծությունը կատարվել էր ունիվերսալ համակարգիչների համար նախատեսված SAS վիճակագրական ծրագրի միջոցով Օժանդակ աշխատանքների համար կիրառվել էին Atlas-GTS եւ Statistica ծրագրերը Վերլուծության համար բնութագրիչ մեծությունները (պարամետրերը) տալիս էր հողվածաշարի համահեղինակներից մեկը՝ թերթի խմբագրի հետաքննությունների գծով տեղակալ Ս Դոյզը

## Համընդհանուր հարցում

1984 թվականին «Սթար-Թրիբյուն» թերթի թղթակիցներ Թոմ Համբուրգերն ու Ջո Ռիգերտը հետաքրքրվեցին Մինեսոտա նահանգում պետական պատվերների տեղավորման կարգով Ես խմբագրում էին այդ թեմայով նրանց նյութերը Ըստ կարգի պետական պատվերների 10%-ը պետք է տրվեն ազգային փոքրամասնություններ ներկայացնող և կանանց կողմից գլխավորվող կապալառու-ընկերություններին Այս կարգը մտածվել էր հաղթահարելու համար այն իրավիճակը, երբ շինարարական կապալները սպիտակ տղամարդկանցից բացի ուրիշ ոչ մեկին բաժին չէին հասնում

Ռիգերտն ու Համբուրգերը կապալների բաշխման գործընթացում բազմաթիվ խախտումներ հայտնաբերեցին Ամեն տարի միլիոնավոր դոլարներ էին գնում դրածո ընկերություններին, որոնք միայն անունով էին պատկանում փոքրամասնության ներկայացուցիչներին կամ կանանց Ստանալով գումարի 10%-ը նրանք փոխանցում էին գումարը ենթակապալառուներին, որոնք սպիտակ տղամարդկանց կողմից գլխավորվող նույն այն ընկերություններն էին

Հարցերից մեկը, որին ուզում էինք պատասխան ստանալ, այն էր, թե ինչպես են վերաբերվում փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից ղեկավարվող ընկերությունները դրածոներին, արդյո՞ք դրանց գոյությունը նրանք լուրջ խնդիր են համարում

Այս հարցին պատասխան ստանալու համար մենք թերթի հետազոտական բաժնի հետ միասին հարցաթերթ պատրաստեցինք Հետազոտողները կապ հաստատեցին Մինեսոտալիսում գրանցված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին պատկանող բոլոր 400 ընկերությունների հետ Հարցաթերթում, մասնավորապես, խնդրվում էր ըստ կարեւորության դասավորել կապալ ստանալուն խանգարող այնպիսի խոչընդոտները, ինչպիսիք են դրածո ընկերությունները, բյուրոկրատական ձեւակերպումները, կապիտալի առկայությունը, շինարարական աշխատանքների փորձը, ընկերության մեծությունը Բացի այդ, այդ ընկերություններին մենք խնդրել էինք անունները չհրսւպայուսկկու պայմանով հայտնել, թե երբեւէ դրածո ընկերության դերում հանդես գալու առաջարկություն ստացե՞լ են, արդյոք

Հետազոտական բաժինը բուռն գործունեություն ծավալեց և հասավ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից ղեկավարվող գրեթե բոլոր ընկերություններին՝ բացառությամբ երկու-երեքի Կապալառուներից մեկը մի վիետնամցի, հեռախոսային գրույցի կեսին հանկարծ հիշեց, որ ինքն անգլերեն չի հասկանում Իսկ երբ մենք քարգմանիչ գտանք, մեր գրուցակիցը հավանաբար մոռագուլ նաեւ մայրենի լեզուն էր ցած դրեց լսափողը



Երբ հարցաթերթի պատասխաններն ամփոփվեցին, մեր հետազոտողները հայտնեցին, որ կապալառուները պետական պատվերներ ստանալու գործում եղած խոչընդոտների շարքում դրածո ընկերությունների գոյությունը վերջին տեղում են դասել Մենք ցնցված էինք Մի քանի հազար դոլար ծախսելուց հետո իմանում ենք, որ փոքրամասնության ներկայացուցիչներին այնքան էլ չեն հուզում դրածո ընկերությունները։ Բայց, այնուամենայնիվ, մենք պարտավոր էինք այդ մասին հայտնել ընթերցողներին Ես արդեն մտքումս ապագա հոդվածի առաջին պարբերությունն էի մտմտում, երբ եկավ հետազոտական խմբի ղեկավարն ու ասաց, որ սխալ է տեղի ունեցել. հարցման ենթարկվածների պատասխանները պատահաբար գլխիվայր են շրջվել, եւ որ փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից պետպատվերներ ստանալու համար ամենամեծ խոչընդոտը հենց իրենք էլ համարում են դրածո ընկերությունների գործունեությունը։ Ավելին, տասնյակ նման ընկերությունների առաջարկել են ստանալ պատվերները՝ դրանք հետագայում մենաշնորհատեր-ընկերություններին փոխանցելու պայմանով

Համընդհանուր հարցման արդյունքները զգալիորեն օգնեցին մեզ հաստատելու մեր նախնական եզրահանգումները

## Հարցում

1984 թվականին «Սթար-Թրիբյուն» թերթի լրագրող Ջեյն Սմետանկան, որ մասնագիտացել էր կրթության հիմնախնդիրներում, եւ թերթի թղթակից Փոլ Մաքենրոուն նյութեր էին հավաքում Մինեապոլիս-Մենք Պոլ ազումերացիայում թմրամոլության վիճակի մասին հոդվածաշարի համար։ Այս հոդվածաշարը նույնպես ինձ վիճակվեց խմբագրել

Պարզվեց, որ միայն գետով իրարից բաժանված այս քաղաքների շատ ղեռահասներ թմրանյութեր են օգտագործում Ռոպեսզի այս փաստն ավելի ակնառու ցույց տանք ընթերցողներին, մենք երկու քաղաքներում հարցում արեցինք ավելի քան 5000 դպրոցականների Դպրոցականների շրջանում հարցում անցկացնելու համար թերթի հետազոտական խմբի հետ համատեղ մենք հարցաթերթ մշակեցինք

Ռոպես օրինակ վերցրեցինք Միչիգանի համալսարանում մշակված հարցաթերթը բազմաթիվ «գտող» հարցերով, որոնք սովորաբար նախատեսվում են այն նախատակով, որ հարցման մասնակիցները չփորձեն մոլորեցնել հարցում վարողներին Ինձ հատկապես հետաքրքրում էր, թե թմրանյութեր օգտագործող պատանիներն ինչու են այդ անում, եւ թե ինչու են խուսափում դրանից մյուսները

Մենք եկանք այն եզրակացության, որ բնրանյութիկից խոտաւիող  
ուպրոցականների վարքի լավագոյն ցուցիչը խիստ ծնողներն ու կրտսե  
կան ուժեղ համոզմունքներն էին Մենք համոզվեցինք նաև, որ այլու  
յային կախվածությունը դուռ է բացում մարիխուանայից կախիածու  
րյան համար, իսկ սա էլ իր հերթին հանգեցնում է կոկաինից և ավելի ու  
ժևը թմրանյութերից կախվածության

Մեր հետազոտության մեջ լուրջ երաշխավորություններ էին տրվում  
ուպրոցականների շրջանում թմրամոլության կանխման համար Շատ  
կողմերով սա շատ ավելի բովանդակալից հողվածաշար դարսւ եկավ,  
րան թմրամոլության մասին առավել ավանդական հրապարակումների  
այն բանի շնորհիվ, որ հարցաթերթին 5000 դպրոցականների պատաս  
խանները մեզ հիմնախնդրի մեջ խորանալու հնարավորություն տվեցին

Հողվածաշարը մի բանի օր շարունակ չէր իջնում թերթի առաջին է  
ջից Սա անգին նյութ էր, որ թերթի վրա հազար դուլար էր նստել

Եվ այսպես, ո՞րն է տարբերությունը համընդհանուր հարցման  
(ոքընսս) եւ հարցման (օրօս) միջեւ Համընդհանուր հարցումը ընդ  
գրկում է ձեր նպատակի համար հարցման ենթարկվող պոպուլյացիան  
ամբողջությամբ (ընդհանուր ընդգրկումը (генеральная  
совокупность), մինչդեռ հարցումը սահմանափակվում է ընտրանքով  
և հավակնում է այդ ընտրանքի ներկայացուցչականության (репре-  
зентативность), այսինքն ամբողջ բնակչության հարցմանը համա-  
պատասխանությամբ

Ինչպես ցույց տրվեց վերոհիշյալ երկու օրինակներում, հաշվեգրումն  
ու հարցումը կարող են զգալիորեն բարելավել լրագրողական նյութերի  
որակը, և այս երկու մեթոդները հարկ է ներմուծել ձեր մեթոդների զինա-  
նոցն ու անհրաժեշտության դեպքում օգտվել դրանցից

## **Հարցումներին առնչվող մի քանի նախազգուշացում**

Համընդհանուր հարցում անցկացնելու համար մաթեմատիկա յալ  
իմանալու կամ փորձառության կարիք չկա Մինչեռ բոլորովին այլ է  
հարցման պարագան

Երբ ՁԼՄ-ները հարցումներն անցկացնում են մասնագետների միջո  
ցով, նրանք ընթերցողներին, հեռուստադիտողներին կամ ուղիորտողն  
րին տեղեկացնում են, որ հարցումը կատարվել է «գիտական մեթոդն  
րով» Իհարկե, հարցման արդյունքների վերլուծության համար տնկրա  
" ու մաթեմատիկան գիտություն է, այսինքն վկայակոչվում է գիտական

մեթոդներն» առնչվում են բուն մաթեմատիկային եւ նրա կիրառմանը.

Մնացած ամեն ինչը, որ ջանում են ներդնել այս տերմինի մեջ, լիովին անհեթեթություն է Բնակչության հարցման ենթարկվող մասի ընտրությանը, հարցերի ձեւակերպմանը, արդյունքների մեկնաբանությանն առնչվող մի ամբողջ գիտություն է ստեղծվել. Բայց, ինչպես ասում են, ցանկացած առարկա, որի անվան կողքին «գիտական» բառն են ավելացնում, իրականում հեռու է գիտական լինելուց

Սա չպետք է ընկալել այն իմաստով, թե գիտակ ձեռով անցկացված յուրաքանչյուր հարցում «ճշգրիտ չէ» կամ «սխալ է» Քաղաքական արշավների ընթացքում անցկացված հասարակական կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ հնարավոր է ճշտորեն կանխատեսել արդյունքները՝ պայմանով, սակայն, որ դրանք ընտրություններից ոչ շատ առաջ անցկացվեն եւ հարցման ենթարկվեն այն մարդիկ, որոնք պիտի քվեարկեն.

Շատ կանոններ կան, որոնք պետք է պահպանել հարցերի ձեւակերպման, հարցումների անցկացման եւ արդյունքների ամփոփման ժամանակ: Բայց երբ դուք կտվորեք չխախտել այդ կանոնները, շատ շուտով կհասկանաք, որ հարցում անցկացնելը ոչ թե գիտություն է, այլ արվեստ, եւ որ դրանք գրագետ անցկացնելու համար ոչ թե սնգիր անել է հարկավոր, այլ՝ փորձ.

Այդ կանոնների մասին լավագույն գիրքը՝ «Հասարակական կարծիքի հարցման տեղեկագիր խմբագրությունների համար», գրել է Ինդիանայի համալսարանի պրոֆեսոր Քլիվլենդ Ուիլիսյթը եւ Դեյվիդ Ուիվերը Այդ ոչ մեծ գրքույկը լույս է տեսել 1980 թվականին Թերթերի խմբագիրների ամերիկյան ընկերակցության (American Society of Newspaper Editors) կողմից (այժմ այն կոչվում է Թերթերի ազգային ընկերակցություն - National Newspapers Association) Հեղինակներն իրենց առջեւ նպատակ են դրել սովորեցնել, թե ինչպես խուսափեք ամեն օր ՁԼՄ-ների խմբագրությունները հեղեղող հասարակական կարծիքի բազմաթիվ հարցումների թակարդն ընկնելուց

Սա շատ ավելի լավ մոտեցում է, քան ձեզ ինքնուրույն հարցումներ անցկացնել սովորեցնելը, ինչն անում են լրագրության շատ ֆակուլտետներ Լրագրողին հասարակական կարծիքի հարցում անցկացնելու առաջարկ անելը նույնն է, թե մամուլի օրենսդրության դասընթաց անցած լրագրողին առաջարկես զրպարսության մասին դատավարությունում հանդես գալ որպես դատապաշտպան

Այնուամենայնիվ, խմբագրությունները ստիպված են գլուխ հանել զանազան հարցումների արդյունքներով լի տեղեկագրերի այսպես կոչված՝ «նյուս-ռեյլինգների» հոսքից Հնարավոր է, որ դրանց իմաստն ընկալելու համար հարկ կլինի վերադառնալ համալսարան եւ սոցիոլոգիայի մեթոդաբանության դասընթաց անցնել Սակայն այդ պարագայում էլ դասախոսի հետ պետք է պայմանավորվել հետեւյալի մասին

- Դուք հիմնական ժամանակն ուզում եք ծախսել ոչ թե հարցում

- անցկացնելու, այլ արդյունքների մեկնաբանության վրա
- Դուք ուզում եք դասընթացը լսել անգլերեն (մայրենի-ձ ր ), ոչ թե վիճակագրության լեզվով
  - Դուք ցանկանում եք ստանալ հարցումների արդյունքների մեկնաբանության մասին երաշխավորվող գրականության ցանկ և ամեն շաբաթ հանդիպել դասախոսի հետ պարզաբանելու համար, թե ինչպես մեկնաբանել այդ երաշխավորությունները
  - Հենց սկզբում պայմանավորվեք, որ դասընթացի ավարտվելու պես ձեզ «հինգ» նշանակեն:

## Մեթոդների համադրումը

Աշխատանքում հետազոտական մեթոդների համադրումն օգտագործելը շատ ավելի բարդ է, քան ձեզ կարող է թվալ առաջին հայացքից Բայց երբեմն լրագրողից պահանջվում է համադրել չափումների ու գնահատման տարբեր միջոցները: ( )

Ուզում եմ ընդգծել նաև, որ յուրաքանչյուր վերլուծական հոդվածի համար կարևոր է որոշել մեթոդը կամ մեթոդների խումբը, որոնք ձեզ հնարավորություն կտան գնահատել նյութը եւ եզրահանգումներ անել

Ճիշտ եզրահանգումներ անել, սա պետք է լինի հրապարակման նպատակը Եվ հաճախ տեղի ունեցողի իմաստն ընթերցողին հասցնելու միակ ճանապարհը սոցիոլոգիայի մեթոդաբանությունն է լինում

## ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՃՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԵԹՈՂՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

*Ա Կոնստանտինովի` լրագրողական հետախնդրությունների գործակալության` «Լրագրողական հետախնդրություն. մեթոդի յայտնությունն եւ ժամանակակից տրակտիկա» գրքից<sup>27</sup>*

Հանրահայտ է գրչի սշակների հակակրանքը մանրամասնելի և անգուսպ հակումը` փոխաբերությունների ու մակդիրների նկատմամբ

27 Агентство журналистских расследований А Константинова Журналистское расследование история метода и современная практика", Санкт-Петербург Издательский дом "Нева", Москва, Изд во "ОЛМА ПРГСС" 2001

Օրինակ, ինչպե՞ս կնկարագրի նորմալ լրագրողը պատվերով սպանության տեսարանը Հսզիվ թե՛ նա խուսափի այնպիսի նախադասություններից, ինչպես, ասենք՝ «Գիշերային լռությունը ճեղքեցին ավտոմատի կրակահերթը եւ ավտոմեքենայի արգելակների ճռինչը Սպիտակ մերսեդեսից ցած ընկած գոհին նայելն անգամ սարսափելի էր» Եվ այսպես նույն ոգով Իսկ հիմա պատկերացրեք, թե՛ ինչպես կարող է նույն իրադարձությունն արտացոլվել ոստիկանական արձանագրության մեջ Անշուշտ կձանձրացնի մասնագիտական տերմինաբանությունը եւ «անկարեւոր» մանրամասների առատությունը

Մակայն սեփական հետաքննություն վարող լրագրողին անհրաժեշտ են նախ եւ առաջ այն մանրամասները, որոնց վրա սովորական իրադրության մեջ թղթակիցները սովորաբար ուշադրություն չեն դարձնում Բայց դրանց մասին տեղեկություններ գտնելը երբեմն ավելի դժվար է լինում, քան պաշտոնատար անձանց անկեղծության մղելը Ըստ համընդհանուր կանոնի եթե իր հետաքննության ընթացքում լրագրողը բախվում է տեղեկատվական շրջափակման, պետք է կարողանա ինքնուրույն ձեռք բերել անհրաժեշտ տեղեկությունները Եվ եթե սկզբում տարանջատված փաստերը ձեզ կարող են ավելորդ թվալ, չենթարկվեն համակարգման, մի վիատվեք Միայն այն դեպքում, երբ գունավոր ապակիների մի ամբողջ հսկա կույտ կունենաք, կկարողանաք դրանցից խճանկար ստանալ

Լրագրողական եւ ոստիկանական հետաքննությունների նախնական փուլերը համընկնում են եւ լրագրողներին, եւ իրավապահ մարմիններին անհրաժեշտ է իրենց հետաքրքրող մարդու կամ կազմակերպության մասին հնարավորինս շատ բազմազան տվյալներ ձեռք բերել։ Ուսումնասիրվում է ամեն ինչ՝ կենսագրությունը, ծանոթների շրջանակը, առևտրական շահերը, տրանսպորտի ի՞նչ միջոց ունի, ինչի՞ց է օգտվում, շարժական կապի ինչպիսի՞ միջոցներ է օգտագործում եւ այլն

Ներկայումս գոյություն ունեն տեղեկատվության երկրի իրավապահ ծառայությունների տրամադրության տակ գտնվող մի քանի առանձնահատուկ աղբյուրներ Լրագրողները այն մարդկանց թվին չեն պատկանում, ում համար մատչելի է տվյալների այդ բազան, սակայն պրպտող միտք ունեցող սարդու համար դժվար չէ մուտք գտնել այնտեղ Եվ եթե անգամ դուք դրան դիմելու կարիք չունեք, ավելորդ չի լինի իմանալ, թե տեղեկատվական ինչ աղբյուրներ ու պաշարներ ունեն այսօր հատուկ ծառայություններն իրենց արամադրության տակ

## Ալո՛, Կենսո՞ն ...

Հերթենք տարածված մի առասպել Հատարակության մի մասը հանուզված է, որ գոյություն ունի ինչ-որ անենատես պետական աչք, որը

հետևում է իր քաղաքացիների բոլոր գործույուրյուններին քաբուն տեսնում է, ականջ է դնում, հետո ստացած այդ բոլոր տվյալները հավաքում և հաստ թղբապանակներում, որտեղ երկրի գրեթե յուրաքանչյուր քաղաքացու դեմ վարկաբեկիչ նյութեր են պահվում Ստիպված ենք հիասթափեցնել ձեզ. երկրի բնակչության ճնշող մեծամասնության դեմ ոչ մի «դոսյե» էլ գոյություն չունի եւ երբեք էլ գոյություն չի ունեցել. նույնիսկ ամենաամբողջատիրական տարիներին

Այդուհանդերձ, յուրաքանչյուր քաղաքում գոյություն ունեն մի քանի տեղական տեղեկատվական կենտրոններ, որոնց ծառայություններից օգտվում են իրավապահ մարմինների աշխատակիցները Բնակավաբար, դրանք բոլորն էլ «փակ» են կողմնակի անձանց համար Դրանցից օգտվելու համար անհրաժեշտ է իմանալ ամեն օր փոփոխվող նշանաբառը (դրանք սովորաբար քաղաքների անուններ են լինում կամ թվերի համադրություն), պատկերացնել տեղեկատվական կենտրոնի օպերատորի հետ խոսակցության ձևը եւ այն, թե ինչ կարգի տեղեկություններ են այնտեղ պահվում Այդ տեղեկությունները ստանալու համար հետաքննող լրագրողը կարող է օգտվել ոստիկանության ծանոթ աշխատակցի օգնությունից (լավ կլինի օպերատիվ բաժանմունքում կամ հերթապահ մասում ծառայող), եւ ցանկալի է, որ տվյալ աշխատակիցը ոչ թե ձեր տեղեկատվության աղբյուրը լինի, այլ նախկին համադասարանցի կամ ընկեր Պետք է հաշվի առնել, որ ինչ-որ մեկին գտնելու մասին ձեր խնդրանքին ի պատասխան ոստիկանության աշխատակիցը թերեւս կտա նրա հասցեն (գրանցման վայրը), տեղեկություններ՝ գրանցված տրանսպորտի առկայության եւ հետախուզության մեջ գտնվելու կամ չգտնվելու մասին Բայց այս տվյալներից բացի տեղեկատվական կենտրոններում շատ այլ, առաջին հայացքից անկարելի թվացող մանրամասներ կարելի է գտնել Ոստի լավ կլինի, որ ոստիկանության աշխատակցին նախապես ասեք, թե հատկապես ինչ է ձեզ անհրաժեշտ

Ոստիկանության աշխատակցի համար օպերատիվ տեղեկությունների առաջին եւ գլխավոր աղբյուրը Հասցեների կենտրոնական բյուրոն է կամ Հասցեների տեղեկատվական բյուրոն Այս տեղեկատվական կենտրոնում տվյալները քարտերի վրա են պահպանվում, ոչ թե ժամանակակից էլեկտրոնային կրիչներում, քանի որ շատ վաղուց են հիմնադրվել

Որանովի՞ց են տվյալները հասնում Հասցեների կենտրոնական բյուրոն Երբ մարդը գրանցվում է այս կամ այն հասցեում կամ փոխում է իր տվյալները (օրինակ անձնագրային), նա երկու բերրիկ է լրացնում՝ մեկնումի եւ ժամանումի Ժամանումի թերթիկն էլ հենց գալիս է Հասցեների կենտրոնական բյուրո Այստեղ որեւէ մարդու մասին տեղեկություններ ստանալու համար ոստիկանության աշխատակիցը պետք է ասի նշանաբառը, իր աշխատանքային հեռախոսահամարը, որոնիդ անձի ա-

ուտել, ազգանունն ու հայրանունը, ծննդյան թիվն ու վայրը Եթե ձեր կողմից փնտրվող մարդու անունը կամ ազգանունը բավականին հազվագյուտ են, ապա օպերատորը ձեզ հետաքրքրող տեղեկությունները կարող է գտնել նաև առանց ծննդյան թվականի եւ վայրի մասին իմանալու (եթե, իհարկե, ցանկանում է, քանի որ ձեռականորեն նա դա պարտավոր չէ անել)

**Հասցեների կենտրոնական բյուրոյում (ՀԿԲ) արձանագրվում են հետևյալ տվյալները.**

1 Անուն, ազգանուն, հայրանուն.

2 Ծննդյան թիվը, օրը, ամիսը.

3 Ծննդյան վայրը

4 Գրանցման վայրը (երբվանից)

5 Նախորդ գրանցման վայրը

6 Աշխատանքի վայրը (Քրեական օրենսգրքի՝ պորտաբուծության համար քրեական պատասխանատվություն սահմանող հոդվածի վերացումից հետո նոր գրանցվողները ոչ միշտ են նշում իրենց աշխատանքի վայրը, իսկ երբեմն էլ այս կետում նշված տվյալները հնացած են լինում, եթե մարդը վաղուց վերագրանցված չի լինում).

7 Անձնագրային տվյալները.

8 Ազգությունը

9 Երեխաները (միայն նրանց, ում ժամանման թերթիկում դրանք նշված են եղել)

10 Ցուցումներ հետախուզության մասին (հետախուզության նախաձեռնողը եւ նրա աշխատանքային հեռախոսահամարը).

11 Տեղեկություններ դատվածության մասին (N 26 ձեռք բերված վերջերս այս ձեռք ՀԿԲ չի ներկայացվում

Եթե որոնվող մարդը փոխել է ազգանունը, օպերատորը կհայտնի նորը Երբեմն մարդիկ փոխում են անունը, հայրանունը, նույնիսկ ծննդյան թվականը, ՀԿԲ-ն տեղեկություններ կտա նաև այս մասին

Նույնիսկ իրավապահ մարմինների աշխատակիցների մեծ մասը ՀԿԲ-ի հնարավորություններն օգտագործում է միայն գրանցումները ճշտելու համար՝ գործնականում անտեսելով առաջին հայացքից երկրորդական թվացող շատ տվյալներ

Մի օրինակ բերենք 1999 թվականի ամռանը Սանկտ-Պետերբուրգի շրջաններից մեկում խոշոր չափի կաշառք ստանալու պահին ձերբակալվել, հետագայում նաև կալանվել է խոշոր մի ինստիտուտի փոխտնօրենը՝ Իրադրության ուսումնասիրության ընթացքում լրագրողը մեղադրյալի փաստաբանից տեղեկություն ստացավ այն մասին, որ գործարարը, որից կաշառք էին վերցրել, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի բաժնի երկու օպերլիազորները եւ նույնիսկ երկու ընթերակականները մտերիմ ծանոթներ են Այդ տեղեկությունը հե-

տաքրքրական, բայց խիստ անորոշ էր

Մենք որոշեցինք սկսել ՀԿԲ հարցում անելուց Այս գործում հանդես եկող բոլոր գործող անձանց մասին ճշգրիտ տեղեկություններ ստանալն այնքան էլ դժվար չէր Հասցեների կենտրոնական բյուրոյի քարտարանում ստուգելով նրանց անունները պարզեցինք մեզ հետաքրքրող անձանց նախկին գրանցման հասցեները Հետաքրքիր պատկեր ստացվեց հինգից չորսը (օպերատիվ մեկ աշխատողից բացի) նախկինում ապրել էին Նովատորների ծառայում հարեւան շենքերում եւ բոլոր չորսն էլ հասակակիցներ Լին Ենթադրեցինք, որ նրանք կարող էին նույն դպրոցում սովորած լինել Ղա պարզելը շատ ավելի հեշտ էր Դպրոցում իմացանք, որ նրանք չորսն էլ նույն դասարանում են սովորել եւ ավարտել են դպրոցը 1987 թվականին. Սա, իհարկե, ամենեւին էլ չի նշանակում, որ ինստիտուտի փոխստնօրենն անմեղ է, եւ օրենքն էլ չի արգելում, որ տուժողն ու ոստիկանության աշխատակիցը միեւնույն դասարանում սովորած լինեն Բայց հետաքննող լրագրողին նման համընկնումները մտածելու տեղիք եւ հետագա բայկերի համար աղիք կտան:

Հասցեների կենտրոնական բյուրոյից բացի մարզային կենտրոններում եւ, մասնավորապես, Սանկտ-Պետերբուրգում գոյություն ունի Ներքին գործերի գլխավոր վարչության տեղեկատվական կենտրոն, որը նույնպես փակ է կողմնակի անձանց համար Այստեղից տեղեկություններ ստանալու համար ոստիկանության աշխատակիցը պետք է ասի նշանաբառը (որը նույնն է բոլոր տեղեկատվական կենտրոնների համար) եւ իր ծառայողական հեռախոսահամարը Ներքին գործերի գլխավոր վարչության տեղեկատվական կենտրոնում տեղեկությունները պահվում են էլեկտրոնային բանկում եւ իրավապահ մարմինների հարցումներին ի պատասխան ուղարկում է դրանք հեռախոսով Բայց այստեղ կարող են նաեւ բանավոր տեղեկություններ տալ Եթե հարցում է արվում հետախուզության մեջ գտնվող անձի մասին, տեղեկատվական կենտրոնի օպերատորը հարցնում է ոստիկանության աշխատակցի ազգանունը եւ ստորաբաժանունը, որտեղ նա ծառայում է, որպեսզի հետագայում իմանան, քե հատկապես ում են պետք եղել այդ տվյալները

**Ներքին գործերի գլխավոր վարչության տեղեկատվական կենտրոնում (ՆԳԳՎ ՏԿ) արձանագրվում են հետևյալ տեղեկությունները**

1. Պատասխանատու բաժանորդի հասցեն, հեռախոսի համարը եւ ազգանունը (եթե հեռախոսը ընդհանուր բնակարանում չէ) Ընդ որում, հասցեն կարող էր իմանալ ըստ հեռախոսահամարի, իսկ հեռախոսահամարը ըստ հասցեի

2 Տեղեկություններ դատվածության մասին Ե՛րբ եւ ո՛ր դատարանում, ո՞ր հողվածով կամ հողվածներով, ի՞նչ ժամանակով է դատապարտված, դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու տարեթիվը, որ-



տե՞ղ է կրել կամ կրում պատիժը, ազատման տարեթիվը, ազատվելուց հետո բնակության վայրը, տեղեկություններ՝ պատժի բնույթի փոփոխությունների մասին

3. Տեղեկություններ տարածաշրջանային եւ դաշնային հետախուզման մասին ո՞վ է նախաձեռնել հետախուզումը, նախաձեռնողի հեռախոսահամարը, քրեական գործի համարը, հետախուզում հայտարարելու մասին գործի համարը, նշում հետախուզվողի կատեգորիայի մասին (հանցագործ, անհետ կորած), քրեական օրենսգրքի հոդվածը, ըստ որի հարուցվել է քրեական գործը, հետախուզում հայտարարելու ամսաթիվը, խափանման միջոցը (Հետաքննողը, ունենալով այս տեղեկությունները, կարող է հարցումով դիմել դատարանին՝ ծանոթանալու քրեական գործին եւ դատավճռին, ինչը կօգնի պարզել նաեւ տվյալ գործին առնչվող այլ մարդկանց ինքնությունը

4 Վարչական իրավախախտումների մասին տեղեկություններ. ո՞ւմ կողմից, ե՞րբ եւ վարչական իրավունքի օրենսգրքի ո՞ր հոդվածով է կազմվել արձանագրությունը, պատժի բնույթը, եթե տվյալներ չկան պատժի մասին, արձանագրությունը ո՞ր մարմնին է ուղարկված քննարկման համար (սա չի վերաբերում փողոցային երթելեկության կանոնների խախտման դեպքերին)։ Այս տեղեկությունները պահվում են տվյալների էլեկտրոնային բազայում 1 տարի Իմանալով դրանց մասին՝ հետաքննողը կարող է խնդրել ոստիկանության ծանոթ աշխատակցին դիմել ոստիկանության այն բաժանմունք, ուր տարել են հետաքրքրող ձեռքակալվածին, ձեռքակալվածների մատյանով ստուգել, թե նրա հետ միասին ուրիշ ում են այդ օրը տարել բաժանմունք, դրանով իսկ պարզել նրա «ընկերներին».

5. Գրանցված զենքի առկայությունը (գազային, հարթափող կամ ակոսափող), արտոնագրի համարը, զենքի համարը, մակնիշը, տրամաչափը, գրանցման ամսաթիվը, ինչ ժամանակով է տրված արտոնագիրը

6 Անձնագրի կորուստը

7 Արտաքինի նկարագրությունը

8 Մականունները.

Մանրակրկիտ կերպով ի մի բերելով այս կարգի ցաքուցրիվ տեղեկությունները հնարավոր է անսպասելի կերպով շատ հետաքրքիր հանընկնումներ գտնել Լրագրողական հետաքննությունների գործակալությունում այսպիսի դեպք Լր եղել Ստուգելով երկու մարդու տվյալները, որոնք իրենց իսկ պնդմամբ միանգամայն անծանոթ են եղել միմյանց, պարզեցինք, որ նրանք շուրջ 7 ամիս միեւնույն ժամանակ եղել են միեւնույն քննչական մեկուսարանում (ՄՅ 45/1 “Кресты”) Բանտում նրանք տարբեր մեղադրական հոդվածներով և իրարից անկախ րրևական գործերով են նստել Դիմելով նույն մեկուսարանի շարքային

պահնորդին պարզեցինք, որ ձերբակալվածներին տեղափոխել են խցից խուց, եւ որ այդ մարդիկ մարտի 11-ից մինչև մայիսի 28-ը գտնվել են նույն խցում Մեր տեղեկացվածությունն այնպես գեղեցիկ նրանց, որ խոստովանեցին իրենց ծանոթ լինելը

Գրանցման եւ տեղեկությունների պահպանման մի հզոր համակարգ էլ կա Ճանապարհային երթևեկության անվտանգության պետական վարչության տեղեկատվական կենտրոնը (ՈԱ ԴՄԵՃ) Այս կենտրոնում նույնպես տեղեկությունները պահվում են տվյալների էլեկտրոնային բազայում Դրանից օգտվելու համար պետք է իմանալ նշումարտուր (միասնական է բոլոր տեղեկատվական կենտրոնների համար) Բանի որ հանցագործությունների մեծ մասն այսօր կատարվում է սովտոտրանսպորտի օգնությամբ, այս բազայից օգտվում են ոչ միայն ճանապարհային երթևեկության անվտանգության պետական վարչությունը, այլ նաեւ քրեական հետախուզությունը, Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունը (ՄԵՅՈ), Կազմակերպված հանցագործության դեմ պայքարի տարածաշրջանային վարչությունը (ՔՄԵՈՈ) եւ այլն

**Ճանապարհային երթևեկության անվտանգության պետական տեսչության տեղեկատվական կենտրոնում (ՌԵԱՊՏ ՏԿ) կարելի է ստանալ ավտոմեքենաների մասին հետևյալ տեղեկությունները.**

1 Պետական գրանցման համարանիշը

2 Ում անունով է ավտոմեքենան գրանցված տիրոջ անուն, ազգանուն, հայրանունը, ծննդյան փվը, բնակության վայրը, տան հեռախոսահամարը կամ ավտոմեքենայի տեր կազմակերպության անունը, իրավաբանական հասցեն եւ հեռախոսի համարը

3 Թողարկման տարեթիվը

4 Հաշվառման եւ հաշվառումից հանելու ժամանակը.

5 Գույնը

6 Ազրեգատների համարները (շարժիչի, թափքի, ամրաշրջանակի (ապսս), ավտոմեքենայի ինքնությունը հաստատող համարը (Այս տվյալների հիման վրա հնարավոր է պարզել, թե ում է մեքենան պատկանել նախկինում ընդհուպ մինչև ամենաառաջին գրանցումը)

7 Մեքենայի տեխնիկական անձնագրի համարը, երբ եւ ում կադրից է տրվել

8 Վարորդական իրավունքի սերիան եւ համարը, ում կադրից եւ երբ է տրվել

Բացի այդ, ճանապարհային երթևեկության անվտանգության պետական վարչության համակարգիչ են մտցվում նաեւ անվեկտրոններ այն մարդկանց մասին, ովքեր երբեւ այդ մեքենայով խախտել են վորոցային երթևեկության կանոնները եւ այն, թե հոտովապես ինչ խախտումներ են դրանք եղել Այս տեղեկությունները կապող են ամենեւին

պիտանի չլինել, եթե խոսքն ազնիվ, օրինապահ քաղաքացիների մասին է Բայց հենց որ խոսքը կազմակերպված հանցագործությանն է վերաբերում, իրավիճակն արմատապես փոխվում է. Մի մեքենան վստահագրով կարող են վարել մի քանի մարդ, որոնք հաճախ կապված են միմյանց հետ ընդհանուր գործերով ու հետաքրքրություններով Վստահագրերի մասին տվյալների բազա գոյություն չունի, ուստի սա միակ միջոցն է արագ տեղեկություններ ստանալ այն մարդկանց մասին, ովքեր իրականում օգտվում են այս կամ այն ավտոմեքենայից

Հիմա պատկերացնենք, որ հանցագործության վայրում արձանագրվել է որոշակի պետական համարանիշով ավտոմեքենա: Համակարգչային կենտրոնի միջոցով ձեզ հաջողվել է ճշտել, թե վերջին ամիսներին ով է փողոցային երթևեկության կանոնները խախտել այս ավտոմեքենայով Մենք կարող ենք ավելի հեռու գնալ՝ պարզելով, թե նույն այդ մարդիկ ուրիշ ի՞նչ ավտոմեքենաներով են երթևեկության կանոններ խախտել, եւ ովքեր են դրանց տերերը Այս սկզբունքով կարող ենք ընդլայնել մեր ունեցած տվյալները՝ պարզելով 30-40 կապ, որոնք արդեն որոշակի պատկեր են ստեղծում

Մի անգամ մենք որոշեցինք վերլուծել, թե կազանյան կազմակերպված հանցավոր խմբերից քանի մարդ է «հյուրախաղերի» գալիս Սանկտ Պետերբուրգ Այս նպատակի համար օգտվեցինք Ճանապարհային երթևեկության անվտանգության պետական վարչության տվյալներից Հարցում արեցինք տեղեկատվական կենտրոն ասելով, որ մեզ հետաքրքրում են 16-րդ տարածաշրջանի պետական համարանիշներով ավտոմեքենաները Պարզվեց, որ նման ավտոմեքենաներ, որոնց վարորդները վերջին ամիսներին խախտել են փողոցային երթևեկության կանոնները, 64-ն են եղել Օգտվելով Կազանի օպերատիվ աշխատողներից մի քանիսի հետ մեր լավ կապերից՝ մենք նրանց փոխանցեցինք խատուներ արած վարորդների անունները՝ խնդրելով հանել սովորական մարդկանց անունները թողնելով կազմակերպված հանցագործ խմբերի անդամներին Շուտով մեր ձեռքում էր Պիտերի տարածքում գործող «կազանցիների» բավականին լիարժեք ցուցակը

Ուսանողական լսարաններում գործնական սեմինարների ժամանակ մեզ հաճախ են հարցնում չե՞նք խախտում, արդյոք, օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքը՝ օգտագործելով այդ տեղեկությունները, եւ ընդհանրապես այս տեղեկությունները կարելի՞ է, արդյոք, պետական գաղտնիք համարել Վերոհիշյալ օրենքն արգելում է ծառայողական տեղեկություններից օգտվել այն մարդկանց, ովքեր դրա համար թույլտվություն չունեն, բայց եթե դուք դրանք ստացել եք մի երրորդ անձից, ոչ ոք ձեզ չի կարող արգելել օգտագործել դրանք Բացի այդ, վերոհիշյալ բոլոր տվյալների բազաները միայն ծառայողական տեղեկություններ են պարունակում, որոնք ոչ մի կապ չունեն պետական գաղտնիքի հետ

**Տեղեկատվական կենտրոնների  
կողմից տրամադրվող տվյալներ**

| <b>ՀԿԲ</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | <b>ԼԳԳՎ ՏԿ</b>                                                                                                                                                                                                                                                                                                                    | <b>ՃԵԱՊՏ ՏԿ</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1 Ազգանունը<br>2 Անունը<br>3 Հայրանունը<br>4 Ծննդյան թիվը,<br>օրը, ամիսը<br>5 Ծննդյան վայրը<br>6 Անձնագրային<br>տվյալները (համարը,<br>սերիան, ե՞րբ եւ ո՞ւմ<br>կողմից է տրվել)<br>7 Աշխատանքի վայրը<br>(եթե նշված է)<br>8 Երեխաները<br>(եթե նշված է)<br>9 Գրանցման վայրը<br>10 Նախորդ<br>գրանցման վայրը<br>11 Ազգությունը<br>12 Հետախուզման<br>առկայությունը | 1 Հեռախոսի համարը<br>ըստ հասցեի եւ<br>հասցեն ըստ<br>հեռախոսի համարի<br>2 Դատվածությունները<br>(ե՞րբ, ո՞ր դատարանի<br>կողմից, ո՞ր հողվածով,<br>ի՞նչ ժամկետով)<br>3 Տեղեկություններ<br>հետախուզման մասին<br>4 Վարչական<br>իրավախախտումները<br>5 Գրանցված զենքի<br>առկայությունը<br>6 Տեղեկություններ<br>փաստաթղթերի<br>կորստի մասին | <i>Տեղեկություններ<br/>ավտոմեքենաների մասին</i><br>1 Պետական գրանցման<br>համարանիշը<br>2 Ում անունով է<br>գրանցված<br>3 Թողարկման տարեթիվը<br>4 Հաշվառման եւ<br>հաշվառումից հանելու<br>ժամանակը<br>5 Գույնը<br>6 Ազրեգատների<br>համարները (շարժիչի,<br>բափքի անրաշրջանակի<br>(աօccս), ավտոմեքենայի<br>ինքնությունը հաստատող<br>համարը<br>7 Սերենայի տեխնիկական<br>անձնագրի համարը<br>8 Վարորդական<br>իրավունքի սերիան եւ<br>համարը, ում կողմից է<br>երբ է տրվել |

**Տվյալների «անլեզալ» բազաներ**

Մանկտ Պետերբուրգի էլեկտրոնային արտադրանքի շուկայում կարելի է ձեռք բերել տվյալների տարատեսակ բազաներ այսպես կոչված «Դենքեր», «Իրավաբանական անձինք», «Պահպանության ձեռնարկություններ», «Հեռախոսային», «Սեփականատերեր» եւ այլն Դրանց մի մասը կազմվել է Կենսաթոշակային հիմնադրամի եւ կոմունալ ծառայությունների տվյալների հիման վրա Դրանցում որոնումը կատարվում է ըստ ազգանվան, հասցեի, հեռախոսի, անձնագրի համարի Այլ բազաներ հնարավորություն են տալիս անհրաժեշտ տեղեկությունները գտնել ըստ կազմակերպության անվան, հարկատուի անհատական համարի, ըստ տնօրենի, գլխավոր հաշվապահի, հիմնադիրների յրավաբանական եւ փաստական հասցեների Պետք է նկատի ունենալ նաեւ, որ հաճախ այս տվյալները հնացած են լինում եւ օգտագործման համար պիտանի են լինում միայն որոշակի սրբագրումից հետո

Տվյալների բազայի համատեքստի ուշադիր ուսումնասիրության արդյունքում հնարավոր է թվացյալ ոչնչից շատ հետաքրքիր «տեղեկատվական խտացումներ» ստանալ Այսպես, օրինակ, Պետերբուրգում 2000 թվականի գարնանը մի խոշոր գործարարի սպանությունից հետո ուսումնասիրեցինք նրա տասնյակ ֆիրմաները, դրանց համահիմնադիրներին եւ նրա կողմից նշանակված ղեկավարներին Մեր ուշադրությունը գրավեց այն փաստը, որ նրա բոլոր ֆիրմաներում Կազան քաղաքի Վախիտովյան շրջանում անձնագիր ստացած մարդիկ էին գրանցված Լրագրողական հետաքննության գործակալության լրագրողներից (АЖУР) մեկը մանրամասնորեն գիտեր Կազանում հանցագործ աշխարհին առնչվող իրադրությունը: Պարզվեց, որ բոլորն էլ նույն խմբավորման անդամներ էին, որի ղեկավարը Խայդեր անունով մի «հեղինակություն» էր Հետազայում արդեն հետազոտություններն անհրաժեշտ հունով գնացին, որի համար խթան հանդիսացան առաջին հայացքից ոչինչ չնշանակող անձնագրային տվյալները

## **Մենք հե՛սֆեր ենք թողնում ամենուր, որսեղ փող ենք վճարում**

Մեկ այլ հարստագույն տեղեկատվական բազա են էլեկտրոնային հաղորդակցության միջոցները Դուք երբեւէ մտածե՞լ եք, թե ինչու են Արեւմուտքում կասկածամտությամբ վերաբերում այն մարդկանց, ովքեր կանխիկ գումարով են վճարումներ անում Բանն այն է, որ այնտեղ օրինավոր մարդիկ գերադասում են օգտվել վարկային քարտերից Իսկ ի՞նչ է նշանակում հանցագործի համար վարկային քարտից օգտվելը Դա նույնն է, թե զանգահարես ոստիկանություն եւ հայտնես քո գտնվելու ճշգրիտ վայրը

Ամբողջ աշխարհի հատուկ ծառայություններն ակտիվորեն օգտվում են բանկերից, փեյջինգային ընկերություններից, հեռախոսային կայաններից եւ բջջային կապի ընկերություններից ստացած տեղեկություններից Վերոհիշյալ կազմակերպություններն, անշուշտ, այդ տեղեկություններն ամենեւին էլ հատուկ ծառայությունների համար չեն պահում, այլ սեփական հաշվապահության Հաշվապահությունը հանցագործի համար ավելի սարսափելի է, քան ցանկացած ոստիկանական տվյալների բազա Յուրաքանչյուր զանգ, զանգահարած յուրաքանչյուր հեռախոսահամար, յուրաքանչյուր միացում ու դրա տեղողությունը մնում են համակարգչի էլեկտրոնային հիշողության մեջ Անհրաժեշտ է սիայն կարողանալ օգտվել այդ տվյալներից

**Բջջային հեռախոսներ.** Հետաքննող լրագրողը չի կարող անձամբ վերցնել իրեն հետաքրքրող մարդու բջջային հեռախոսի միացումների ցանկը, բայց կարող է խնդրել այդ մասին դատախազության ծանոթ աշխատակցին (Բուն խոսակցությունները ընկերությունները չեն ձայնագրում) Ստանալով ձեզ հետաքրքրող բջջային հեռախոսի խոսակցությունների ցանկը, կարելի է հաշվել, թե որ համարներով եւ քանի անգամ են ձեզ հետաքրքրող հեռախոսից զանգահարել Կտեսներ, որ մի համարին զանգահարել են 30 անգամ, մյուսին 25 եւ այլն Այսպիսով կկարողանաք որոշել այն մարդկանց շրջանակը, որոնց հետ ձեզ հետաքրքրող անձը կանոնավորապես շփվում է

**Փեյջերներ:** Փեյջինգային ընկերություններում պահպանվում են ոչ միայն այս կամ այն փեյջերին զանգահարելու փաստը, այլ նաեւ բաժանորդին փոխանցվող հաղորդումները Որոշակի հմտության պարագայում ամենեւին էլ դժվար չէ ստանալ նման հաղորդումների տպագրված էջերը, հատկապես հաշվի առնելով, որ շատ փեյջինգային ընկերություններ իրենց արխիվները պահում են ինտերնետում՝ խնայելով համակարգիչների հիշողությունը Հաճախ հանցագործներն իրենց փեյջինգային հաղորդումները գաղտնագրում են, հատուկ ծածկագիր են մտածում, նախապես պայմանավորվում են ազդանշան-բառերի մասին եւ ստորագրում են կեղծանունով Սակայն այս պարագայում եւս կարելի է ելք գտնել:

Բացառիկ մի դեպք տեղի ունեցավ 2000 թվականի (ույլներին Մեր գործակալությանը դիմեց մի զինվորական, որի դստերն էին առեւանգել Պատմությունը բավականին խճճված էր, իսկ ոստիկանություն դիմել նա կտրականապես հրաժարվում էր. Աղջկա նոթատետրերի և ընկերների լուսանկարների ուսումնասիրությունը ոչինչ չտվեց Հանկարծ հայրը հիշեց, թե ինչպես մի անգամ աղջիկն ասել է, որ իր ծանոթներից մեկը ծիծաղելի մականունով է ստորագրում փեյջերային հաղորդումները՝ Չելիբոբա Ծանոթ խակերը ուրախությունից գլուխը կորցրեց ասելով. «Այդպիսի մականունով ես նրան անպայման կգտնեմ» Համակարգչային հանճարը բավականին չարչարվեց եւ գտավ Չելիբոբույին Ուրախալին այն էր, որ աղջիկն էլ նրա մոտ գտնվեց

**Ավտոմատ հեռախոսների քարտեր:** Շատ քաղաքացիներ, այդ թվում նաեւ հեռախոսային խուլիգանները համոզված են, որ «այս քաղաքում բոլոր խոսակցություններին ականջ են դնում» Նրանց կարծիքով սիակ կապը, որն ազատ է եւ փրկում է հետապնդումից, քաղաքային քարտային ավտոմատ հեռախոսներն են Բայց սա նույնպես հերթական առասպելն է Ավտոմատ հեռախոսային ընկերություններում, ինչպես ամեն

նոր, հաշվապահություն գոյություն ունի Համակարգիչը «հիշում է» ախտոմատ հեռախոսաքարտի համարը, այն հեռախոսի համարը, որից զանգահարել են եւ այն, որին զանգահարել են, զանգի ժամանակը եւ տևողությունը. Եղել է այսպիսի դեպք մի չարագործ ավտոմատ հեռախոսաքարտով զանգահարել է քաղաքացի Ս -ին եւ սպառնացել հաշվեհարդարով Բաղաքացին ճշտորեն նշել է զանգի ժամանակը եւ խնդրել ոստիկանության ծանոթ աշխատակիցներին՝ «Պետերբուրգսկիե տաքսոֆոնի» ՓԲԸ-ի միջոցով պարզել, թե կոնկրետ այդ ժամին ո՞ր հեռախոսաքարտով են զանգահարել իր տան համարով, եւ թե այդ հեռախոսաքարտով ուրիշ ի՞նչ համարների են զանգահարել Վերլուծելով իրենց հետաքրքրող հեռախոսաքարտից արված զանգերի ցուցակը՝ ոստիկանները հեշտությամբ գտել են չարագործին, քանի որ վերջինս նույն հեռախոսաքարտով զանգահարել է նաեւ իր տուն ու աշխատավայր.

Կամ մեկ այլ օրինակ 2000 թվականի փետրվարին հանրախանութի տեր Գ-ին զանգահարել են եւ, ինչպես սովորաբար է լինում, փող պահանջել Չվճարելու պարագայում չարագործը Բենի Կրիկի ոճով տհաճություններ է խոստացել Չանգը ավտոմատ հեռախոսահամարից է եղել, քանի որ հեռախոսահամար որոշող սարքը ցույց է տվել 8-ով սկսվող համար. Լրագրողական հետաքննության գործակալության (АЖУР) լրագրողի մտքով անցավ, որ դա կարող է Գ-ի սեփական դստեր սարքած պատմությունը լինել, որի մասին շատերն էին լսել Մենք առաջարկեցինք Գ-ին ստուգել աղջկա իրերը, երբ նա համալսարան կգնա Դստեր պայուսակում նա գտավ հեռախոսաքարտ Արտագրելով նրա համարը՝ Գ-ն ծանոթ ոստիկանի միջոցով դիմեց հեռախոսային ընկերություն, որտեղից ստացավ այդ քարտից արված բոլոր հեռախոսահամարների ցանկը Կասկած չկար, հենց այդ քարտի միջոցով էին արվել բոլոր սպառնալից հեռախոսազանգերը

**«Էքսպրես» համակարգ.** Յուրաքանչյուր մարդ, որ գնացքի կամ ինքնաթիռի տոմս է գնում, նույնպես հայտնվում է տվյալների համապատասխան բազայում Ոստիկանության աշխատակիցները, իմանալով իրենց հետաքրքրող անձի անձնագրային տվյալները, ազգանունը, անվան ու հայրանվան առաջին տառերը, կարող են հարցում անել եւ «Էքսպրես» համակարգից իմանալ, թե երբ եւ դեպի ուր է նա տոմս գնել

1999 թվականի մայիս Չայրացած «ամենա-ամենա նոր ոուսը» խնդրում է մեզ ճշմարտացի հողված պատրաստել այն մասին, թե ինչպես են մրցակիցներն իր արտադրությունից գողանում փորձարարական սարքերի մասերը եւ ներդնում դրանք Ոստովում իրենց արտադրության մեջ Մենք ստուգեցինք, թե նրա մերձավոր գործընկերներից ով է դեպի Ոստով ինքնաթիռի սոմսեր գնել Հրաշքներ չեն լինում պարզ-

վեց, որ անվտանգության ծառայության պետը շատ հաճախ է մեկնում Ռոստով իր բացակայությունների համար Յուրի Դետոչկինին վայել պատմություններ հորինելով Ռոստով իր հաճախակի գործուղումների պատճառը նա այդպես էլ չկարողացավ բացատրել, կարծում ենք, որ նա հիմա գործազուրկ է

## **ԻՆՉՈ՞Ւ Է ՊԱ ԱՆԻՐԱԺԵՑ**

Մեր գործընկերներից շատերը, կարդալով այս գլուխը, կարող են լուր-վել ուսերը դետեկտիվ ծառայությունների մեթոդները լրագրողների ինչի՞ն են պետք Եվ կսխալվեն Ռուպես օրինակ այն բանի, թե ինչպես կարելի է օգտագործել տեղեկատվության մասնագիտացված աղբյուրները, կբերենք մի հետաքննության օրինակ, երբ մեր գործակալության լրագրողներին հաջողվեց գտնել եւ ձերբակալել վտանգավոր հանցագործին

Այդ պատմությունը սկսվեց 1999 թվականի հոկտեմբերի 20-ին, երբ Սանկտ Պետերբուրգում աղմկալի պատվերով սպանություն տեղի ունեցավ Մոսկովյան պողոտայում մահացու վիրավորվեց քաղաքի օրենսդիր ժողովի պատգամավոր Վիկտոր Մենյունովիչ Նովոսյուլովը՝ Պետերբուրգի ամենաազդեցիկ քաղաքական դեմքերից մեկը Մարդասպանները երկուսն էին մեկին ձերբակալեցին հենց հանցագործության վայրում, իսկ երկրորդին հաջողվեց փախչել եւ անհետ կորավ իրավապահ մարմինների տեսադաշտից Ուղիղ երկու ամիս անց, դեկտեմբերի 20-ին, երկրի բոլոր դաշնային հեռուստատեսությունները հայտնեցին այն մասին, որ Լրագրողական հետաքննության գործակալության (ԱՋԿԿ) աշխատակիցները գտել են Նովոսյուլովի սպանության մեջ մեղադրվող մարդուն եւ հանոզել են հանձնվել իրավապահ մարմիններին Այսպես ավարտվեց ոմն Ալեքսանդր Մալիշի որոնումների վաթսուներորդ ամիսը

Մեր կոլեկտիվի այս աշխատանքը հավանաբար չի կարող լրագրողական հետաքննության քրեստոմատիական օրինակ համարվել Ավելին, մեր գործակալությունում մինչեւ հիմա էլ չեն դադարում վեճերը ույս պատմության որոշ էթիկական կողմերի շուրջ Մի բան ակնհայտ է վերջնական արդյունքի հասնելու համար մենք գործի էինք դրել մեր բոլոր հնարավորությունները, կիրառել էինք աղբյուրների հետ աշխատանքի ամենատարբեր միջոցներ ինչպես բացահայտ, այնպես էլ գույտնի Ընդհանուր առմամբ այս պատմությունը ցույց տվեց, թե որտեղ մեծ է հնարավորությունների շրջանակը լրագրողի համար, եթե նու ծուլ չի



## **ԲԱԺԻՆ 3**

### **ԷԹԻՎԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՈՇԵՐ**

---

Որքան էլ սարքերվեն լրագրողական հեռախոսային ոլորտում սարքեր լրագրողների աշխատանքի մեթոդները, մի հարցում նրանք գրեթե նույն դիրքորոշումն ունեն հեռախոսային անհրաժեշտ է վարել «մաքուր ձեռքերով» իրեն հարգող ոչ մի հեռախոսային լրագրող չի ասի. կարելու է արդյունքն է, իսկ թե ինչ ճանապարհով է այն ձեռք բերվել, երկրորդական հարց է. Սինդրոն գրեթե յուրաքանչյուրը կարող է ասել, որ իր նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք իրեն հնարավորություն կտան աշխատել մաքուր խղճով, քանի որ չի կարելի հեռախոսային մեջ օգտագործել նրանց մեթոդները, ում դեմ ուղղված է այդ հեռախոսայինը. Անուշտ, լրագրողի, առավել եւս՝ հեռախոսային լրագրողի բարոյական դիրքորոշումը մտնողական ուսումնասիրության է անվերջ վեճերի նյութ է դառնում Այն կարող է փոփոխվել՝ կախված երկրից, ավանդույթներից, ժամանակակից իրողություններից, հասարակության անջել կանգնած հիմնախնդիրներից եւ բազում այլ դասձանդներից Այն, ինչ ոմանք համարում են ոչ մաքաբարո քայլ, մյուսների համար միանգամայն ընդունելի է Այն, ինչ ճիշտ է քննարկների համար, չեն ընդունում գործնական աշխատողները եւ այլն Սի խոսքով, իրեն հեռախոսային լրագրողները նվիրելու որոշում ընդունած մարդը լի է նյութ ունի խորհելու Սենք ձեռք ներկայացնում ենք լրագրողական հեռախոսային տեղեկային մասին Դեվիդ Ռենդալի քննարկում, որը նա շարադրել է իր «Ունիվերսալ լրագրող» գրքում, ավելի ճիշտ՝ այդ գրքի գլուխներից մեկի՝ «Լոր տեղեկա»-ի կրճատված սարքերակը՝ ըստ Լ. Չիլիկի-ճայի՝ «Հեռախոսային լրագրողական բարոյական հիմնախնդիրները» հոդվածի, ինչպես նաեւ մասնագիտական տեղեկային առնչվող մի քանի փաստաթուղթ.

---

# ՇԵՏԱՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Լարիսա Չիլիկինա<sup>28</sup>*

Թերթերի միջև դաժան մրցակցությունը կարող է խմբագիրներին մղել գայթակղության. ճնշում գործադրել աշխատակիցների վրա՝ ստիպելով վերջիններիս շրջանցել մասնագիտական էթիկայի սուր անկյունները Լրագրողների միջև մրցակցությունն, անշուշտ, նրանցից ոմանց մղում է այնպիսի արարքների, որոնք նրանք այլ պարագաներում չէին կատարի Իսկ երբ հարցը դրան է հասնում, դուք որպես լրագրող, հնարավորություն ունեք լինել այնքան բարոյական (եթե մասնագիտական էթիկան որպես բարոյական խնդիր դիտարկենք), որքան թույլ է տալիս ձեր թերթը եւ նրա բարեկրթությունը

Ուստի լրագրողական նման բարոյականությունը մասնագիտական վարքի եւ բարեկրթության իշխող կանոնների օրինականացումն է կամ վարքի չափանիշներին հետեւելու գործի հետ ոչ մի առնչություն չունեցող կոչեր, որոնք դատապարտված են անուշադրության Երկու դեպքում էլ դրանցից ոչ մի օգուտ չկա

Դրա համար էլ ավելի լավ է այլ տերմինաբանության դիմել Մեր նպատակն է այնպիսի մեթոդներ մշակել, որոնք կօգնեն մեզ մաքուր խղճով աշխատել Դրանց օգնությամբ մենք մեր հեղինակությունն անարատ կպահենք, քանզի լրագրողի համար ամենագլխավորը հեղինակությունն է «Թող խմբագիրը խլի ձեր կյանքը, ձեր ազատ ժամանակը, բայց թող ձեզ մոտ մնա ձեր հեղինակությունը»:

Ի՞նչ սկզբունքների պիտի դավանի եւ ի՞նչ մեթոդներ կիրառի հետաքննող լրագրողը Ըստ Դեվիդ Ռենդալի, դրանք հետեւյալներն են

## **1. Լրագրողները պետք է ծառայեն միայն իրենց թերթին եւ ընթերցողներին**

Եթե ցանկանում եք բարոզող դառնալ, զբաղվեք գովազդով, քաղաքականությամբ կամ աշխատեք կառավարությունում Լրագրողը թերթից եւ ընթերցողներից բացի ուրիշ ոչ մեկին եւ ոչ մի բանի չպետք է հավատարիմ լինի ոչ մի քաղաքական կուսակցության, տեղեկատվության աղբյուրի, կոմերցիոն կամ ցանկազած այլ շահի, որքան էլ որ նրանք արժանի լինեն դրան Առանց շահերի այդ բախման էլ դժվար է հավասարակշիռ լրագրությամբ զբաղվել

28 Չևտաքննական լրագրության բարոյական խնդիրները տե՛ս <http://www.rejga.rsu.ru>

## 2. Յուրաքանչյուր հողվածի վրա աշխատանքը պետք է ճշմարտության ազնիվ որոնում լինի:

Լրագրողի գլխավոր, աներկբա կանոնը պետք է լինի հետեւյալը՝ յուրաքանչյուր հողված պետք է անկանխակալ փորձ լինի պարզաբանելու, թե ինչ է տեղի ունեցել իրականում, և այդ փորձը պետք է թելադրված լինի այդ ճշմարտությունը տպագրելու վճռականությամբ, որքան էլ որ այն տարբերվի մեր սեփական կարծիքից Այսպիսով, լրագրողն իր աշխատանքում չպետք է կողմնորոշվի որեւէ սուսակետով հակասելով փաստերին, ինչպես նաև չպետք է հողված ձեռնարկի, որի նպատակը նախապես կառուցված տեսության պաշտպանությունն է:

Ոմանք սա կհամարեն ինքնին ակնհայտ, որի մասին անգամ հիշեցնելու կարիք չկա՝ Սակայն ամեն օր դուք կարող եք կարդալ հողվածներ, որոնք կրճատում կամ ձգձգում են փաստերը՝ դրանք որոշակի դրույթների հարմարեցնելու նպատակով՝ Ոչ հեռու անցյալի վատթար օրինակներից մեկը բրիտանական ամենազանգվածային «Սան» («The Sun») օրաթերթն է՝ Թերթի այն ժամանակվա խմբագիրը միայն իրեն հայտնի պատճառների բերումով որոշել էր, որ ՉԻԱՀ-ը միայն համասեռամուլների եւ թմրամուլների հիվանդությունն է՝ Այս տեսակետը հաստատելու համար մի քանի անգամ միտումնավոր կերպով սխալ էին մեկնաբանվել կառավարական վիճակագրական տվյալները՝ Անունանչացող փաստը «Նորմալ սեքսը ձեզ ՉԻԱՀ-ով չի վարակի - ուստի տոնական եզրակացություն» վերնագրով հողվածն էր՝ Հողվածում, ի թիվս այլ բաների, խոսվում էր նաև այն մասին, որ տարասեռ սեռական հարաբերությունների ժամանակ ՉԻԱՀ-ով վարակվելու հավանականությունը «վիճակագրորեն չնչին» է՝ Մնացած ամեն ինչը «համասեռամուլական քարոզչություն է»՝ Հաջորդ օրվա համար ընթերցողներին խոստացել էին «ՉԻԱՀ - դարի խաբեությունը» վերնագրով հողված՝ Հողվածն այնպիսի բուռն արձագանք հարուցեց, որ ի վերջո թերթը ստիպված էր ներում հայցել, որը սակայն տարագրվել էր վերջին 28-րդ էջի ներքեի անկյունում:

Լրագրողական վատ աշխատանքի այս օրինակը, գլխավոր, ամենևին էլ միակ դեպքը չէ, երբ խաբում են ընթերցողներին և, թերևս, նաև վտանգում նրանց կյանքը՝ Նախապես ստեղծված տեսությունները տեղ չունեն լրագրության մեջ՝ Թերթերը պետք է պայքարեն ներդրության դեմ, ոչ թե նման մտածողություն ունեցողներին ընդունեն աշխատանքի:

### 3. Չի կարելի որեւէ բան անպայմանորեն տպագրելու ոչ մի փոխապայմանավորություն կայացնել:

Սա վերաբերում է ոչ միայն կաշառքին կամ նվերներին, այլ նաեւ այս կամ այն առիթով ինչ-որ թեմայի նախապատվություն տալու խոստումներին՝ Փոխապայմանավորությունները երկու խիստ կարեւոր հանգամանք են ենթադրում Առաջինը թաքնված գովազդն է, երբ լրագրողը կամ խմբագրությունը փող են ստանում ֆիրմաների կամ մարդկանց մասին գրելիք նյութերի համար, իսկ հրապարակումը լույս է տեսնում սովորական հոդվածի տեսքով՝ Վերջին տարիներին նման գործունեությունը լայն տարածում է գտել Ռուսաստանում՝ Այստեղ աշխատավարձը շատ ցածր է, ուստի միանգամայն հասկանալի է թաքնված գովազդի համար նյութեր գրելու գայթակղությունը՝ Բայց, դժբախտաբար, որքան էլ ըմբռնումով մոտենանք, դրանք լրագրողական նյութեր չեն՝ Դա գովազդ է, լրագրության հագուստ հագած գովազդային նյութ եւ գովաբանություն՝ Դա կաշառակերության հետ առնչվող խաբեություն է:

Նման գործունեությունը կործանարար եւ վտանգավոր է նաեւ մի շարք այլ նկատառումներով

Նախ՝ այն խախտում է ընթերցողների հետ կնքված գլխավոր պայմանագիրը. Նման հոդվածներն արտաքինից նորմալ, խմբագրական նյութերի տպավորություն են թողնում, մինչդեռ դրանք տպագրվել են այն պատճառով, որ որոշակի գումար մի ձեռքից մյուսն է անցել՝ Երկրորդ՝ նման խաբեությունը կամաց-կամաց խախտում է թերթի նկատմամբ ընթերցողների վստահությունը եւ հավատը, թե վերջինս ազնվորեն ճշմարտություն է որոնում, մինչդեռ նման վստահություն ընթերցողները միշտ պետք է ունենան՝ Երրորդ թաքնված գովազդը թերթին զրկում է անհրաժեշտ օրինական, պաշտոնական գովազդից՝ Չորրորդ՝ այս երեւոյթի լայն տարածումը ստիպում է շատ խմբագիրների կասկածել իրենց աշխատակիցներին ինչ-որ ընկերության մասին գրելու համար կաշառք ստանալու մեջ նույնիսկ այն պարագայում, երբ հոդվածը միանգամայն ազնիվ եւ օրինական է՝ Հինգերորդ՝ խմբագիրներն ու հրատարակիչները, հետեւելով հյուրանոցատերերի օրինակին, որոնք քիչ են վճարում մատուցողներին նկատի ունենալով թեյավճարները, անպայման թաքնված գովազդը պատրվակ կդարձնեն՝ լրագրողներին պետք եղածից պակաս վճարելու համար՝ Վեցերորդ՝ եթե թերթն ընդունում է թաքնված գովազդներ եւ դրա դեմ ոչինչ չունի, այդ դեպքում ինչո՞ւ դրանց վրա չի նշում «գովազդ» կամ հոդվածի վերջում չի գրում, որ ընկերությունը վճարել է դրա համար՝ Պատճառն, անշուշտ, այն է, որ եթե նման բան արվեր, ընկերությունները կդադարեին թաքնված գովազդներ պատվիրել եւ շուտով ստիպված կլինեին վճարել բաց գովազդների համար

Եվ, վերջապես, այս ամենը հավաստում են, որ լրագրողները վաճառում են իրենց ուղեղներն ու ստեղծագործական կարողությունները Էլ ուրիշ ինչի՞ համար նրանք փող կվերցնեն Կսկսեն գովաբանական հոդվածներ գրել քրեական խմբավորումների՞ մասին Չե՞ն գրի նրանց անազնիվ գործերի մասին Սրանից մի քայլ է դեպի այն, երբ կսկսեն նյութեր հավաքել՝ նախապես նպատակ ունենալով փող ստանալ դրանք ոչնչացնելու կամ չիրապարակելու համար Այսինքն՝ մեկ քայլ է մինչեւ նենգաշորթում (շանտաժ)։

- Թաքնված գովազդը հազվադեպ երեսույթ է Արեւմտյան Եվրոպայում Այնտեղ այլ բան է տարածված, այն, ինչը լրագրողներն իրենք «ուրիշի հաշվին» են անվանում, այսինքն անվճար ուղեորություններ սուրիստական ֆիրմաների կողմից, անվճար ճաշեր՝ ռեստորաններում, ներկայացումների անվճար տոմսեր եւ այլն, այն ամենը, ինչն անհրաժեշտ է այդ ռեստորանների կամ ընկերությունների գործունեության մասին թերթում գրելու համար Վտանգն այստեղ այն է, որ լրագրողն իրեն պարտավորված է զգում գովապանական հոդված գրել Անշուշտ, պարտադիր չէ, որ այդպես լինի, եւ ընթերցողների վստահությունը թերթի նկատմամբ կարելի է զրոյի հասցնել՝ հրապարակման մեջ կամ տողատակի նշումով ընթերցողներին տեղյակ պահելով, որ տոմսը (ուղեգիրը, ճաշը) թերթի աշխատակցի համար անվճար է եղել

#### **4. Պե՞տք է, արդյոք, հոդվածները նախապես ներկայացնել խմբագրությունից դուրս ինչ-որ մեկին՝ թույլափության, հավանության կամ արգելքի համար:**

Հրապարակման հերոսին նյութը նախապես ցույց տալն ընդունված է շատ թերթերում Հիմնավորումն այն է, որ դա հնարավորություն է տալիս ուղղել բոլոր փաստական սխալները լրագրողին ազատելով սխալվելու վտանգից Բայց սխալներից ապահովագրվելլւ հենց լրագրողի հոգսը պիտի լինի, ոչ թե նրանցր, ում մասին գրում եք Երբ ինչ-որ մեկին ցույց եք տալիս ձեր ապագա հրապարակումը, մարդը, բնականաբար, կարծում է, որ տեքստը իրեն տվել են հավանության, հետեւաբար նաեւ հնարավոր ուղղումների համար Լրագրողի աշխատանքը ճիշտ, հավաստի նյութ գրելն է, ոչ թե այնպիսին, որն անհրաժեշտ է քննարկել հերոսի հետ

Շատ հաճախ տեղեկությունների աղբյուրը կամ հարցազրուցակիցը այնպիսի բան են ստում լրագրողին, որի համար հետո կարող են փոշմանել Ի՞նչ օգուտ այն լրագրողից, որն իր հարցուփորձով ինչ-որ կարետր տեղեկություններ է ստանում, որոնցից զրուցակիցը հետագայում հրաժարվում է Երբ տեղեկությունների աղբյուրը կամ հարցազրուցակիցը խնդրում են հրապարակումից առաջ կարդալ հոդվածը, մի՞թե կա-

րող եք լրջորեն հավատալ, թե նրանց միակ ցանկությունը ձեզ օգնելն է Ոչ, իհարկե՝ Երբ թերթի հետ կապ չունեցող մեկին տպագրելուց առաջ տալիս եք կարդալու հրապարակումը, դուք նրան հնարավորություն եք ընձեռնում գրաքննությամբ զբաղվել կամ իրադարձությունների մասին հաշվետվությունը փոխելու նպատակով լրագրողի վրա ճնշում գործադրել։ Բացի այդ, նրանք կարող են ենթադրել, որ դա սովորական եւ ճիշտ գործելակերպ է։ Հենց որ լուր տարածվի, թե հնարավոր է հողվածին ծանոթանալ հրապարակումից առաջ, բոլորն էլ կցանկանան այդպես վարվել։

#### **5. Թույլ մի տվեք, որ իշխանությունները ձեր վզին ծրագիր փաթաթեն:**

Մամուլի հետ զրուցող յուրաքանչյուր մարդու նման՝ քաղաքական ու պետական գործիչները նույնպես իրենց սեփական ծրագրերն ունեն Շատ երկրներում այս ոլորտում առավել վտանգավոր են քաղաքական գործիչներն ու հանրության հետ կապերի մասնագետները, որոնք ձգտում են համազել զանգվածային լրատվամիջոցներին իրադարձությունները լուսաբանել իրենց տեսանկյունից։ Այսինքն՝ փորձում են ոչ ակնհայտորեն կառավարել, թելադրել մամուլին ( )

(Այնուհետեւ Դ՝ Ռենդելը մամուլին կառավարելու փորձերի կոնկրետ օրինակներ է բերում - ծ թ )

#### **6. Մեջբերումները պետք է ճշգրիտ լինեն:**

Սա խիստ կարեւոր պայման է, քանի որ մեր կողմից նույնիսկ չնչին թվացող անճշտությունը կարող է փոխել խոսքի շեշտադրումն ու իմաստը։ Սովորաբար լրագրողներն այսպես են արդարանում. «Նա հենց այդ էր ուզում ասել»։ Ենթադրենք, բայց դուք ինչո՞վ եք համոզված՝ Եթե ձեր տեղեկատվության աղբյուրը հարթ չի խոսել, կարող եք նրա խոսքն ուղղակի մեջբերել։ Քաղաքականության ոլորտում աշխատող շատ լրագրողներ մշտապես ուղղում են քաղաքական գործիչների խոսքը։ Այդ լրագրողներն իրենց աշխատանքի մի մասն են համարում այդ քաղաքական գործիչների անհասկանալի փնթփնթոցը, անկապ, քերականորեն անգրագետ նախադասություններն ուղղել-շտկելը եւ կոկիկ, ավարտուն մտքերի վերածելը։ Սա սխալ է։ Նախ՝ դա ճշգրիտ մեջբերում չէ, քանի որ այն, ինչ դուք ներկայացնում եք որպես նրանց խոսք, ամենեւին էլ նրանցը չէ, իսկ դա ազնիվ չէ։ Երկրորդ՝ եթե քաղաքական գործիչը, որի մասին մենք խոսում ենք, անգրագետ հիմար է, որ չի կարողանում հստակ խոսել մայրենի լեզվով, թող ընթերցողներն իմանան այդ մասին, այսպես, ով իմանա, մի օր էլ նրա օգտին կբվեարկեն։

Մեջբերումներ անելու մեկ այլ վտանգավոր մեթոդ էլ կա Ռոշ լրագրողներ գրուցակցին հարց-պնդում են առաջադրում, որին ի պատասխան վերջինս ասում է «այո» կամ գլխով է անում Այնուհետև լրագրողն իր այս պնդումը մտցնում է գրուցակցի խոսքի մեջ ներկայացնելով որպես նրանը Օրինակ «Դուք համամի՞տ եք, որ կառավարությունը իրադրությանը չէր տիրապետում եւ հիմա միայն փորձում է կոծկել տեղի ունեցածը» Երբ գրուցակիցը գլխով է անում, լրագրողն իր հողվածում գրում է «Այնուհետև նա հայտարարեց «Կառավարությունը չէր տիրապետում իրավիճակին եւ հիմա կոծկում է վրիպումները» Այս կարգի ցանկացած երկխոսություն անհրաժեշտ է ներկայացնել ուղիղ խոսքով, որպեսզի պարզ լինի, թե հարցը եւ թե պատասխանը

Մեջբերում հնարելը նույնքան անխտեմ քայլ է, որքան թաց ձեռքերով էլեկտրական վարդակին ձեռք տալը Մակայն որոշ լրագրողներ, թերեւս, կարծում են, որ հրասպարակում պատրաստելիս իրենք իրավունք ունեն մի փոքր «աշխուժացնել» այն՝ մի քանի խոսք ավելացնելով «շարքային մարդու» կողմից Այստեղ ամենամեծ մեղքն անազնվությունը չէ Նախ՝ ոչ մի լրագրող իր երեւակայությամբ չի կարող համեմատվել փողոցի զվարճալի, երգիծական ձայնին Երկրորդ՝ «մետրոյում լսեցի» ոճում մասնագիտացող բոլոր լրագրողները գրեթե երբեք չեն կարողանում լսել նորմալ, մարդկային խոսքը Նման «հնարագետ» լրագրողները թող ֆանտաստիկայով զբաղվեն, կամ, որ շատ ավելի լավ կլինի, ընդհանրապես ոչինչ չգրեն

## **7. Ձեր դիրքը մի չարաշահեք սպառնալիքներ տալու կամ արտոնություններ ստանալու համար:**

Յուրաքանչյուր լրագրող իշխանություն ունի Այն երբեք չի կարելի չարաշահել թե հողվածի վրա աշխատելիս, թե առօրյայում Անձնական վեճերի ժամանակ գրուցակցին հրապարակայնորեն մերկացնելու հնարավորության, վերելներում ունեցած կապերի եւ այլնի մասին ակնարկելը ոչ այլ ինչ է, քան ահաբեկում, ընդ որում ձեզ համար բավականին վտանգավոր Ինչպե՞ս կարող եք հետազայում գրել որեւէ մարդու կամ կազմակերպության մասին, եթե նրանց սպառնացել եք Ինչպե՞ս կարող եք գրել այն «կապերի» մասին, որոնցով սպառնացել եք նրանց Ինչ էլ որ լինի, սպառնալով դուք ձեզ արդեն նրանցից կախման մեջ եք դնում

Չի կարելի նաեւ օգտագործել թերթի բլանկը ինչ-ինչ արտոնություններ կամ անհարգալից վերաբերմունքի դիմաց փոխհատուցում պահանջող նամակներ գրելիս Հասցեատերը կարող է մտածել, որ ձեր թերթը «մաֆիոզ» խմբավորում է, որն իր աշխատակիցների շահերը պաշտպանում է անօրինական մեթոդներով



**8. Մի խոստացեք բարեկամության կամ ինչ-որ ծառայությունների դիմաց չտպագրել հողվածը:**

Երբեմն պատահում է, որ ինչ-որ մեկը խնդրում է ձեզ որոշակի գումարի կամ ծառայությունների դիմաց «մոռանալ» հողվածը կամ դրա մի մասը Ոչ մի դեպքում չի կարելի գիջել նման պահանջներին նույն պատճառով, ինչի համար որ չի կարելի ծառայությունների դիմաց ինչ-որ հողված տպագրել Երբ խոսքը բարեկամներին և վերաբերում, մերժել կարելի է ավելի նրբանկատորեն ու մեղմ, բայց նույնքան արագ ու վճռականորեն

**9. Մի՛ խաբեք մարդկանց նրանցից տեղեկություններ ստանալու նպատակով:**

Լրագրողը պետք է միշտ ազնվորեն ներկայանա Մարդկանցից խորանակությամբ տեղեկություններ ստանալու համար իրեն ուրիշի տեղ դնելը ոչ միայն անազնվություն է, այլ նաեւ՝ խիստ վտանգավոր Մեփական փորձով կարող եք համոզվել, որ մարդիկ շատ ավելի ազատ են խոսում, երբ չզիտեն, որ դուք լրագրող եք կամ որ ձեզ հատկապես հետաքրքրում է իրենց ասածը Իմանալով ձեր ով լինելը նրանք առավել զգոն են դառնում, զգուշորեն ընտրում են իրենց ասելիքը, քանի որ այդ պահից սկսած որոշակի պատասխանատվություն են ստանձնում իրենց խոսքերի ճշգրտության եւ որակի համար Ուստի, եթե չասեք, որ լրագրող եք, նրանք կարող են չավագանցել, ինչը հաճախ է պատահում ոչ պաշտոնական զրույցների ժամանակ Միայն առանձնահատուկ դեպքերում կարելի է իրեն ուրիշի տեղ դնել թաքցնելով ինքնությունը, ինչը թույլատրվում է լրագրողական հետաքննությունների ժամանակ

**10 Տեղեկություններ մի՛ հորինեք եւ մի՛ գունագարդեք այն:**

Տեղեկություններ հորինելն, անշուշտ, նաեւ վտանգավոր գործ է Բայց նույնքան վտանգավոր է փաստերի թեկուզ աննշան խեղաթյուրումը, ճշմարտության գունագարդումը կամ հողվածի հիմնական ուղղվածության հետ չհամընկնող որեւէ մանրամասնի ժամանակավոր «մոռացումը» Այդ պարագայում ձեր հողվածը խաբեություն կլինի Նույնը վերաբերում է նաեւ լուսանկարիչներին եւ անազնիվ «լուսանկարչական ռեպորտաժներին», որտեղ իրադարձությունը կամ իրադրությունն այնպես են բեմադրված, որ ցույց տան իբր իրականում տեղի ունեցածը

Արևմտյան Եվրոպայում մի շարք լուսանկարիչ-լրագրողներ հոչակվել էին նրանով, որ իրենց հետ որոշ «բեմական իրեր» էին տանում պատկերահանումների ժամանակ օգտագործելու նպատակով Այդ կոտրուկուստյա հնարքի էությունն այն էր, որ, ասենք, ձեռքի տակ միշտ

թավչե արջուկ կամ մանկական կոշիկ ունենային Երբ լուսանկարիչը երկաթուղային կամ օդանավի աղետի վայրն էր լուսանկարում, այդ «իրերը» դնում էր բեկորների մեջ լուսանկարն ավելի «զգայացունց» դարձնելու համար Այժմ նման լուսանկարները ծեծված հնարանք են դարձել Բացի այդ, երբ հրապարակվի ուղեորների ցուցակը, հանկարծ կարող է պարզվել, որ նրանց մեջ երեխա ընդհանրապես չի եղել

### **11. Երբեք մի բացահայտեք ձեր տեղեկությունների աղբյուրները.**

Լրագրույնները բազմաթիվ տեղեկություններ են ստանում աղբյուրը երբեք չբացահայտելու պայմանով Տեղեկատվության ձեր աղբյուրների անունները գաղտնի պահելը շատ կարևոր է, հատկապես եթե գործ ունեք արժեքավոր տեղեկությունների արտահոսքից կատաղած իշխանությունների հետ Բացահայտել տեղեկատվության աղբյուրը նշանակում է դրժել խոստումը, իսկ դրանից հետո քչերը կհամարձակվեն լրագրողներին տեղեկություններ տրամադրել Ռոռշ դեպքերում դրա հետևանքով ձեր տեղեկատուն կարող է կորցնել աշխատանքը, բանտ ընկնել կամ շատ ավելի վատ ճակատագրի արժանանալ

### **12. Միշտ ուղղե՛ք ձեր սխալները:**

Լրագրությունը պատմության սեւագրությունն է, առաջին ուրվագիծը, որը ստեղծվում է արտակարգ պայմաններում, հապշտապ, առանց ձեռքի տակ հնարավոր բոլոր տվյալներն ունենալու Ուստի զարմանալի չէ, որ սխալներ այդքան շատ են հանդիպում Թերթերը պետք է հնարավորինս շտապ եւ առանց թերասացությունների ուղղեն այդ սխալները Դա ազնիվ արարք է ընթերցողներն ավելի լավ տեղեկացված կլինեն, շնորհակալ կլինեն ձեզ դրա համար եւ կգնահատեն ձեր անկեղծությունը Երբեք չսխալվող մարդու տեսք ընդունելը հիմարություն է, ոչ մեկին չեք կարող մոլորեցնել դրանով

### **13. Չպետք է անձնական շահ ստանաք ձեր հոդվածներից:**

Դուք կվարկաբեկեք ինքներդ ձեզ, եթե ծառայություններ ընդունեք նրանցից, ում մասին գրում եք կամ անձնական շահ ստանաք հոդված գրելու շնորհիվ

Մյուս խնդիրն էլ մարդկանց անձնական կյանքն է, որին հնարավոր չէ միանշանակ մոտենալ Հսկայական տարբերություն կա հասարակական շահի եւ այն բանի միջեւ, ինչը որպես սենսացիա մատուցելու պարագայում կարող է հետաքրքրել հանրությանը Լրագրողը պետք է խիստ ուժեղ դրդապատճառներ ունենա ինչ-որ մեկի անձնական կյանքի անձեռնմխելիության դեմ ոսնձգությունների անելու համար, եւ պետք

Լ հստակորեն պատկերացնի նման հրապարակման հետեւանքները Երբ մարդը հանրահայտ, հասարակության համար կարելու անձ Ի դառնում, մենք իրավունք ունենք համարել, որ նա հրաժարվում է իր անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի մեծ մասից: Եթե այդ մարդիկ խնդրում են մեզ քվեարկել իրենց օգտին եւ աշխատավարձ վճարել իրենց մեր հարկերից, մենք իրավունք ունենք իմանալ, թե ինչպես են նրանք ապրում: Սակայն այս արդարացումը լրագրողները հաճախ ընտրողաբար են կիրառում նրանք որպես կանոն խնայում են այն մարդկանց անձնական կյանքը, ովքեր իրենց դուր են գալիս եւ ոտնահարում են նրանցը, ում արյանն են ծարավի

Այդ խնդիրն ինքնուրույն լուծելու համար ձեզ անձնական մեծ փորձ է պետք: Այդուհանդերձ, կարծում եմ, որ հանգիստ խղճով հետաքննությանը զբաղվել՝ առանց այդ մասին իշխանություններին հայտնելու, կարելի է միայն երկու դեպքում՝ Նախ՝ եթե ձեր լուսնունդը չի կարող վնաս հասցնել ոչ մի խաղաղ քաղաքացու, երկրորդ՝ եթե ձեր տեղեկություններն անմիջապես հաղորդելու եք ոստիկանությանը: Խաղաղ քաղաքացիների անվտանգության պայմանը վերաբերում է նաեւ այն իրադրություններին, երբ լրագրողներին մեղադրում են աղետների ու ռազմական գոյծուրյությունների ժամանակ սոսկ հանդիսատես լինելու մեջ, երբ նրանք ոչինչ չեն անում վտանգի մեջ գտնվող մարդկանց օգնելու համար

Եվ, որպես վերջաբան, ցանկանում եմ նշել, որ լրագրողի աշխատանքում շատ կարևոր աեղ կունենան բարոյական սկզբունքները, եթե խմբագրության կոլեկտիվում բոլորը հետեւեն դրանց

**Հեւաբննող լրագրողների  
համագործակցության (ՀԼՀ) խարտիան՝  
«Լրագրողական հեւաբննություններ  
վարելու շափանիււների եւ լրագրողների  
փոխօգնության մասին»**

Մենք ներքոստորագրողներս, միավորվում ենք Հետաքննող լրագրողների համագործակցության մեջ հանրության համար հասարակայնորեն կարելու տեղեկատվությունը մատչելի դարձնելու, կաշառակերության եւ պաշտոնյաների կամայականությունների դեմ պայքարելու, տեղեկատվության ստացման ու տարածման ճանապարհին արգելքների հաղթահարելու նպատակով

Հետաքննող լրագրողների համագործակցությունն իր բոլոր ջանքերը ներդնելու է բարձրացնելու համար լրագրողական հետաքննության որակը, օբյեկտիվության մակարդակն ու խորությունը, զարգացնելու այն չափանիշները, որոնց պետք է համապատասխանի անկախ լրագրողական հետաքննությունը

Լրագրողական հետաքննություն ասելով հասկանում ենք լրության մատնվող, հասարակությունից թաքցվող փաստերը ուսումնասիրելու նպատակով լրագրողի՝ ինքնուրույն կամ խմբագրության հանձնարարությամբ ձեռնարկած գործունեությունն ու արդյունքը դրանք հետագայում զանգվածային լրատվության միջոցներում հրապարակելու նպատակով:

Միավորման նպատակներից մեկն էլ պայքարն է լրագրողական հետաքննության անվան տակ միակողմանի եւ չստուգված նյութերի տարածման դեմ, որոնք լրագրողին դարձնում են երկրում տեղի ունեցող դրամաշորթության, կաշառակերության գործընթացների մասնակից

Հետաքննության արդյունքները պետք է ամրապնդվեն հնարավորության սահմաններում լրագրողի կողմից անձամբ ստուգված փաստերով Այդուհանդերձ, լրագրողական հետաքննությունը չի կարող փոխարինել իրավական հետաքննությանն ու դատարանին

Լրագրողը, հենվելով իրեն հայտնի փաստերի վրա, կարող է իշխանության մարմինների առաջ հարց հարուցել այս կամ այն պաշտոնատար անձին պատասխանատվության կանչելու մասին, բայց իրավունք չունի եզրակացություններ անել նրանց մեղավորության մասին Անկախ հետաքննություն վարող լրագրողը գործում է քաղաքացիական հասարակության անունից, իսկ ՁԼՄ-ները հասարակության գործիքներն են Լրագրողն անձամբ պատասխանատու է հրապարակման մեջ օգտագործվող փաստերի հավաստիության եւ լրագրողական հետաքննության եզրահանգումների բարեկիրթ ու քաղաքավարի տոնի համար

Ստորագրելով սույն Խարտիան՝ մենք պատասխանատվություն ենք ստանձնում հետեւելու լրագրողական հետաքննության հետեւյալ չափանիշներին

## **1. Օբյեկտիվություն եւ համակողմանիություն**

Լրագրողական հետաքննությունը պետք է հիմնվի տեղեկատվության բազմակողմանի աղբյուրների վրա Լրագրողական հետաքննության պատրվակ կարող է դառնալ նաեւ շահագրգիռ կողմերից մեկից ստացված տեղեկությունը, եթե այն հասարակական հետաքրքրություն է ներկայացնում Սակայն լրագրողը պարտավոր է տեղեկությունները ստուգել նաեւ այլ աղբյուրների միջոցով, ինչպես նաեւ հաշվի առնել հետաքննության օբյեկտ հանդիսացող անձանց եւ կառույցների տեսակետները

## **2. Էթիկական չափանիշներ.**

Հետաքննությունը չի կարող ի սկզբանե այս կամ այն անձին վարկաբեկելու նպատակ ունենալ Անթույլատրելի է հետաքննության առարկա դարձած անձանց մտերիմների եւ ազգականների մասին վարկաբեկիչ նյութեր հավաքելը, եթե դա ուղղակիորեն կապված չէ հետաքննության թեմայի հետ

Լրագրողական հետաքննության եզրահանգումները, որ առնչվում են այս կամ այն անհատի մերկացման հետ, պետք է վերին աստիճանի բարեկիրք ձեւակերպված լինեն.

## **3. Համագործակցության (կորպորատիվության) սկզբունքը.**

ՀԼՀ-ի գործընկերների օգնությունից կամ նրանց նյութերից օգտվելու պարագայում հրապարակման մեջ ՀԼՀ-ին հղումը պարտադիր է Հրապարակված յուրաքանչյուր հետաքննություն պետք է ներկայացվի ՀԼՀ տվյալների ընդհանուր բանկին.

**Մենք՝ ներքոստորագրողներս, պարտավորվում ենք հետեւել Հետաքննող լրագրողների համագործակցության խարտիայում շարադրված սկզբունքներին ու չափանիշներին: Ճանաչելով հոգաբարձուական խորհրդի իրավասությունները՝ պարտավորվում ենք հետեւել նրա որոշումներին:**

**15 ապրիլի, 2001 թվական  
Սանկտ Պետերբուրգ**

# **«Չանգվածային լրացվության մասին» Ուզբեկսանի օրենսդրություն**

## **Հոդված 9.**

### **Լրագրողական հետաքննություն**

Խմբագրության աշխատակիցն իրավունք ունի ուսումնասիրել եւ լրագրողական հետաքննություն վարել կոնկրետ իրադարձության, հանգամանքի առնչությամբ, որի մասին տեղեկացել է դիմումից կամ այլ աղբյուրներից, կամ աշխատակիցն ինքն է դրա ականատեսը եղել, փաստեր եւ վկայություններ հավաքելիս օգտագործել ձայնագրող եւ տեսագրող սարքեր Լրագրողական հետաքննությունը չպետք է ազդի նախաքննության եւ դատավարության ընթացքի վրա Խմբագրության աշխատակիցն իրավունք ունի կոնկրետ իրադարձության կամ հանգամանքի մասին հրապարակել սեփական կարծիքը, իսկ եթե տվյալ իրադարձության կամ հանգամանքի առնչությամբ նախաքննությունը դեռ չի ավարտվել, լրագրողական ենթադրությունը՝ որպես անձնական կարծիք, կարող է հրապարակել դատարանի որոշումը կամ դատավճիռը ուժի մեջ մտնելուց հետո

## **Հոդված 10.**

### **Տեղեկացվության աղբյուրի չբացահայտումը**

Չանգվածային լրատվամիջոցն իրավունք չունի բացահայտել տեղեկությունների, տվյալների, փաստեր կամ ապացույցների տրամադրող աղբյուրի կամ կեղծանունով ստորագրող հեղինակի անունը առանց նրանց գրավոր համաձայնության Չանգվածային լրատվության միջոցը տեղեկությունների աղբյուրի կամ կեղծանունով ստորագրող հեղինակի խնդրանքով կարող է նրանց անունից մասնակցել դատավարությանը

# ԴԱՏԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԳԻԼԴԻԱ (Ռուսաստան)

## ՀՈՇԱԿԱԳԻՐ

**Դատական ակնարկի եւ ռեպորտաժի,  
ինչպէս նաեւ լրագրողական հետաքննության  
ժանրում ազնիվ աշխատելու մասին**

Սույն Հռչակագիրը կազմվել է մշտապես դատավարական կամ նախադատական (հարուցման կամ նախաքննական փուլում գտնվող) գործեր լուսաբանող մի խումբ լրագրողների կողմից. Փաստաթղթի տակ առաջին ստորագրությունները դրվել են Դատական լրագրողների գիլդիայի հիմնադրման ժամանակ՝ 1997 թվականի մայիսին, Մոսկվայում, այդուհանդերձ մենք Հռչակագիրը բաց ենք թողնում Մենք, ներքոհիշյալ սկզբունքները պաշտպանելու պայմանով, հրավիրում ենք Հռչակագրին միանալ այլ լրագրողների եւս, այդ թվում նաեւ տարածաշրջանային ՉԼՄ-ներից, ովքեր աշխատում են դատական ակնարկի եւ ռեպորտաժի, ինչպէս նաեւ լրագրողական հետաքննության ժանրում (եթե նրանց՝ քրեական-իրավական բնույթի մեղադրանքներ պարունակող հրապարակումները լույս են տեսնում մինչեւ դատավճռի կայացումը)

Մեզ նախ եւ առաջ մտահոգում է լրագրողի մասնագիտական հելի-նակությունը Վերջին շրջանում «սեւացնող», այսինքն՝ մակերեսային, ցածրորակ քրեական ռեպորտաժների ժանրը թերթի էջերից եւ ԼՅԵՐԻԿ դուրս է մղում արդարադատության գաղափարով տոգորված, հանցագործությունների սոցիալական եւ այլ պատճառները վերլուծող որակյալ նյութերը. Այս իրավիճակը չի համապատասխանում ժողովրդավարության, իրավունքի, իրավագիտակցության շահերին, ինչպէս նաեւ ռուսական ՉԼՄ-ների հեռանկարներին

Տեղեկատվական տարածքի այդ հատվածում աշխատող լրագրողների ջանքերի միավորումը թելադրվում է մեր ընդհանուր համքարային շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ, որը գերակայում է մրցակցության միտումների նկատմամբ Մեր հեղինակությունն առաջին հերթին ոչ մասնագիտական (դիվերտանտական) մոտեցումներից պաշտպանության կարիք ունի, որոնք հասարակության աչքում արժեզրկում են դատական լրագրողի մասնագիտությունը Միմյանց համար պատասխանատվություն ստանձնելով մեր սեփական անուններով մենք դատական ակնարկի ու ռեպորտաժի, ինչպէս նաեւ լրագրողական հետաքննության ժանրում ճանաչում ենք ազնիվ աշխատանքի հեռանալ սկզբունքները

1. Մենք ընդունում ենք այն անձանց օրինավորության կանխավարկածը, որոնց անուններն ու արարքները հրապարակային ենք դարձնում Այս կամ այն անձի կամ մարդկանց խմբի օրինավորության կանխավարկածը հերքող զանկացած մեղադրանքի համար ծանրակշիռ փաստարկներ են անհրաժեշտ

2. Մենք սկզբունքորեն ձգտում ենք խուսափել որեւէ մեկի հասցեին մեղադրանքներ հրապարակելուց՝ գերադասելով ոչ թե հաստատել, այլ հարցադրումներ անել մեզ հայտնի փաստերի առնչությամբ Մեղավորության կամ անմեղության մասին դատավճիռներ, այս կամ այն կոնկրետ մարդկանց օգտին վճիռներ ընդունում է միայն դատարանը Այդուհանդերձ, իրավաբանական իմաստով անմեղության կանխավարկածը չի խոչընդոտում լրագրողական հետաքննությանը Մենք դատավճիռ չենք կայացնում, բայց կարող ենք մեղադրանք առաջադրել, եթե դրա համար համոզիչ հիմքեր ունենք

3. Մենք իրավունք ունենք աշխատել «արտահոսած» տեղեկությունների հետ, եթե դրանք ստացել ենք քննչական, հետաքննական մարմիններից կամ պաշտպանության կողմից անձնական կապերի միջոցով Բայց մենք հնարավոր չենք համարում հրապարակել նման տեղեկությունները միակողմանիորեն առանց լրագրողական հետաքննության

4. Այն դեպքերում, երբ լիազորված մարմինների կողմից դեռուս մեղադրանք չի առաջադրվել, մեր քննադատության օբյեկտ կարող են լինել պետական մարմիններում պաշտոններ զբաղող կամ կոմերցիոն կառույցներում ակտիվ դեր խաղացող անձինք Որքան բարձր է կոնկրետ անձի պաշտոնական կամ գույքային դրությունը, այնքան խիստ բառերով իրավունք ունենք գնահատել նրա գործունեությունը: Այդուհանդերձ, մենք հրաժարվում ենք կուպիտ եւ ստորացնող արուահայտություններով քննադատությունից

5. Մեր քննադատության օբյեկտ դարձող յուրաքանչյուր անձ իրավունք ունի շարադրել իր տեսակետը, որպես կանոն, մինչև նյութի հրապարակումը կամ հեռարձակումը Առանձնակի քաղաքական կարեւորության պարագայում, երբ առաջիկա հրապարակման մասին տեղեկության արտահոսքը կարող է հարվածի տակ դնել հողվածի հրապարակումը, մենք մեզ իրավունք ենք վերապահում անուղղակի աղբյուրների միջոցով վերստուգել մեզ հայտնի տեղեկությունները

6. Մենք չենք խուսափում ուղղակի, փաստարկված բանավեճից նրանց հետ, ում քննադատում ենք մեր հրապարակումներում եւ ճանաչում ենք նրանց պաշտպանության իրավունքը ոչ միայն դատական կարգով Մենք պատրաստ ենք վերանայել մեր տեսակետը եւ ներում հայցել, եթե սխալ ենք թույլ տվել



7. Կոնկրետ քրեական գործին հետեւելով մենք իրավունք ունենք ցույց տալ քննչական եւ հետաքննական մարմինների սխալները միայն վուստարկելով մեր խոսքը օրենքի դրույթներով Մենք իրավունք ունենք խոսել այս կամ այն քննչական գործողության ոչ մարդասիրական բնույթի մասին հիմնավորելով այն համընդհանուր բարոյական չափանիշներով

8. Արդարադատության մարմինը, ինչպէս նաեւ նրա գաղափարի մարմնավորումը միայն ու միայն դատարանն է Մենք իրավունք ունենք փաստարկված քննադատել դատական համակարգի թերությունները, դատավորների սխալները կամ արարքները, բայց դա չի կարող խախտել արդարադատության նկատմամբ մեր հարգանքը Գատարանի իրավական ուժ ստացած վճիռների ենթակա են պարտադիր կատարման, թեեւ դա չի խանգարում դրանց քննարկմանը, այդ թվում նաեւ զանգվածային լրատվության միջոցներում

9. Մենք «դատարանի կամ քննչական մարմինների վրա ճնշում» ենք համարում հետաքննության կամ դատավարության ընթացքի այնպիսի մեկնաբանությունը, որը գրագետ չէ, փաստարկներ չի բերում, իրենց տեսակետը ներկայացնելու հնարավորություն չի ընձեռնում երկու կողմերից որեւէ մեկին մեղադրող կողմին կամ պաշտպանությանը Անբույլատրելի է դատավորների, հետաքննություն վարող անձանց կամ գործի մասնակիցների մասին վարկաբեկող տեղեկությունների տարածումը, եթե դրանք չեն առնչվում հրապարակման առարկային

10. Մենք առարկում ենք իրավական թեմայով մեր հրապարակումներին քաղաքական հնչեղություն վերագրելու դեմ

**Ազնիվ աշխատանքի վերոհիշյալ սկզբունքները բարոյական են եւ չեն կարող կիրառվել իրավական նորմերի նմանողությամբ: Հռչակագիրը ստորագրած լրագրողները սլաուսխանատու չեն այս ժանրի բոլոր հրապարակումների համար, այդ թվում եւ նրանց, ովքեր չեն ընդունում մեր սկզբունքները: Մենք չենք ձգտում դատական կամ քննչական տեղեկատվության մենաշնորհի, բայց կարծում ենք, որ լրագրողի մասնագիտական վարպետությունը բնականորեն նրա համար առավելություններ է ստեղծում դատարաններում կամ իրավապահ մարմիններում տեղեկություններ կամ մեկնաբանություններ ստանալիս:**

# ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

առաջին ծանոթություն

## Investigative Journalism

first Introduction

ՀՏԴ 002

ԳՍԴ 76 1

Հ 552

Հ 552 Հետաքննական լրագրություն Հոդվ ժողվ  
-եր Վան Արյան -2002 -96 էջ

Հ  $\frac{4502010000}{854(01)2002}$  2002

ԳՍԴ 76 1

ISBN 99930-76-29-5

© ԵՄԱ 2002թ

Ձավալը 6 սոյ մամուլ Տոյաբանակը 500

---

Տոյագրվել է «Վան Արյան» հրատարակչասանը

ԵՐԵՎԱՆ 2002